

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

83

60

Σ-414


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկիրների—միացե՛ք:

Զ Ր Ա Ս ՈՒ Յ Զ Զ Ա Ն Գ Ը

Գերմանական հեֆյաթ-դրամա

ԳԵՐԶԱՐՏ ՀԱՈՒՊՑՄԱՆԻ



№ 50

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

№ 50

Կ. ՊՈԼԻՍ 1923

25 MAR 2013


10871

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏՊԱՐԱՆ
Մ. ՏԻՐ-ՍՍՀԱԿԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ



1080 - 2000



Գերհարա Հառապոման

Գերհարտ Հաուպտմանը ծնվել է 1862 թ. Շլեզ-վիգի Ուերզալցբրուն գյուղում: Ս.յ. ք միջոցին «Ուերզալցբրուն-ջուրը» դեռ յեվս «ծիյերի խում» եր յեվ գյուղը նոր-նոր եր կուրորտ դառնում: «Կառապան Հենշելի» մեջ հավերժացել է այդ շրջանի Ուերզալցբրունը յեվ ի դեմս պիյեսի գործող անձերից մեկի՝ պանդոկպան Զիլբենհաարի - անմահացել է հեղինակի հայրը:

Գերհարտ Հաուպտմանի նախնիքը—ջուլիակներ են յեղել: Նրա պապը՝ Կարլ Երենֆրիդը, ջուլիակի վորդի, ինքն ել տորրի առջեվ նստած՝ 1815 թ. պատերազմից վերադառնալով, թողնում է այդ անհրապույր արհեստն ու հաստատվում Ուերզալցբրունում, վորպես պանդոկի սպասավոր: Տարիների ընթացքում նա նախ դառնում է նույն պանդոկի կապալառուն, ապա՝ տերը:

Այսպիսով թեյեվ Գերհարտի ծնողները վայելում էյին վորոշ բարեկեցութուն այնու հանդերձ հիշողութունները նախնիքների ծանր աշխատանքի, մշտական կարիքի յեվ գրկանքների մասին տակավին թարմ էյին

աղքատութիւնն ից նոր դուրս եկած ընտանիքում: «Քո զրույցները պապիս մասին, վոր յերիտասարդ հասակում նստելիս ե յեղել տորքի առջեւ — այն ծիւն եր, վորից ծագեց իմ դրաման» — ասում ե Գերհարտ Հաուպտմանը «Ջուհակների» ծոնում, նվիրելով այդ պիյեսը իր հորը՝ Ռոբերտ Հաուպտմանին:

Հայրը հոգում ե մանուկ Գերհարտի դաստիարակութիւնը, քաղքենի միջավայրում ընդունված կարգով: Յերեխային ուղարկում են գյուղական դպրոց: Ուսուցչի կազմակերպած շրջակայութիւնների միջոցին՝ մանուկը սիրով ունկնդրում ե զրույցներին ընության յեւ պոյեզիայի մասին, իսկ չոր ու ցամաք ուսման մեջ — թերանում ե: Ապա՝ նրան ուղարկում են Շլեզվիզի մայրաքաղաքը՝ Բրեսլաու — պատրաստվելու յեւ Ռեյալական Դպրոց մտնելու համար: Սակայն չորս տարի անց՝ Գերհարտը դուրս ե գալիս յերրորդ դասարանից, բերելով հետը միջակ թվանշաններ անգամ իր սիրած առարկաներից՝ բնագիտութիւնից ու գերմաներենից: Իսկ նրա տետրակներն արդեն պարունակում են քնարերգական վոտանավորներ յեւ Անդերսենի վոգով գրած հեքյաթներ:

Այդ միջոցին պանդոկը դուրս ե ընկնում Ռոբերտ Հաուպտմանի ձեռքից յեւ նա, նյութական նեղ պարագաներում, համոզվելով, վոր վորդուց «ուսումնական» դուրս չի գալու, փորձում ե նրան գործնական գյուղատնտես դարձնել: Այդ նպատակով Գերհարտին ուղարկում են իր մորաքրոջ մոտ, Շուբերտի կալվածք:

Այստեղ նա գտնում ե ջերմ ընդունելութիւն, գեղեցիկ ընութիւն, յերգչուհի, դաշնակարուհի: Ինքը Շուբերտը, Ֆոկերատի նախատիպը («Մենակ մարդիկ») բարեսիրտ յեւ բարեպաշտ մեկը, ազատ ժամերն անց

եր կացնում գյուղական քահանայի հետ «հոգեփրկիջ» զրույցներով յեւ առանձին հաճույքով ունկնդրում Հենդելի, Բախի յեւ Բեթհովենի կրոնական յերաժշտութիւնը:

Կրոնական այս տրամադրութիւնն ավելի յե ուժեղանում ընտանիքի փորրիկի՝ Գեորգի մահից հետո: Հաուպտմանի այս շրջանում կրած կրոնական ազդեցութիւնը դրել ե իր կնիքը նրա վողջ արվեստի վրա յեւ գյուղատնտեսության մեջ ձեռք բերած ծանոթութունները յերեւան են յեկել «Ռոգա Բեռնտ» յեւ «Գրիգելզա» պիյեսներում:

Վորովհետեւ Գերհարտը գործնական գյուղատնտես դառնալու նշաններ չի ցույց տալիս, նրա մերձավորների մեջ միտք ե ծագում՝ գուցե նրա ապագան արվեստի՝ մեջ ե: Պատանին աջողակ նկարում ե, թերեւս նրանից նկարիչ կամ քանդակագործ դուրս գա:

Դարձյալ Գերհարտը գնում ե Բրեսլաու, սակայն այս անգամ Գեղարվեստական Դպրոց մտնելու նպատակով:

Դպրոցում Գերհարտը յերկար չի մնում: Նա մասնավոր դասեր ե առնում Ռոբերտ Հերտելի մոտ (Միքայել Կրամերի նախատիպը) յեւ միյաժամանակ շարունակում իր գրական փորձերը, մշակելով գլխավորապես ժողովրդական նյութեր:

Գերհարտ Հաուպտմանն արդեն քսան տարեկան ե, բայց կյանքի ուղին տակաւին անորոշ:

Նա գնում ե Յենա, վորտեղ բնագիտութիւն եր ուսանում նրա միջնակ յեղբայր՝ Կարլը: Նրան աջողվում ե առանց հասունության վկայականի մտնել պատմափիլիսոփայական ֆակուլտետ: Նա լսում ե ֆրանսիական մեծ հեղափոխության պատմութիւնը, ուսումնա-

սիրում ե Կարլ Մարքսի գրվածները, հետեւում հռչակա-
վոր Եռնստ Հեկկելի դասախոսութուններին բնագի-
տութունից, յեւ մասնակցում ե բնագիտական մի ընկե-
րության, վորի անդամներն եյին Կարլ Հաուպտմանն
ու նրա ընկերները, իսկ հերոսը—Գարվինը: Գարվին
յեւ Մարքս, բնագիտական յեւ հասարակագիտական
խնդիրներ—հա ուսանող Հաուպտմանի հետաքրքրու-
թյան գլխավոր առարկաները:

Այստեղ նա մասնակցում ե ուսանողական «Իկա-
րիյա» ընկերությանը, վոր հետո ձերբակալվում ու դատի
յե յենթարկվում: Ծանոթանում ու բարեկամանում ե
Ավգուստ Բեբելին յեւ նրա փեսա՝ Սիմոնին:

Հետեւյալ տարին Հաուպտմանն այցելում ե իր
ավագ յեղբայր Գեորգին, վոր նոր ամուսնացել եր Համ-
բուրգում յեւ այստեղից Միջերկրականով ճանապար-
հորդում ե՝ Մալագա—Մարսել—Նեապոլ—Կապրի—կղզի
յեւ Հռովմ: Այդ ճանապարհորդութունից ստացած
տպավորութունները, բայրոնական վոգով, Հաուպտ-
մանը գրի յե առնում «Պրոմեթեւսի գավակների բախ-
տը» պոյեմում, վորը սակայն լույս տեսնելուն պես ինքը
վոչնչացնում ե:

Մի տարի անց՝ Հաուպտմանը դարձյալ Հռովմում
ե: Այս անգամ նա արդեն արհեստանոց ունի յեւ կա-
տարելագործվում ե քանդակագործական արվեստի մեջ:
Սակայն միյաժամանակ նա խորասուզվում ե դասական
արվեստի յեւ հին պատմության ուսումնասիրության
մեջ:

Այդ շրջանի արդյունք ե նրա բալլադը Գրակխոսի
մասին յեւ դրամատիյական պոյեմը՝ Տիբերիուսի մասին,
վոր 1884 թ. «Գերմանական Թատրոնի» կողմից մերժվեց
յեւ 85թ. մի-յերկու անգամ ներկայացվելուց հետո, ան-
հետացավ բեմից:

85 թվին Հաուպտմանն ամուսնանում ե յեւ ընակ-
վում Բերլինի արվարձաններից մեկում: Նա վիրաբու-
ժական գործողության ե յենթարկում իր կոկորդը,
ծայնը աեղը բերելու համար, վորպեսզի բեմ յեւնի յեւ
վորպես դերասան՝ իր մեջ միյացնի պլաստիկն ու պո-
յեղիյան: Նրա կենսագրող Պաուլ Շլենթերը պատմում
ե, թե ինքը շատ անգամ տեսել ե բեմի վրա «Մենակ-
մարդիկ»-ը, տեսել ե յերեւելի արտիստ Յակոնիի մաս-
նակցությամբ, սակայն յերբեք այնպիսի խորունկ տպա-
վորութուն չի ստացել, ինչպես այն որը, յերբ ինքը հե-
ղինակը կարդաց առաջին անգամ այդ պիլեսը: Այս
վկայութունը ցույց ե տալիս, վոր Հաուպտմանի բեմ
յեղնելու ձգտումը թերեւս անհիմն չի յեղել:

Ինքնավորոնումների հետ զուգընթացաբար շարու-
նակվում ե ինքնակրթության աշխատանքը: Հաուպտ-
մանն զբաղվում ե կանանց շարժումով, գրական նոր
ուղղությամբ, վորի ներկայացուցիչներն եյին՝ Զուլան
ու Տոլստոյը: Տարվում ե Իբսենի ստեղծագործությամբ:

Այստեղ նա ծանոթանում ե Առնո Հոյցին: Այն, ինչ
արդեն հասունացել եր Հաուպտմանի մեջ, այս «հետե-
վողական նատուրալիստ»-ի հետ շփում ունենալու հե-
տեւանքով՝ վերջնական ձեւ ե ընդունում:

1888-ին Հաուպտմանը հանձնում ե տպարան շա-
րելու իր բանաստեղծութունների ժողովածուն:

— Գիշեր, մշուշ, աշնան քամի, թիթեռը ձյունի
վրա, յերգող արտուտը լուսնի շողերի տակ, լույս ու
գարուն, աղոտ սպասումներ, — այսպես ե բնորոշում
Հաուպտմանի քննադատներից մեկը այդ ժողովածուն,
վոր, շարվելուց հետո հեղինակի կարգադրությամբ չի
տպագրվում յեւ լույս չի տեսնում:

Այսպես դժվար ե Հաուպտմանը դուրս գալիս գը-

րական ասպարեզ: Արնո Հոլցը առաջարկում է նրան միյաթին դրամա գրել: Հաուպտմանը մերժում է այդ առաջարկը յեվ մի առ ժամանակ քաշվելով Բերլինից գրում է իր առաջին դրաման «Արեվածագից առաջ»-ը, վոր ամենայն իրավամբ կարող է համարվել նրա անդրանիկ յերկը:

Հարուստ գյուղացի Կրաուզեյի ընտանիքն ապրում է անհասանելի մոտ գտնվող գյուղում զեղև ու շվայտ կյանքով: Ինքը Կրաուզին — շարունակ գինետանը, արբշիռ ու անառակ կյանք է վարում: Նա չի քաշվում տուփալուց դեպի իր հարգատողուստը, նրա յերկրորդ կինը — ապրում է իր փեսացուի հետ: Առաջին կնոջից ունեցած յերկու աղջիկներից մեկը՝ կարիյերիստ ճարտարապետ Հոֆմանի կինը, գինեմուլության ժառանգականությամբ վարակված մի յերեխայն ունենում, վոր շուտով վախճանվում է, իսկ յերկրորդ անգամարդեն մեռած մանուկ է ծնում: Յերկրորդ աղջիկը՝ Հելենը, վորի նկատմամբ շնանում է հարազատ հայրը, քրոջ ամուսինը, վորի փեսացուն ապրում են իր խորթ մոր հետ, հանդիպում է Բերլինից յեկած Լոթին յեվ տարվում նրանով: Լոթը, Հոֆմանի յեվ Կրաուզեյի տանու բժիշկ՝ Շիմմելպֆեննիզի ուսանողական ընկերը, յեկել է այս շրջանը, անխազործ բանվորների վիճակն ուսումնասիրելու նպատակով: Հելենը նույնպես սիրահարվում է Լոթի վրա յեվ ձգտում նրա միջոցով դուրս գալ հեղձուկ միջավայրից: Սակայն Լոթը, առողջ սերունդ արտադրելը համարելով ամուսնության նախապայման, Շիմմելպֆեննիզից տեղեկանալով ընտանիքի հոռի ժառանգականության մասին — հրաժարվում է իր մտադրութունից, Հելենը անձնասպան է լինում:

Ահա «Արեվածագից առաջ»-ի կամ նախնական անունով «Սերմանող»-ի բովանդակությունը:

«Գերմանական դրամայի խեղճությունը — համապատասխանում էր գերման թատերական մշակույթի ստոր վիճակին», ասում է Հաուպտմանի քննադատ-

ներից մեկը ժամանակակից թատրոնի յեվ թատերագրության մասին:

«1890 թ. հոկտեմբերի 20-ը գերման թատրոնի 19-րդ դարի պատմության մեջ արժանահիշատակ որ է», ասում է նույն քննադատը, «Արեվածագից առաջի» առաջին ներկայացման առիթով:

Թատերասերներն ու քննադատները բաժանվում են յերկու անհաշտ բանակի, ինչպես մի դար առաջ Շիլլերի «Ավագակներ»-ի յերեկան գալու առիթով: Վոմանք իրականության անյեղձ պատկերն էյին տեսնում բեմի վրա յեվ պիյեսի վարպետ կերտվածքի մեջ հեղինակի խոշոր տաղանդն ու գերման թատերագրության վերածնությունը, իսկ վոմանք զգվում ու զարմանում թատրոն է սա, թե անառականոց: — Ինչ խիզախություն է մի սկանակի կողմից նման տեսարաններ հանդես բերել: Հինգ գործողության ընթացքում վորքան զգվելի բաներ: Պիյեսի յերկրորդ արարում հարբած գյուղացին փորձում է բռնաբարել իր հարազատ աղջկան, վորի փեսացուն, լուսաբացին դուրս է գալիս նրա խորթ մոր սենյակից գրեթե մերկ: Յերրորդ արարում հղի կնոջ մարդը կամենում է տիրանալ իր քննիին յեվ մենք տեղեկանում ենք վոր ծննդկանը գինեմուլ է, ինչպես յեվ իր առաջին կործանված յերեխան: Հինգերորդ արարում լավում է ծննդկանի ճիշդ հարեկան սենյակից: Յեվ այդ ամենը պիտի կատարվի բեմի վրա:

Այս զարմանքն ու զգվանքը մեզ բնականաբար չի վարակում, քանի վոր ուեսլիզմի կատարյալ հաղթանակը բեմի վրա կատարվեց մեր աչքի առջև, սակայն այդ ամենը ցույց է տալիս թե ինչ խոշոր նշանակություն ունի Գերհարտ Հաուպտմանի պիյեսը գերմաներականության յեվ թատրոնի պատմության մեջ:

Վերջապես փորձվում է Գերհարտ Հաուպտմանի ապագան: Լուծված է մուսաների վեճը՝ փորին պիտի նա ծառայի: Քսանյոթ տարեկան հասակից նա այլևիս նվիրվում է գրականության յեվ բեմին: Նա շարունակում է լրացնել իր կրթության բացերը, հաճախ հանապարհորդում, անմիջական շփման մեջ մտնելով ժողովրդի հետ՝ թարմացնում մանկությունից ձեռք բերած ժողովրդական լեզուն ու վոզին, վոր այնքան ցայտուն կերպով յերեվան են գալիս նրա յերկերում:

Հիշատակության արժանի յե Հաուպտմանի հանապարհորդությունը Շլեզվիզում 1892 թվին, ջուհակների կացությունն ուսումնասիրելու նպատակով, այն պահին, յերբ այդ շրջանը տառապում էր սովից յեվ յերբ թատերագիրն արդեն կրում էր իր հոգում «Ջուլիակների» մտահղացումը: Նույն թվին լույս է տեսնում նրա «Ջուլիակներ»-ը յերկու հրատարակությամբ՝ զուտ Շլեզվիզի բարբառով De Waber յեվ հեղինակի թարգմանությամբ՝ Die Weber: Գերմանիայում պիյեսսի բեմադրությունն արգելվում է յեվ առաջին անգամ Փարիզն է բեմ հանում «Ջուլիակներ»-ը: Հաուպտմանն անցնում է Փարիզ յեվ ապա՝ Սմերիկա: Այս հանապարհորդության հետեվանքը—«Ատլանտ» վեպը յեղավ: Վերջապես 1907 թվին իրականանում է Հաուպտմանի յերազր հանապարհորդել Հունաստան: «Հունական գարուն» արծակ գրվածում, որագրի ձեւով, նա գեղարվեստորեն արտահայտել է իր ապրումները: Այդ բերթվածը առանձին շահեկանություն ունի Հաուպտմանի աշխարհայացքն ըմբռնելու համար:

Գերհարտ Հաուպտմանի գրական զարգացումն արդեն արել է իր լրիվ շրջանը յեվ մենք կարող ենք բնորոշել նրան, վորպես հեղինակի, այն չափով, ինչ չափով ան-

հրաժեշտ է նրա գլուխ գործոցներից մեկը՝ «Ջրասույզ զանգն» ըմբռնելու համար:

*
* *

Գերհարտ Հաուպտմանի գրական վաստակը նրա ծննդյան վաթսուամյակի առիթով լույս աեսած յերկերի ժողովածուի մեջ ամփոփված է 12 սովար հատորներում: Այստեղ կան վոտանավորներ, պոյեմներ, արծակ գրվածներ, դրամատիչական պոյեմներ, կատակերգություններ, պատմական պիյեսներ յեվ վերջապես՝ դրամաներ:

Մեզանում Հաուպտմանի յերկերից հայտնի յեն՝ «Կառապան Հենշելը», «Մենակ մարդիկ», «Ջուլիակները», «Միքայել Կրամերը», «Նորասուզված զանգը» յեվ «Հաննելեն»:

Առաջին յերեք պիյեսները—տպագրված են, վերջին յերեքը—բազմիցս բեմադրված: Այդ դրամաներն էլ յեղել ու մնում են Գերհարտ Հաուպտմանի ստեղծագործության գերագույն նվաճումները:

Մենք արդեն տեսանք թե ինչ տարրերից գոյացավ Գերհարտ Հաուպտմանի հոգեկան նկարագիրը՝ նա ամենասերտ կերպով կապված է ժողովրդի հետ, ունի հակում դեպի կրոնական աշխարհագրացողություն, ծանոթ է արվեստի զանազան ճյուղերին, նրանց հետ կապված շրջանակներին, նրան հատուկ է հետաքրքրություն դեպի պատմական անցյալը յեվ վերջապես՝ նա խորապես ներշնչված է իր ժամանակի իշխող գաղափարներով հասարակագիտության ու բնագիտության բնագավառներում:

Արդեն իսկ նրա յերախայրիքը՝ «Արեվածագից առաջը», հանդես է բերում գյուղը յեվ թեյեվ բանվոր

դասակարգը մնում է բնախ յետեւում, բայց՝ բնախ վրա Լոթի կերպարանքը դնում է նրանց խնդիրը: Հանդես է գալիս ժառանգականութեան հարցը, վորին նվիրված է Իբսենի «Ուրվականները»: Լոթը, վոր հիշատակում է «Իկարիյա» ընկերութունը, շատ կողմերով հեղինակի մտքերի յեւ զգացումների թարգմանն է հանդիսանում:

Հաուպտմանի չորրորդ յերկը՝ — «Ջուլիակները» բնախ է հանում բանվոր դասակարգը:

Մենք արդեն տեսանք, վոր ընտանիքում Հաուպտմանի հողու մեջ ընկել էր այն սերմը, վորից պիտի ծլեր «Ջուլիակները»: Նրա պապը՝ «որական 12 ժամ գործել է յեւ 24 ժամ սոված մնացել»: Տեսանք այն սերտ կապը, վոր նա միշտ պահպանում է իր ծննդավայրի՝ Շլեզվիգի ժողովուրդի հետ:

Շլեզվիգի ջուլիակները գերմանական գրականութեան յեւ մասնավորապես պոլեզիայի մեջ մեծ տեղ են գրավում: Ահագին քանակութեամբ ժողովրդական յերգեր յեւ զանազան բանաստեղծութունների վտանավորներ նկարագրում են նրանց ահավոր վիճակը, նրանց ցավն ու ցասումը: Հիշատակենք Հայնրիխ Հայնեյի հրուշակավոր «Շլեզվիգի ջուլիակները», վորի մեջ ջուլիակները մուայլ, անարցունք հայացքով նստած տորքերի առջեւ հին Գերմանիայի համար սավան են գործում, յեւ մեջը հյուսում յերեքտակ անեծք՝ Աստծուն, թագավորին յեւ կեղծ հայրենիքին: «Ջուլիակների» փրանսերեն թարգմանիչը, «Արյունոտ դաստանի» մասին յերգի փոխարեն «Ջուլիակների» մեջ Հայնրիխ Հայնեյի «Սիլեզիայի Ջուլիակներն» է դրել:

Ջրաղեցրել է Շլեզվիգի ջուլիակների վիճակը նախ յեւ պատմաբաններն ու հասարակագետներին: Տրեյչկեն՝ իր «Գերմանիայի 19 դարի պատմութեան» յեւ

Յիմմերմանը հատուկ աշխատասիրութեան մեջ նկարագրում են նրանց կացութունն ամենամուայլ զույներով:

Պետք է նիշել, վոր Հաուպտմանն իր դրաման պատմական հողի վրա է կառուցել: 1844 թվի ապրետամբութունն է, վոր ներկայանում է պիլեսում: Յեւ Հաուպտմանի քննադատները պնդում են, վոր «Ջուլիակները» հարազատորեն վերաբտադրում են պատմական դեպքերն ու դեմքերը:

Գործարանատերը, գյուղական վտտիկանութունը, նույն իսկ գործող անձանց անունները (Յվանցիգերը դառնում է՝ Դրայսիգեր) — ամեն ինչ այն աստիճան համապատասխանում է պատմական իրադարձութեան, վոր կարծես ժամանակակից թերթերից է քաղված:

Ջուլիակների ապստամբութունը Շլեզվիգում — բանվորական շարժման արշալույսին է տեղի ունենում, յերբ պակասում է գիտակցութունը յեւ յերբ անյել կացութեան մղումով, բանվորները գործում են բնազդով: Անգլիայից այդ միջոցին ցամաք է անցնում մեքանիքական տորքը, սկզբում շոգիյաշարժ, ավելի ուշ՝ յելեքտրաշարժ: Տնայնագործական արդյունագործութունը տեղի յետալիս մեքենայականին: Բանվորի աշխատասիրութունն ու վարպետութունը չեն կարողանում դիմանալ մեքենայի մրցումին: Տնայնագործները կործանվում են: Յեւ բանվորների ծայր աստիճանի հասած հուսահատութունը առաջ է բերում պոթկում, վոչ միայն կապիտալիստների, այլ յեւ մեքենաների դեմ: Նրանք հարձակվում ու հրդեհում են գործարանները, փչացնում ու վոչնչացնում մեքենաները — իրենց ահավոր, հաղթական մրցակիցներին:

Իր զարգացման ա՛յդ փուլի մեջ է բանվոր դասա-

կարգը հանդես գալիս «Ձուլհակներում»: Նրանք ավելի մոտ են գյուղացիներին, քան արդի պրոլետարներին:

Այնու հանդերձ «Ձուլհակների» հասարակական նշանակութունը, բանվորական արդի շարժման մեջ յեվս—հսկայական է: Գերմանացի քննադատները պընդում են, վոր վերջին 200 տարվա ընթացքում վոչ մի յերկ այնպիսի հասարակական յեվ քաղաքական նշանակութուն չի ունեցել, ինչպես «Ձուլհակները»: Ինքը Վիլհելմ II հաճել է իր ժամանակին ասելու՝ «Իհարկե, յես գիտեմ, վոր Գերհարտ Հաուպտմանը մեր ժամանակի ամենանշանավոր գրողն է, սակայն յես յերբեր չեմ ների նրան «Ձուլհակների» համար»: Յեվ «Ձուլհակների» բեմադրության արգելումն ունեցել է իր պատմությունը վոչ միայն Ռուսաստանում, այլևի Գերմանիայում:

Անկախ հեղինակի կամքից, ինչպես Տոլստոյի մի շարք գրվածներ, այնպես էլ «Ձուլհակները» կատարել են խոշոր հեղափոխական գործ: Նույն իսկ անկախ պիյեսի բովանդակութունից: Վորովհետեւ զրամայի հիմքը, ինչպես ինքը Հաուպտմանն է հաճախ ասել—բրիտտոնիական կարեկցության զգացմունքն է: Յերբ վոր Հաուպտմանին մի անգամ ասացին, վոր «Ձուլհակները» բողոքի դրամա յե, նա առարկեց—վոչ, դա կարեկցության դրամա յե:

Արվեստի տեսակետից՝ ջուլհակները — նատուրալիզմի կատարյալ հաղթանակն է բեմի վրա: Իզուր չե եմիլլ Ձուլան առանձին մասնակցութուն ցույց տալիս պիյեսի Փարիզում բեմադրելու պահին:

Նորությունը—պիյեսի նոր հերոսն է, բանվոր դասակարգը: Այն, վոր անհատների փոխարեն առաջին անգամ բեմի վրա հանդես է գալիս մասսան: Գերմա-

նացի քննադատները առանձնապես շեշտում են լեզվի կատարելութունները, հարազատ ժողովրդական վոճը: Այդ պիյեսից հետո, մինչեւ «Ջրասույզ Չանգի» յերեվան գալը, Հաուպտմանին անվանում են՝ «Ձուլհակների հեղինակ»:

Այս գուտ ռեալիստական դրամայից հետո՝ Հաուպտմանը տալիս է սեմիփրիստական պիեսներ, ինչպես «Նեղճ Հայնրիխը», «Հաննելեն» («Հաննելեյի Համբարձումը») յեվ այլն: «Հաննելեյի» մեջ էլ է մարմնացել կարիքն ու զրկանքը, ինչպես «Ձուլհակներում»: Թշվառությունը հասցնում է փոքրիկ աղջկան ինքնասպանության: Նա մեռնում է ապաստանարանում: Յեվ կյանքի մուայլ հովտում նա տեսնում է իր վերջին, յերանելի յերազը յերկնային յերջանկության մասին: «Համաշխարհային գրականության մեջ չկա մի այլ դրամա, վորի մեջ այնքան եշմարտապատում դրսեվորված լիներ մարդու միյամիտ, տանջված հոգու եքստազը» — ասում է Նետտոր Կոուլյարեյսկին: Կրոնական, իհարկե պաշտոնական յեկեղեցու շրջանակներից դուրս կրոնական զգացողությունն ու տրամադրությունը, վոր թագնված է անգամ «Ձուլհակներում», Հաննելեյի մեջ գտնում է իր ամենավաարտահայտությունը:

Յեթե մենք Գերհարտ Հաուպտմանի անգամ ամենանշանավոր պիյեսների վրա գատ-գատ կանգ առնելու լինելինք— դա մեզ շատ հեռու կտաներ: Հիշատակենք բըննադատության մեջ գրեթե բողոքի կողմից ընդունված կարծիքը նրա կատակերգությունների մասին («Բիշոֆսբերգի Կույսերը», «Շլուկ ու Յաուն»), «Կարմիր Աքաղաղը», «Ժսկ Պիպան պարում է», յեվ այլն)—դրանք նույն ժամանակի այլ հեղինակների կատակերգություններից չեն գերազանցում: Ավելի անաջող են նրա պատմական

պիյեսները՝ «Կարլոս Մեծի հարճը», «Ֆլորիյան Գեյյերը», յեւլ այլն: Ընդհակառակը՝ շատ գնահատված են նրա արձակ գրվածները:

Մինչեւ 14 թ. պատերազմը Գերհարտ Հաուպտմանը Ռուսաստանում այնքան սիրված մի գրող էր, վոր նրա նկատմամբ կարելի չէ կրկնել մի քննադատի խոսք, ասված Համսունի նկատմամբ՝ միթե նա ռուս գրող չե՞: Ռուսաստանում քայլ առ քայլ հետեւում եյին Հաուպտմանի գրական գործունեութեանը յուրաքանչյուր նոր յերկ անմիջապես թարգմանում ու բեմադրում հարյուրավոր քաղաքներում զանազան լեզուներով:

Ներկայումս յերբ նոր-նոր ե վերականգնում նախկին կուլտուրական կապը Յեւրոպայի հետ, մեզ հետաքրքրում ե, թե ինչ նոր յերկեր ք ստեղծագործել մեր հեղինակն այս 7—8 տարվա ընթացքում յեւլ ինչ վերաբերմունք ե ունեցել նա դեպի համաշխարհային պատերազմը:

Այդ շրջանում նա լույս ե ընծայել մի շարք գրվածներ՝ «Լողիսեւսի աղեղը», «Ճերմակ Փրկիչը» պիյեսները, «Զուանայի հերետիկոս» ը վեպը, «Աննա» պոյեմը, յեւլ այլն: Սակայն ինչպես ընկ. Լուսնաչարսկին արդարացի նկատում ե, այդ նոր յերկերը վոչ մի նոր տերեւ չեն ավելացնում Հաուպտմանի դափնյա պրսակին, թեյեւ պարունակում են հետաքրքրական գծեր յեւլ յերբեմն նոր շեշտեր:

Պայթում ե պատերազմը: Գերհարտ Հաուպտմանը կուվի դաշտ ե ուղարկում իր չորս զավակներին: Նա «հավատ ե ընծայում», ինչպես ասում ե նրան համակրող մի սոցիալ-դեմոկրատ քննադատ, գերման կառավարութեան լույս ընծայած «փաստաթղթերի ժո-

ղովածույին» յեւլ անվերապահորեն անցնում իր յերկերի կառավարութեան կողմը: Ի պատասխան Ռոման Ռոլանի բաց նամակին—նա իր բարոյական պաշտպանութեան տակ ե առնում գերման զորքի կատարած բարբարոսութեւնները: Այդ վերաբերմունքի համար նա արժանանում ե կայգերի շնորհին՝ յերրորդ աստիճանի Կարմիր Արծվի շքանշանի պատվին կամ անպատվութեան: Ստանում ե նույն կայգերից, վորի շրնորհիւ իր ժամանակին Հաուպտմանին մերժվեց Շիլլերի անվան մրցանակի բաշխումը:

Իհարկե, դուրին ե քաղել Հաուպտմանի գրվածներից բազմաթիւ ֆրագներ, ինչպես անում են նրա հայրենակից քննադատները, յերբեմն ծայր աստիճան արմատական, անգամ հեղափոխական: Սակայն ինչ կարելի չէ ապացուցել դրանով: Գորկու գրվածներում կան շատ ավելի սուր վոճեր ու դարձվածներ, քան ընկ. Լենինի հողվածներում ու ճառերում: Մենք ականատես յեղտնք, թե ինչպես «մինչեւ սոցիալիստական հեղափոխութեւնը» արմատական յեւլ հեղափոխական համբավի տեր մարդիկ, «սոցիալիստական հեղափոխութեան հետեւյալ որը» հարեցին հակահեղափոխական բանակին, ինչպես վողջ կյանքը բանվոր դասակարգի շահերին ծառայած մարդիկ սկսեցին սպասավորել բուրժուազիյային:

Ինչպես Գ. Հաուպտմանը հեղափոխութեւն ե առաջ բերում գրականութեան ու բեմի բնագավառում, այնպես ե նա դիմադիր՝ նույն իսկ հեղափոխական ե քաղաքական ասպարիզում—վոստիկանական կարվա ծառիական Պրուսիայի սահմաններում: Տապալվում ե Վիլհելմյան ռեժիմը յեւլ հանրապետութեան նախագահի ընտրական պայքարի պահին առաջ ե մղում Հաուպտմանի թեկնածութեւնը: Այսքանը հասկանալի յե:

Գ. Հաուպտմանը բարձրացնում ե իր ձայնը հանուն Ռուսաստանի սովյալների ոգնության, դա անբազասելի չե կարեկցության պոետի կողմից (հիշենք ամերիկյան միսիոնարներին), սակայն յեվրոպական այլ խոշոր գրողների խմբի մեջ մենք չենք լսում նրա ձայնը հանուն բանվորա-գյուղացիական իշխանության ճանաչման:

Գերհարտ Հաուպտմանի բաղաբական կերպարանքն անկատար ե, ինչպես մանր-բուրժուական գաղափարախոսությունը: Նա հարազատ զավակ ե այն քաղքենի միջավայրի, վորից նա սերում ե, վորը նա սիրում ե: Ինչպես քաղքենին հասարակագիտորեն միջին տեղն ե բռնում բուրժուայի յեվ պրոլետարի միջեվ, այնպես ել իղեյապես ե նա՝ զանգածույլ Հայնրիխի ասած՝

Խորթ ու հարազատ այստեղ՝ վերելում,
Խորթ ու հարազատ այնտեղ՝ ներքելում:

Բնականաբար դա մազաչափ անգամ չի նսեմացնում Գերհարտ Հաուպտմանի արժանիքը գեղարվեստի բնագավառում յեվ չի նվաստացնում նրա ծառայությունը բանվոր դասակարգին: Նրա ստեղծագործության լավագույն մասը կանցնի պրոլետարական կուլտուրայի զանձարանը յեվ կապրի այնքան ժամանակ, վորրան կենդանի կլինի՝ Արվեստը:

* * *

Անցնենք «Ջրասույզ զանգին»:

Այս պիյեսը գրական տեսակետից Հաուպտմանի ստեղծագործության սինթեզն ե: Մենք արդեն նիշեցինք նատուրալիզմի յեվ սիմվոլիզմի հաջորդականու-

թյունը: Այստեղ յերկուսն ել հանդես են գալիս վարպետորեն իրար հյուսված: Սրանով հեղինակի վորոնումները հանգում են վախճանին: Սա առաջին գործն ե, ասում ե նրա քննադատներից մեկը, վորով Հաուպտմանը բեմի վրա այլեվս հեղափոխություն չի առաջադրում յեվ մեզ մնում ե մաղթել, վոր արվեստի մեջ իր արած նվաճումներն ամրապնդվեն յեվ հեղինակը չկորցնի իր ձեռք բերած կորույն ու կարողությունը:

Այստեղ կա յեվ յերազական, յեվ իրական աշխարհ: Այստեղ ել Հաուպտմանը բուրժուական հեղձուկ հասարակարգի հակառակորդ, ուրիշ, նոր աշխար ձրգտող ե: Յեվ այստեղ ավելի քան այլուր Հաուպտմանն իր անհատական բողոքն ե բարձրացնում, իր, արտիստի բողոքը բուրժուական բազարի դեմ:

Նրա նախընթաց պատմական պիյեսը՝ «Ֆլորիյան Գեյլերը» — տապալվեց: Հեղինակը սաստիկ ճնշված ե: Կասկած ե ծագում նրա մեջ իր ուժերի նկատմամբ: Չե՞ վոր նա այնպիսի խանդաղատանքով աշխատել եր իր պիյեսի վրա: Այնպիսի բարեխճությամբ ուսումնասիրել 16-րդ դարի գյուղացիական ապստամբությունների պատմությունը: Սակայն խնամքով մշակված պատմական մանրամասնությունները բեմից տաղտկալի թվացին ունկնդրողներին:

Իմ վերջին գործը
անաջող յեղավ: Մարդիկ իմ զանգը
գողում գոչյունով սար եյին հանում,
իսկ յես — սըրտարեկ՝ հետեվում եյի...
բայց նա վայր ընկավ, հարյուր վոտնաչափ
ներքեվ գըրոթեց յեվ լեռնալճում
հանգում ե հիմա, Ույժ ու արվեստիս
վերջին արդյունքն ե հանգչում այն լճում:

1080 - 20 00

Յեթե զանգի փոխարեն՝ «Ֆլորիյան Գեյեր» ասելու լինենք, սարի յեվ յեկեղեցու փոխարեն՝ բեմ, Հայնրիխի այս խոսքերը նույնությամբ կվերաբերվեն Հաուպտմանին:

«Ֆլորիյան Գեյերի» տապալման հոռի ազդեցությունը նվազում է շնորհիվ նրան, վոր Հաուպտմանն արժանանում է Գրիլպարցերի անվան մրցանակին «Հաննելեյի» համար յեվ այդ մրցանակը վոչ միայն վարձատրում է մի գլուխ գործոց, ասում է վերոհիշյալ քննադատը, այլ հնարավորություն է տալիս ըստեղծագործելու մի ուրիշ գլուխ գործոց՝ «Ջրասույզ գանգը»:

Այդ պահին Հաուպտմանը բաժանվում է իր ամուսնուց՝ տիկին Մարիից յեվ պսակվում յերիտասարդ ջուլթակահարուհի՝ Մարգարիտ Մարշալի հետ: Հին յեվ նոր սեր: Այդ յերկրնորանքն է ապրում նայել Հայնրիխը: Մի կողմից նրա կինը՝ տիկին Մագդան, միյուս կողմից՝ չքնաղ ու շնորհալի Ռաուտենդելայնը, ներշնչողն ու ոգնականը «նոր յերկ կերտելու» գործում:

Իրականության սահմաններից դուրս գտնվող հեքյաթական աշխարհը առաջին անգամ «Ջրասույզ գանգի» մեջ է յերեվան գալիս: Հաննելեյի յերազը, վորքան ել յերեվակայական լինի — այնու հանդերձ տեղի ունի իրական աշխարհում: Յերեվանում, Աբովյան փողոցով իջնելիս քո աչքի առաջ պայծառ գծագրով Մասիսը նույնքան իրական է, վորքան նույն Մասսի մտապատկերը, յերբ այն ծագում է քո մեջ, դիցուք Պոլսում, Փերայից անցնելու պահին: Հաննելեն կարող է յերեվակայել ամենամանիրական բաներ, սակայն նրա յերեվակայությունը, վորպես հոգեկան ապրում—անպայման իրական է: Իսկ «Ջրասույզ գանգը»—

հեքյաթ է, յեվ ինչպես գերմանացի քննադատներն են շեշտում՝ գերմանական հեքյաթ: Ֆրանսիացի մի գրականագետ ասում է՝ թող հեղինակը ներողամիտ լինի, վոր մեզանում պակաս խանդավառությամբ ընդունվեց «Ջրասույզ գանգը»: Դա նրանից է, վոր պիչեսը զուտ ազգային վոգով է ներշնչված:

Յեվ իրավ՝ սկսած զանգի սյուժեյից մինչևի հին գերմանական դիցաբանության ու ժողովրդական հավատալիքների յեվ սնահավատությունների մանրամասները վոչ միայն ժողովրդական են այլևի զուտ գերմանական: Լեոնադաշտը—գերմանական դիցաբանական յեվ հեքյաթային աշխարհի Ոլիմպն է: Ելֆեր, Ռյուբեցագել, Տիկին Հոլլա, ալբ, դրուտ, Վելանդ, թըզուկներ, անտառի կինարման ու տղամարդ վոգիներ, Բալդեր, Ֆրեյյեր, Լոկի—այս ամենը մարմին առած ապրում են բեմի վրա: Ապա՝ Նիկելմանը, ջրերի արքան, Անտառի Ֆավլը—անտառի վավաշոտ վոգին յեվ Պառավ Վիտտիխենը — հեթանոս աշխարհի, մայր-հողի մարմնացումը: Վերջապես կյանքն ու յերազը, հեքյաթականն ու իրականն իրար շաղկապող դյուլթական Ռաուտենդելայնը—կամ յեթե գրական գերմաներեն հնչելու լինենք՝ Ռոտե Ենխենը, Կարմիր Աննան: Հեքյաթի այս առասպելական-դիցաբանական դեմքերը ավելի ցայտուն են գծագրված, քան իրական անձերը՝ տիկին Մագդան, Պաստորը, Ուսուցիչը, Վարսավիրան: Պետք է ասել, վոր վերջին յերեք կերպարանքները միյաժամանակ սիմբոլներ են՝ Պաստորը—պաշտոնական յեկեղեցու մարմնացումն է, ուսուցիչը — պաշտոնական գիտության յեվ Վարսավիրան—հասարակ քաղքենի-մահկանացույի:

Պիչեսի առանցքը—Հայնրիխն է: Նա հովտից լեռ է քաշվում մի նոր յերկ հրաշակերտելու համար: Սա

Իրաննի «Բրանտի» իրահատուկ տեսակն է: Մինչդեռ Բրանտը քարոզող է, սա ստեղծագործող է: Բրանտը քարոյախոս է, իսկ սա—յերագող, փորի անուրջը կրոնական գունավորում ունի: Նրա ամենակարեւոր մենախոսությունը յերրորդ արարում, փոր պատասխանում է պատորի հարցին՝ թե ով է վարձատրելու նրա գործը,—մի մշուշապատ բողոք է ու սլացում՝ բողոք հին կարգերի դեմ յեւ սլացում դեպի անորոշ, երտատիր պատկերներով զծագրվող աշխարհ:

Արվեստագետն է խոսում՝ Հայերիխի բերնով՝

Ել հովիտներին
 սպասավորելը ինձ չի՝ հրապուրում:
 Հովտի հանգիստը առաջվա նըման,
 յեռուն արյունըս չի մեղմացնում:
 Այն որից ի վեր, յերբ յես վեր յելա
 բարձունքը, հոգիս վերիյր է ձգտում,
 ծով-մշուշից վե՛ր, պայծառ վոլորտում
 թափառելու յեւ վերին կորովից
 գործեր կերտելու:

Քննադատներից փոմանք Հայերիխին ըմբռնում են փորպես Նիչչելի գերմարդի մարմնացման փորձ: Հնարավոր է գերմարդը:

Ինքը Հայերիխը այսպես է պատասխանում Վիտտիխների հարցին, արդյոք ո՞վ է ինքը:

Այո՛, պառավ, ո՞վ եմ յես,
 ինքս ել հաճախ նույնն եմ հարցրել յերկնքից—
 ո՞վ եմ յես, ո՞վ—բայց պատասխան չի յեղել:
 Ով ել լինեմ հըսկա, թըզուկ, կիսաստված թե անասուն—
 մի բան անշուշտ հաստատ է՝
 յես արեւի ինձ դձ, ընկեցիկ մանուկն եմ,
 անճար, անոգ, ցավերի ծո՞վ, տենչում եմ տո՛ւն, մորըս մոտ.
 վառ կարոտով նա իր վոսկի թեվերս
 դեպի ինձ է տարածում, բայց չի հասնում:

Յեւ թփերի ճատը հաստատում է Հայերիխի ինքնաբնորոշումը:

Ղըվաթով ես, շի՛տակ զարմ ես—զբըստ ա,
 ամա ե՛լի քու ղըվաթը չբայտեց:
 Կո՛չված էյիր, բայց ընտրյալ չե՛յիր դու:

Իր վողջ եյությամբ քաղքենի միջավայրի մեջ մերված Հայերիխը բախվում է նույն այդ միջավայրի հետ, Դոկտոր Շտոկմանի պես: Անհատ յեւ հասարակություն: Անհատը ընդդեմ հասարակության: Յեւ այս բաղխումը վերջանում է անհատի կործանումով՝ վոջ թե այն պատճառով, փոր հասարակությունը ավելի զորեղ է, ինչպես Դոկտոր Շտոկմանի մեջ, այլ փորով հետեւ անհատի մեջ պակասում է ույժը:

Դերս նե՛րք՝վ քա՛շող բեռը ծանդըր ա,

ասում է Հայերիխին Վիտտիխներ:

Հայերիխը—քաղքենի յե, բայց ամենաազնիվը, նրբազգածը, ամենաշնորհալին այդ միջավայրում: Նրա արժանիքները—ամբողջապես պատկանում են իրեն, պակասությունները—միջավայրին:

—Դուք հեքյաթի մեջ մութ տեղե՛ք եք զանում,— հարցնում է Կոնրադ Հենիշը, յեւ պատասխանում—
 իհարկե: Այն թզուկների դերը, փորոնք ոգնում են վարպետին զանգ ծուլելու պահին, պատմությունը յերեք լնձորի մասին, վեր ուտում է Ռաուտենդելայնը, պատմությունը յերեք բաժակի մասին, փորոնցից խմում է նրա սիրեկանը—այդ ամենը ինձ համար ել կիսախավարի մեջ է մնում: Սակայն յեկի հաղորդած խընդությունը դա չի խլում ինձնից: Մի ուրիշ քննադատ «Ջրասույզ զանգի» մութ սիմբոլները համեմատում է թիթեռնիկների հետ: Լավ է, ասում է նա չվերլուծել

այդ սիմբոլները, վորովհետեւ նրանք կկորցնեն իրենց գեղեցկութունը ճիշտ այնպես, ինչպես թիթեռնիկի թեւերը, յետե մենք բռնելու լինենք նրանց, մոտից դիտելու համար: Մենք ականա կարբենք փոշին յեւ ամբողջ գեղեցկութունը կը կորչի:

Նույնը կասեյինք մենք:

Թիթե մենք մեր հեքյաթների մեջ ամեն ինչ պարզել ու հասկանում ենք: Մեր բոլոր հեքյաթները վերջանում են նրանով, վոր յերկնքից յերեք խնձոր ե ընկնում, մեկը՝ պատմողին, մեկը՝ լսողին, մեկն ել՝ չգիտեմ ում: Այդ ի՞նչ խնձորներ են: Կամ ինչո՞ւ խնձորներ յեւ վոչ տանձեր: Զգիտենք: Սակայն նման անմեկնելի սիմբոլներից հեքյաթի գեղեցկութունը չի պակասում:

«Ջրասույզ զանգի» բեմադրության առիթով 1896 թ. սեզոնում պատմում են, վոր հասարակութունը «բան չհասկնալով» պիյեսից, ամեն անգամ դուրս եր գալիս թատրոնից հիյացած: Դիմակահանդես չեր լինում Քերիխում, վորտեղ յերեվան չգար Ռաուտենդելայնը: Փողոցներում բերնե բերան եր անցել Նիկեյմանի բրեկեկեքսը, Արիստոֆանի «Գորտերի» հարություն առած այդ բացականչութունը: Յեւ մեզ թվում ե, վոր գերման հասարակութունը բաղեց այդ հեքյաթից այն լավը, վոր նա պարունակում ե: Նույնը կարելի յե ասել նայել մեր հասարակության մասին, բանի վոր 1922 թ. կարճատեւ թատրոնական սեզոնում «Ջրասույզ զանգը» Յերեվանի Պետական Թատրոնում ունեցավ 14 ներկայացում:

*
*
*

Մտում ե մի բանի խոսք յեւս ասել թարգմանության մասին:

Հին վեճ կա թարգմանչական արվեստի մասին: Վումանք ասում են՝

—Թարգմանել մի յերկ—միյեմլույն ե թե վորեվ բույս մի յերկրից փոխադրել այլ յերկիր: Ինչպես ուրիշ յերկրում, հողի, ջրի յեւ արեւի ա՛յլ պայմաններում փոխադրված բույսը փոխում ե իր կերպարանքը, գույնը, մեծութունը, պտուղի համը, այնպես ել թարգմանված յերկը պիտի հարմարի այդ լեզվի ժողովուրդի հասկացողություններին, արտայայտչական համապատասխան յեղանակներին: Գերմանացիք այդպես ել ասում են՝ թարգմանել—գերմանացիել, verdeutschten

Իսկ մյուսները պնդում են՝

—Թարգմանել—կնշանակի այլ լեզվով ներկայացրել բնագրի պատճենը: Ընթերցողը պիտի կարդալուց զգա, վոր գործ ունի ոտար միջավայրի յերկի հետ: Թարգմանութունը վոչ թե պիտի մի լեզվի ըմբռնումներն ու զգացումները ուրիշ լեզվով ա՛յլ պատկերներով արտահայտի, թեկուզ համապատասխան, թեկուզ համանման, այլ պահպանի տեղական գունավորումը—couleur locale-ը, այն բնորոշն ու ոտարոտին, վոր հատուկ ե բնագրին:

Յեթե ընթերցողը վերցնելու լինի «Поэзия Армении» հայտնի ժողովածուն, կնկատի, վոր Վյաչեսլավ Իվանովը թարգմանում ե, ղեկավարվելով առաջին սկզբունքով: Յեւ Յով. Թումանյանը, կարդալով իր «Անուշ»-ը ուսերեն նույնքան ճիշտ, վորքան յեւ սրամիտ ե բնորոշել Վ. Իվանովի թարգմանչական արվեստը, ասելով՝

—Դա իմ Անուշն է, միշտ շնկ ե դուրս յեկել:

Մինչդեռ Վ. Բրյուսովը միշտ աշխատում է վերարտադրել բնագիրը, ամեն կերպ պահպանելով նրա բնորոշ յեվ ուսան թերեւս խորթ վոճերն ու դարձվածները՝ «շան», «յար», «փրանգի ատլաս», «շամամ» յեվ այլն, յեվ այլն:

Մենք կողմնակից լինելով առաջին տեսակետին, դեկավարվել ենք յերկրորդ սկզբունքով հետեւյալ պատճառներով:

Մի բանաստեղծական յերկ ուրիշ լեզվով վերստեղծելու համար, անհրաժեշտ է վոչ միշտ յտես լինել, այլեւ հեղինակի չափ տաղանդավոր պոետ:

Բնավ պոետ լինելու հավակնութիւն չունենալով՝ մենք աշխատել ենք «Ջրասույզ զանգ»-ը թարգմանել հայերեն, ձգտելով մեր կարչաց չափ ներկայացնել հայ ընթերցողին այդ հերթաթ-դրամայի նշգրիտ լուսանկարը:

Վիտտիխենի Շլեզվիգի խրթին բարբառը մենք արտահայտել ենք Փամբակի զավառաբարբառով, վոր թերեւս ամենահարազատն է մեր գրական լեզվին յեվ, Յով. Թումանյանի ժողովրդականացրած Կոռու շատ նման բարբառի շնկհիւ, ամենաըմբռնելին:

Պահպանել ենք չափը: Սա իհարկէ պայմանական է, քանի վոր գերմանական վոտանավորը շեշտային է, իսկ մերը—վանկային:

Աշխատել ենք չափի փոփոխութիւնները ցույց տված լինել նայել հայերեն:

Այն տողերն ու տեղերը, վորոնք հանգավոր են բնագրում, մենք յեվս արտահայտել ենք հանգերով, ամենայն խնամքով պահպանելով հանգերի դասավորութիւնը:

Այս ամենից հետո, մենք կարող ենք հաստատել,

վոր մեր թարգմանութիւնը ավելի հարազատ է բնագրին, քան մեր ձեռքի տակ գտնվող հինգ ուսերեն թարգմանութիւնները, վորոնցից մեկը՝ Կ. Բալմոնտի, մյուսը՝ Ս. Գորոդեցկու գրչին է պատկանում:

Թերեւս ավելի մոտ է բնագրին ֆրանսերեն թարգմանութիւնը, սակայն այն պատճառով, վոր թարգմանութիւնն արձակ է արված: Թարգմանիչը լոկ տեղ-տեղ, պատահական կտորներ է վերածել վոտանավորի: Այս կտորների նկատմամբ մենք կարող ենք պնդել, վոր հայերենը շատ ավելի մոտ ու հարազատ է բնագրին:

Լույս ընծայելով «Ջրասույզ զանգի» ներկա թարգմանութիւնը, Հ. Ս. Խ. Հ. Պետհրատը կամեցել է նիշել Գերհարտ Հաուպտմանի ծննդյան վաթսուներկու, վոր 1922 թ. նոյեմբերի 15-ին Գերմանիայում տոնվեց, վորպես խոշոր ազգային տոն յեվ արձագանգտով բոլոր կուլտուրական յերկիրներում:

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

1913 FEBRUARY 22

ՋՐԱՍՈՒՅՁ ԶԱՆԳԸ

Հայնրիխ՝ զանգ ծուլող՝

Մագդա՝ նրա կինը՝

Սրանց զավակները՝

Պաստոր՝

Ուսուցիչ՝

Վարսավիրա՝

Պառավ-Վիտտիխեն՝

Ռաուտենդելայն՝ ելֆային եյակ՝

Նիկելման՝ տարերային վոզի՝

Անտառի ֆալս՝ անտառի ֆալսային վոզի՝

Ելֆեր՝

Ծառերի տղամարդ ու կինարմատ
վոզիներ՝

Հերյաթի գործողութիւնը կատարվում է լեռներում յեվ սարի
ստորոտում գտնվող գյուղում՝

Handwritten text at the top of the left page.

Handwritten text in the middle section of the left page.

Handwritten text at the bottom of the left page, including a signature.

Faint handwritten text at the top of the right page.

Faint handwritten text in the upper middle section of the right page.

Handwritten title or section header in the center of the right page.

Main body of handwritten text in the middle section of the right page.

Handwritten text at the bottom of the right page.

Սոսափող յեղեմնիներով շրջապատված լեռնադաշտ: Խորքում,
ձախ թեւի վրա, մի կախ ընկած ժայռի տակ կիսով չափ թագ-
նըված՝ փոքրիկ խրճիթ:

Առաջնաբեմում, աջ թեւի վրա, անտառի յեզրին, մի հին շրճոր,
վորի բլրածեւ բերնին նստած է Ռ ա ու տ ե ն դ ե լ ա յ ն ր :

Ռ Ա Ռ Ի Տ Ե Ն Դ Ե Լ Ա Յ Ն

Կես-մանուկ, կես-կույս, մի ելֆային՝ եյակ է: Նա սանրում է իր
թալ դեղձան մազերը, դեն բշեյով անդադար իրեն խանգարող
մեղվին:

Վո՞րտեղից ես գալիս, մեղո՛ւ վոսկեծայն,
ա՛յ դու փոքրիկ շաքարասեր-մոմագործ:
Դո՛ւ, արեւի թըռչնակ, ինձ մի՛ խանգարիր:
Գընա՛, թո՛ղ վոր գիսակներըս շուտ անեմ
տատիս վոսկի սանրով սանրեմ-հեռանամ,
թէ չե նա ինձ կը նախատի տուն գալուց:
Ասում եմ, թո՛ղ ի՞նչ ես այստեղ վորոնում:
Յեա ծաղիկ չեմ յեւ իմ շուրթը կոկոն չե:
Անցիր գետը, ա՛յ, անտառի յեզերքում
կա ասպուրակ, գարնան ծաղիկ, մանիշակ, —
սուզվիր նրբանց մեջն ու ծրծիր լիուլի:

¹ Ելֆ — գերմանական դիցաբանություն մեջ — բնության ստեղծա-
գործ ուժի մարմնացումն է, Աստծու յեւ մարդու միջեւ միջին տեղ բըռ-
նող մի եյակ: Ելֆերը ոժտված են լինում այնպիսի ունակություններով
ու գիտելիքներով, վորոնցից դուրի է մարդս: Պայծառ ելֆերը, վորոնց
Թվին պատկանում է Ռաուտենդելայնը, սիրում են յերգ ու պար, լավ են
վերաբերվում դեպի մարդիկ, յերբեմն ոգնում են նրանց, յերբեմն՝ կա-
տակներ անում, իսկ չարանալու դեպքում՝ վրիժառու յեն լինում: Պայծառ
ելֆը միշտ գեղեցիկ է լինում, Թեյեվ կարճահասակ, Ծան. Թարգ.

Ճամբա ընկիր տո՛ւնդ, բուրգըդ սըլացիր:
 Լո՛ւրջ. հո գիտես, դու մեր աչքից ընկել ես.
 քեզ ատում ե պառավ տատը թըփերի,
 վորովհետեւ մեղրամոմ ես պատրաստում,
 յեկեղեցուն կերոններ ես պարգևւում:

Այս ի՞նչ կարգ ե. հասկացա՞ր դու ինձ թե վոչ:
 Հե՛յ, հին ծըխան, պառավ տատի կըտուրից
 մի ծուխ արա՛, բուլա՛-բուլա՛ թող իջնի,
 թող գա այստեղ, քըշի-տանի այս չարին:
 Գի՛շ-քի՛շ: Իջի՛ր թանձրը ու սեվ ծուխ ու մուխ:
 Հա՛յդե, կորի՛ր: Մեղուն դեն ե թռչում:

Այսպե՛ս:

Ռաուտենդելը պահ մի անարգել սանրվում ե, ապա կռանալով
 ջրհորի վրա՝ կանչում.

Հե՛յ-հա՛յ, Նի՛կելման:

Վոր չի լըսում—յես իմ հյուսած յերգն ասեմ:
 Վո՞րտեղից եմ—չը գիտեմ,
 ո՞ւր եմ գընում—չը գիտեմ.
 արդյոք փոքրիկ թըփերի
 մի թըռչնակ եմ, թե փերի:
 Ի՛նչ անուշ բույր ե ծորում...
 Ծաղիկները մեր ձորում
 ո՞վ ե ծընում, որորում,
 գիտե՞ մեկը իր որում:
 Մերթ այրվում եմ սըրտատոչոր մի հույզով.
 Գանաչեյի՛ հայրըս ով ե, մայրըս ով,
 իմանայի՛ հայրըս ուր ե, մայրըս ուր.—
 բայց չեմ կարող, իմ կարոտը գուր ե, գուր:
 Բախտիս հըլու՛ մի ամոքիչ հույս ունեմ,
 ինչ ել լինի՛ անտառի սեզ ու վոսկիհեր կույսն եմ:

Նորից ջրհորից կանչելով.

Ծեր-Նի՛կելման, դե վեր արի: Թըփերի
 պառավ տատը գընացել է յեղեմի կոն հավաքի:
 Մենակ՝ այնքա՛ն ծանձրացա վո՛ր. արի մի բան
 պատմիր ինձ:

Արի սիրտըս հիմա շահիր, իսկ յես դըրա փոխարեն
 հենց այս գիշեր, կամաց-կամաց, աղվեսի պես սողալով՝
 ներս կը մըտնեմ մարդու մեկի հավաքունը յեվ մի չաղ
 սեվ աքաղաղ կը թըռցընեմ քեզ համար:

Հե՛յ, Նի՛կելման: Ըհր՛—կը գա՛. ջուրը վըշշաց ու թըշշաց
 յեվ արծաթի մանրիկ գընդեր յերես յեւան հատակից:
 Հիմա վարից նա կը հըրի, մի հարվածով կը ջարդի
 սեվ-քոլորակ այն հայելին, վորի մեջ
 յես ինքըս ինձ ուրախ-ուրախ փոզումում եմ ներքեվից:

Իր ցուրի հետ խաղալով.

Ե՛յ, ջըրհորի սիրուն աղջիկ, բարեվ քեզ:
 Անունդ ի՞նչ ե. Ռաուտենդելա՞յն: Ասում ես—
 կույսերի մեջ դու ամենից սիրո՞ւնն ես:
 Ասում ես—հա՞: Ռաուտենդելայն— ի՛նձ կասեն:
 Ի՞նչ ես խոսում, ի՛նչ ես մատով ցույց տալիս
 մատաղ կըրծքիդ այդ յերկվորյակ բույրերին:
 Մեկ ի՛նձ նայիր. Ֆուեյայի չափ սիրուն չե՞մ,
 տե՛ս, մազերըս արեգակի շողից չե՞ն,
 յեվ ջըրի մեջ նըրանց շուքը չի՞ փայլում,
 վորպես վոսկու մի կաս-կարմիր հըրագո՞ւնդ:
 Ցույց ես տալիս քո վարսերի ցա՞նցը-բոց
 յեվ ձըգում ես, վոր ձո՞ւկ քըռնես խոր ջըրից:
 Ա՛յ դու անխե՛լք, վա՛յ անշընո՛րք, դե քըռնիր
 նետած քարըս—պարծենալըդ վերջանա՛:

Տեսա՞ր—իսկ յես, առաջվա պես, կամ ու կամ:
Հե՛յ, Նի՛կելման, յեկ ժամանակ անցընենք:
Ահա յեկ նա:

Նիկելմանը մինչեւ կրծքի ներքին մասը բարձրանում է ջրհորից՝
Հա՛-հա՛-հա՛-հա՛, սիրուն չե՛ս:
Փըշաքաղ է լինում մարդ քեզ կանչելիս,
Իսկ տեսնելուց—սարսափահար ե լինում:

ՆԻԿԵԼՄԱՆ

Ձրերի ծերուկն է. Նրա մազերի մեջ յեղեգներ են խճճված,
վրայից ջուր ե կաթկթում: Նա ծովաշան պես ֆսֆսում է, յեվ,
մինչեւ գերեկվա լուսին ընտելանալը, շարունակ աչքերը բաց ու
խուփ ե անում:

Բրե՛կեկեկե՛քս:

ՌԱՌՏԵՆԴԵԼԱՅՆ

Նիկելմանի հանգն անելով

Բրե՛կեկեկե՛քս, ինչպե՞ս չե՛:

Դու մոտալուտ գարնան շրջի՞ց գարմազար:
Պատի ծակում հետին մողեսն այդ գիտե,
Իմացել ե ամեն վոջիլ ու խրլուրդ,
գետի փարեղ, լորամարզի, ջրբաղվես,
յուրաքանչյուր ճանն ու ցողուն, սըրընչակ,
բազեն—ողում ու նապաստակն—առվույտում,
ինչո՞ւ միայն դո՞ւ չըգիտես:

ՆԻԿԵԼՄԱՆ

Նեղացած փնչացնում ե.

Բրե՛կեկե՛քս:

ՌԱՌՏԵՆԴԵԼԱՅՆ

Քընո՞վ եղար, դու չե՞ս տեսնում, չե՞ս լըսում:

ՆԻԿԵԼՄԱՆ

Բրե՛կեկեկե՛քս, դու աներես մի՛ լինիր,
հասկանո՞ւմ ես: Դու կապիկ ես: Ա՛յ կապիկ,
ա՛յ դու կիվկիվ, նոր կըճեպից դուրս եկած,
ծըվի դեղնուց, ձըվի կըճեպ—ի՛սկ յեվ ի՛սկ:
Քե՛զ եմ ասում կի՛ո՛ւաքս, կի՛ո՛ւաքս, կվա՛կ, կվա՛կ, կվա՛կ:

ՌԱՌՏԵՆԴԵԼԱՅՆ

Պարոն քեռին նեղանո՞ւմ ե— շա՛տ բարի,
յես ել կերթամ յեվ կը հիւսեմ շարջպարի:
Այնքա՛ն սիրուն ընկեր գրտենե՛մ սարերում.
չե՞ վոր յես ել յե՛վ ջահել եմ, յե՛վ սիրուն:

Հըծվանքով.

Ուխա՛յ—ուխա՛յ, ի՛նչ ջահել եմ ու սիրուն:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Տակավին անտես.

Յա՛լլա—ոհո՛:

ՌԱՌՏԵՆԴԵԼԱՅՆ

Արի՛, Ֆալիսիկ, պար բըռնենք:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Այժի վոտներով, այժի միրուքով, յեղջուրավոր անտառային վոզի
յե: Ծիծաղաշարժ վոստյունով նա վար ե ցատկում լիոճաղաշար:
Յես պարելու շընորք չունեմ, սակայն թըռիչք գործելում
ինձ սըրընթաց այժաբաղն ել չի հասնի:

Չե՛ս հավանում: Տուփանքով՝

Գիտեմ նայել ա՛յլ թըրիչք:

արի՛, մի որ, անտառ գընանք, ջրահարս,
փըջակավոր մի ուռենի կա այնտեղ,
փորին յերբեք ջրի կարկաչ կամ հավականչ չի հասնում:
Ա՛յ, քեզ համար այնտեղ յես մի հըրա՛շք-սըրինգ կըտ-
րեմ վո՛ր,
իր նըվագով, ձեզ բոլորիդ պար ածի:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Յետ մղվելով Ֆամսից.

Ո՛վ-յե՛ս, քեզ հե՛տ:
Կծու՛

Բըրդակալած այծոտանի, քո զագիր
մամուտ-մանրիկ տիկինների մոտ վագիր:
Յես մաքուր եմ, բարակիրան, գեղադեմ,
կորի՛ր յեվ տար քո այծի գեշ հոտը դեն:
Դու քո սիրած այծ-կիների հետ խաղա՛,
փոր լի որը բերում են մի՛ երեխա,
խակ կերակի՛ յերեք-յերեք. դա կանի՛
իննը ցատկող, փոքր ու փընթի կենդանի:
Հա՛-հա՛-հա՛-հա՛. Հարստ ծիծաղով ներս ե մտնում խրճիթը:

ՆԻԿԵԼՄԱՆ

Բրե՛կեկեկեքս, չար աղջիկ,
ա՛յ, շանթահար լինես, հա՛:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Աղջկան բռնելու անաջող փորձ անելուց հետո՝ հիմա կանգնած ե,
Ա՛յ, մի սըրան ձեռք քըջե՛ս:
Մի կարճ չիբուխ ե հանում յեվ սմբակին ծծումբային լուցկի քը-
սելով՝ վառում ու կպցնում ե չիբուխը:

— ԼՈՒՐՅԱՆ —

ՆԻԿԵԼՄԱՆ

Ի՞նչ կա, ի՞նչ չըկա տանըդ:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Կա՛նք, ելի՛:

Այստեղ, ներքելում՝ տաքուկ ե, ախորժ,
խակ այնտեղ, մեզ մոտ՝ քամին է սաստիկ շաչում, շառաչում,
ուռած ամպերն են լեռնաշըղթայի վըրայով սողում
յեվ, վորպես մըրգած թաց ըսպունգ, ջուր ե, վոր թա-
փում են ցած,
շա՛տ անհամ բան ե:

ՆԻԿԵԼՄԱՆ

Հեա՞՞, ուրի՞շ ինչ

նորություն ունես:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Առաջին անգամ

յես յերեկ կերա նորելուկ շաղգամ:
Իսկ այս առավոտ տընից դուրս եկա
յեվ մացառուտով մըտա մոտակա
թավուտ անտառը: Տեսնեմ՝ գողերը —
անիծվի՛ն նըրանք, — հողը բըրբըրում,
միջի քարերը հանում են, կըրում,
քարուքանդ անում լերան կողերը:
Շուտով կը շինեն նոր մատուռ ու վանք —
զըզվա՛նք ու զըզվա՛նք —
տանել չեմ կարող, յերբ զանգ ե վոռնում:

ՆԻԿԵԼՄԱՆ

Մեկ ել, վոր հացին քեմոն են խառնում:

ԱՆՏԱՌԻ ՖԱՂՆ

Մեզ ախ ու վախից ի՞նչ ոգուտ կա վո՛ր .
համբերություն և այստեղ հարկաւոր :

Անդունդի բերնին տեսնեմ՝ խիստ արագ
վեր և սըլանում նորաշեն իրը . —

Վողջը՝ սըրածայր — սյունը, տանիքը . —

մի խաչապըսակ հըսկա աշտարա՛կ :

Թե ֆամլը լիներ դանդաղկոտ ու ծույլ .

մեզ արդեն գագան գանգը նորածույլ .

իր բարձրը տեղից կախված ապահո՛ւմ

տանջում կը լիներ գողանջի ահով :

Սակայն իմ ջանքով՝ ջըրահեղձ, անգոր,

լըճի մեջ ահա ընկած և այսոր :

Այդ հո կատակ չեր, այլ դիվային խա՛ղ . . .

Լեռնային բարձրը խոտի մեջ, խաղաղ .

մի սոճու թիկնած, յես յեկեղեցուն

աչք եյի ածում, բերանըս բըցում

ավելուկ ու լուռ ծամու՛մ եյի դեռ .

յանկարձ իմ դիմաց մի կարմիր թիթեռ .

թառում և քարին, ահից Թըրթըռում,

կարծես մի կասլույտ ծաղկի թերթերում

հյուժ լիներ քաղում : Կանչեցի մոտըս

փոքրիկ ելֆիկին . —

Թառեց իմ ձեռքին

յեվ դուրս եկավ իմ բարի ծանոթըս :

Նա ավել-պակաս խոսում եր անհամ,

լալիս եր, վողջում՝

լըճում որն ի բուն

գորտերն են հղբում . . .

Այդ տեսակ բաներ, յես ի՞նչ իմանամ :

Լալիս եր խեղճը խենթ ու խելագար . —

մըխիթարեցի, վորբան հընար կար, —
ապա թե մի մեծ

նորություն պատմեց :

«Ինչ վոր մի բան են հովտից հեվինեվ
կանչ ու մըտրակով քարշ տալիս վերել :

Յերկաթից թափած ու խուփը վըրան
մի խընոցի յե, թե նըման մի բան .

բայց ահուելի յե : Մամուռում անանց
յերկյուղ և տիրել մարդկանց ու կանանց :

Ուզում են կախեն — կանցնե՞ր բո մտքից —
նոր յեկեղեցու բուրգի բարձունքից .

որն ի բուն զարկեն երկաթ-լեզվակով
վոր մեզ չարչարեն ահեղ նըվագով » :

Հըմ, ասացի յես, այդպե՞ս են գործում :
Այստեղ՝ ելֆիկը ցած թըռավ գետին,

իսկ յես — միյացա այժերի հոտին

յև՛վ յերեք այժի կուրծ կաթով լեցուն
մի լա՛վ ձըձեցի, այնպես վոր արդեն

յեվ վոչ մի կաթիլ նրանցից չըկըթեն :
Ապա՝ գետափին յես դիրք բըռնեցի,

տեսնեմ՝ զալիս են նըրանք — մարդ ու ծի :
Իսկոյն պահվում եմ քար ու թըփերում,

ինքըս ինձ զըսպում ու լուռ համբերում :
Թոկի սարքի մեջ ութ վատույժ ծիյեր

հազիվ-հազ եյին քայլում դեպի վեր :
Դողդոզ ծունկերով, կողերը ուռած,

մեկ կանգ են առնում, մեկ դիմում առաջ :
Տեսա, վոր դըրանք այդ ծանրը բեռը

փայտաշէն սայլով չեն հանի լեռը —
ինչպես վայել և ֆամլին՝ մարդ ու ծի

յես անմիջապես վիհը ճամբեցի,
 վոր զուր չըտըքնեն: Հենց վոր ջարդեցի
 անիվ, շառավիղ, — զանգը կորացած՝
 յերերաց, իսկ յես նորից մի հարված
 հասցըրի յեվ այդ գըլուխ-գործոցը
 գըլխիվայր ընկավ ձորի խոր ծոցը:
 Դու տես թե հիմա ինչպե՞ս ե ցատկում,
 թըռչում ու հընչում ձորի հատակում,
 գընդակի նըման դիպում քարեքար,
 արծազանք ծընում, գընգում խելագար...
 Ներքեվում՝ ջուրը իր պաղ ծոցը բաց՝
 կուլ տըվեց նըրան, հըռփա՛ց ու ծըփա՛ց...
 Թո՛ղ հանգըստանա այնտեղ հիմա նա
 յեվ ընդ մի՛շտ մընա...

Անտառի Ֆավնի խոսակցության միջոցին մութն ընկնում ե յեվ
 նրա պատմության վերջին խոսքերի ընթացքում անտառից մի
 քանի անգամ ոգնության թույլ կանչ ե լսվում: Հիմա յերեվում ե
 Հ ա յ ն ը ի խ ը՝ հիվանդ ու հոգնած յեվ աշխատում ե հասնել
 խրճիթին: Իսկույն Անտառի Ֆավնը անհետանում ե անտառում,
 իսկ Նիկեյմանը՝ ջրհորում:

ՀԱՅՆՐԻԻ

Յերեսուն տարեկան զանգ ձուլող՝ գունատ, տանջված դեմքով,
 Բարի՛ մարդիկ, լըսեցե՛ք ինձ, դուռը բացե՛ք,
 մոլորվել եմ, ոգնեցե՛ք ինձ: Վա՛յր եմ ընկել...
 Ել չեմ կարող, բարի՛ մարդիկ, ա՛խ ոգնեցեք:
 Խրճիթի մոտ, խոտի մեջ նա ուշագնաց վայր ե ընկնում: Սարերի
 վրա՝ ծիրանի շերտեր: Արեվը մայր է մտել: Լեռնադաշտում գիշե-
 րային պաղ քամի յե փչում: Անտառից կաղեկալ դուրս ե գալիս
 Պ ա ո ա վ Վ ի տ տ ի խ ե ն ը, կողովը ուսին: Ճերմակ մազե-
 րով, հերարծակ, փետուրանման միքուրով՝ նա ավելի տղամարդու
 յե նմանում, քան կնոջ:

ՊԱՌԱՎ ՎԻՏՏԻՒԵՆ

Ռուտա՛նդըլա, ըստի՛ արի մի տե՛նա ,
 բո՛մագ արա, բե՛ռիս տա՛կին մե՛ռնըմեմ ,
 կա՛րըմ չեմ վոր նա՛ֆաս ՝ բաշեմ, Ա՛խչի — հե՛յ:

Դիմելով մոտիցը թռչող չղջիկին:

Քա՛ֆթառ չղջիկ, ա՛նգան արա, բե՛ հետ եմ ,
 փո՛ւչիկըդ կը տըռգացընես, վոա՛զիլ մի ,
 ա՛նգան արա, մի յերթիկից թըռի տուն ,
 տես ա՛խչիկը թե ընդի՛ ա . ա՛սա գա:
 Ա՛վինդըն՝ ել ե՛ս ա խա՛րաբ տի ըլի:

Սպառնալով երկնքին, վորտեղ աղոտ շանթեր են բռնվում:
 Ա՛յ-տա, շա՛շ Տոր,³ ել յետ ի՛ծանդդ ե՛կան:
 Կա՛րմիր մի՛րքիդ կա՛ծակնե՛րին խե՛ղքի բեր, —
 ի՛նչ են շաշ-շաշ պե՛ծին տալի, Ա՛խչի-հե՛յ:

Կանչելով սկյուռին, վոր թռչկոտելով կտրում է նրա ճամբան ու
 անցնում:

Մըկըծե՛ռ, ջան, յես քյե տըխիլ կը բա՛խշեմ,
 դու չո՛ւստըն ես, չա՛փուկ-չա՛փուկ վո՛տ ունես,
 մի մըտի տո՛ւն, ձեռաց կա՛նչի խխըկան,
 ա՛սա . թող գա, Ռուտա՛նդըլին կա՛նչի գա:

Վոտը դիմ ե առնում Հայնրիիին:

Ե՞ս ինչ բան ա՛: Ո՞վ ա փըռվել ըստի, հե՛յ,
 ա՛սա տե՛նամ՝ ի՛նչ գործի յես, ո՞վ ես դու:

1 Նա՛ֆաս — շունչ:
 2 Ա՛վինդ — յեղանակ:
 3 Տորը — գերմանական դիցաբանության ամենակարող աստվածն է,
 համապատասխանում ե հին հունական Զեվսին:
 4 Մըկըծեռ — սկյուռ:

Այ-տա: Ջըլի՞զ՞ բա՛նը բա՛նից ա՛նցել ա :
 Դո՞րթ մե՛ռել ե՛ս: Ռուտա՛նդըլա : Պա՛-հո-վե՛յ,
 Առանց ե՛ն ել . տե՛րտերըն ել, բյո՛խվան ել
 շա՛ն պես վրբաս կըտա՛ղել են, գազա՛զել—
 ե՛ս եր պա՛կաս: Հըմի ա՛րի ջո՛ւղաբ տու :
 Հենց վոր ըստի մե՛ռել ճա՛րեն—իմ տունը
 կը ջա՛րդեն ու փետի տե՛ղակ կը վա՛ռեն,
 Բա չե՛ն անի՛, կտո՞րվեն նըրանք: Ա՛յ գյադա՛:¹
 Հեչ վեջը չի՛ :

Ռաուտենդելայնը հարցական հայացքով դուրս ե գալիս խրճիթից.

Ե՛կար ելի՛ : Դե մըտի՛կ,
 Ի՛նչ դո՛նաղ ա ըստի եկել : Ե՛ն ել տես ,
 Ի՛նչ դի՛նջըն ա . Ժա՛ժ չի գալի , Մի խո՛րում
 խո՛տ բե , յե՛զին , տըղի հըմար տե՛ղ շինի՛ :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Տա՛նը քըցեմ :

ՊԱՌԱՎ ՎԻՏՏԻԵՆ

Ե՛տ եր պա՛կաս : Ոթա՛խըմ
 Ի՞նչ գործ ունի , հըսկանըմ չեմ . ետ տըղեն ,

Վիտտիխենը մտնում ե խրճիթը :

Ռաուտենդելայնը , վոր պահ մը չբացել եր , նորից յերեվում ե ,
 ձեռքին մի խուրձ խոտ : Ուզում ե ծունկ չոքի Հայնրիխի մտ—
 վերջինըս բաց ե անում աչքերը

1 Այ-տա—այ տղա :
 2 Ջլիզ—բոլորովին .
 3 Դյադա—տղա .
 4 Խորում—խուրձ :

ՀԱՅՆՐԻԻ

Բարի՛ աղջիկ . վորտե՞ղ եմ յես :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Լեռներում :

ՀԱՅՆՐԻԻ

Հա . լեռներում . . . Սակայն ասա՛ , ինչպե՞ս եմ
 յեկել-ընկել այս լեռները :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Սիրելի

ոտարական , այդ յես ինքըս չըգիտեմ ,
 Դու մի՛ հոգա . թե ինչպես ե պատահել .
 գըլուխըդ դիր փափուկ խոտին մամուռին
 յեվ հանգիստ առ . դու կարոտ ես հանգստյան :

ՀԱՅՆՐԻԻ

Ա՛խ . հանգստյան յես կարոտ եմ . դա ելիշտ ե ,
 բայց հեռու ե իմ հանգիստը . մանկիկըս :

Անհանգիստ՝

Վորտե՞ղ եմ յես յեվ ի՛նչ ե ինձ պատահել :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Յեթե ինքըս իմանայի՛ . . .

ՀԱՅՆՐԻԻ

Թըվում ե . . .

կարծես ցընորք , յերազ լինի բոլորը . . .
 իհա՛րկե յես հիմա ել եմ անըրջում :



ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Կաթ կա այստեղ: Մի քիչ խըմի՛ր, թույլ ես դու:

ՀԱՅՆՐԻԽ արագ-արագ.

Խըմի՛ր... այո՛, յես ուզում եմ, տուր տեսնեմ:

Խմում ե Ռաուտենդելայնի ձեռքի ամանից.

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ, նրա խմելու միջոցին.

Թըվում ե թե դու լեռներին սովոր չես
յեվ սերում ես հովտաբընակ մարդկանցից:
Յերեվի թե դու շա՛տ ես վեր բարձրացել.
այն վորսորդի նըման, վորը քիչ առաջ
լերան վայրի փախչող վորսին հետամուտ՝
զառիվայրում դիատապաստ գըլորվեց:
Ինձ թըվում ե սակայն, թե նա մի ուրիշ
տեսակ մարդ եր, քան թե դու յես:

ՀԱՅՆՐԻԽ

Կաթը խմելուց հետո սեվեում ե Ռաուտենդելին իր հիյացումով
լի հայացքը.

Մ, խոսի՛ր,

խոսի՛ր, հետո՞: Քո խըմիչքը ինձ համար
կազդուրիչ եր. իսկ քո խոսքը— առավել:

Դարձյալ ուշագնաց ու տանջահար.

Ա՛յլ տեսակ մարդ, ալիլի լա՛վ տեսակի...
այդպիսիներն ել են ընկնում: Խոսի՛ր հետո՞, մանկիկըս:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Իմ խոսելուց ի՞նչ դուրս կը գա: Ավելի
լավ կը լինի թարմ ջուր քաշեմ ջըրհորեց,
վոր քո փոշոտ, արնոտ դեմքը լըվանամ:

ՀԱՅՆՐԻԽ աղերսագին,

Մընա՛, մընա՛... .

Ամուր բռնում ե Ռաուտենդելայնի ձեռքը յեվ Ռաուտենդելայնը,
անորոշության մեջ, մնում ե կանկնած.

յեվ ի՛նձ նայիր քո դյութական հայացքով.
վողջ աշխարհը— լեռնե՛ր, յեթե՛ր. թափառական ամ-
պիկնե՛ր—

նորոգվում ե քո աչքերում ինձ համար
յեվ աշխարհը կըրկին քաղցրը հըմայքով
կանչում ե ինձ: Կա՛ց, մանկիկըս, ո՞՞ մընա՛... .

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ, անհանգիստ.

Թող լինի ա՛յն, ինչ վոր դո՛ւ յես կամենում...
բայց... .

ՀԱՅՆՐԻԽ, ավելի տենդոտ ու աղերսագին.

կա՛ց ինձ մոտ, ել մի գընա, ո՞՞ մընա՛... .
դու չըգիտես, չես գուշակում, թե ինձ համար դու
ի՛նչ ես:
Մի՛ արթնացուր... յես ուզում եմ ասած լինել, ման-
կիկըս... .

յես վա՛յր ընկա... . բայց վո՛չ, ա՛յդ չեր... . դո՛ւ խոսիր,
յերկնի հըստակ, անուշ ձայնով զըրուցի՛ր... .
քե՛զ եմ ուզում միայն լըսել: Չե՞ս խոսում,
դու չե՞ս յերգում: Յես վա՛յր ընկա... . բայց այդ արդեն
ասացի:

Յես չըգիտեմ՝ արդյոք ինչպես պատահեց.
իմ վոտի տակ հանապա՛րհը փուլ յեկավ,
հոժարակա՛մ թե ակամա վայր ընկա,
կարճ՝ յես ընկա յեվ հետըս քար, փոշի, հիմ... .

Ավելի տենդոտ՝

Քրոնեցի մի բալի ծառից... դու գիտե՞ս,
դա մի վայրի բալի ծառ եր. ժայռի հեղբու՞մ դուրս
եկած :

Սակայն նըրա բարակ բունը կտաքրվեց
յեվ յես ձեռքիս բըռնած փոքրիկ . ծաղկափըթիթ այդ
ծառը,
վոր շըրշյունով բյուր վարդագույն թերթիկներ եր շաղ
տալիս ,

գըլորվեցի խորխորատը յեվ մեռա :
Ասա՛ , վոր այդ—այդպես ե :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ, անհաստատ.

Թրվում ե թե կենդանի յես :

ՀԱՅՆՐԻԻ

Հիմա գիտեմ, իմացա :

Առաջ չեյի իմանում վոր կյանքը—մահ ե . մահը—կյանք :

Նորից ուշագնաց.

Յես վայր ընկա . Ապրում եյի յեվ ընկա .
Չանգըս ընկավ . Մենք երկուսով վայր ընկանք :
Առաջինը յե՞ս վայր ընկա . հետո՞ նա ,
թե պատահեց ընդհակառակ—ո՞վ գիտե ,
ո՞վ կը մեկնի հիմա— վո՛չ վոր : Յեվ յեթե
մեկնելու ել լինի մեկը—հիմա արդեն միյեմլույն ե ինձ
համար .

այն պատահեց իմ կենդանի ժամանակ ,
իսկ յես հիմա ել չեմ ապրում , մեռել եմ :
Մեղմ՝
Կաց , իմ ձեռքը... դեռ հերմակ ե... կաթի պես...

յեվ կապարի նրման ծանրը, համբաշարժ . .
իսկ քո բընքույշ գիսակների ալիքը
թափալում ե Բեթեսթայի ավազանի ջրրի պես . . .
ի՛նչ անուշ ես . . . մընա՛ , ձեռքըս բարեպաշտ ե , իսկ
դու—սուրբ :

Յեվ յես արդեն տեսել եմ քեզ . . . ա՛խ , վորտե՞ղ եմ
քեզ տեսել :

Յե՞րբ եյի քեզ ծառայում ու մաքառում ,
ծըգտում ձայնըդ զանգի հանքում պարփակել
յեվ պըսակել արեվի վեհ տոնին նըրան—վոսկու հետ :
Բայց այդ գըլուխ գործոցըս մի՛շտ վիժել ե
յեվ յես արյուն-արցունքով եմ արտասպել :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Արտասպել ես : Ինչպե՞ս , յես չեմ հասկանում,
այդ ի՞նչ բան ե արցունքը :

ՀԱՅՆՐԻԻ քարծրամուտու ճիգ գործելով .

Սիրո՛ւն պատկեր , ինձ մի քիչ վեր բարձրացուր :

Հենվելով Ռաուտենդելային .

Թեքվել ես դու վըրաս , դե ինձ ազատի՛ր
քո սիրառատ ձեռներով այս բիրտ յերկրից .
վորի վըրա ժամանակն ինձ խաչել ե :
Ազատի՛ր ինձ , դու կարող ես . յես գիտեմ :
Ապա՛ փափուկ ձեռներովըդ արծակիք իմ հակատը...
տատասկով են իմ հակատը փաթաթել :
Թագ չե՛մ ուզում : Սե՛ր տուր միայն , սե՛ր...

Կիսով չափ նստած , ուժասպառ .

Այսպե՛ս :

Շնորհակալ եմ :

Մեղմ ու մուրճ՝

Այստեղ վորքան սիրուն է,
սոսափյունը՝ այնքան ոտար, հրնչալուր:
Սոճիները խորհրդավոր պարզում են մութ թեփերը,
հանդիսավոր գրլուխները որորում...
Հեքյաթ է այս: Այն հեքյաթն է անտառի մեջ սավառ-
նում,

ըըրշում, շրվում, շըշընջում է կամացուկ.
որորելով տերեփները՝ յերգ է ասում դայարում...
Նայի՛ր, նայի՛ր, մըշուշաշող, յերկարափեշ շորերով
նա՛՝ ցերմակ ու ծավալուն,
մոտենում է ու մեկնում
ինձ իր ձեռքը... ավելի՛ մոտ... ահա՛՝ ցերմակ մատներով
շոշափում է իմ ականջը, իմ աչքերը, իմ լեզուն...
յեվ չըքացավ... իսկ դու այստեղ մընացիր:
Հեքյաթը հենց դու ի՛նքըդ ես: Լույս-հեքյաթ ինձ համ-
բուրի՛ր...:

Ուշաթափում ե:

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ ինքն իրեն

Չեմ հասկանում, տարորինակ ես խոսում:

Հանկարծ վճռում է գնալ.

Այդպես պառկիր ու նընջիր:

ՀԱՅՆՐԻԹ, յերագի մեջ.

Լույս-հեքյաթ ինձ համբուրիր:

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Հարմացած մնում է կանգնած ու նայում նրան: Մութն արդեն
ընկել է: Հանկարծ նա վախեցած կանչում է.

Տատի՛:

ՎԻՏՏԻԹԵՆ

Ա՛խչի:

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Աբա դու մեկ դո՛ւրս արի:

ՎԻՏՏԻԹԵՆ

Դո՛ւ յեկ կո՛ւշտըս, ո՛գտի կըրակ վա՛ռեմ ե՛:

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Տատի՛:

ՎԵՏՏԻԹԵՆ

Ա՛խչի, բա չե՛ս լըսում թե՛՞գ արա.
ե՛ս ա ե՛ժին յեմ՝ պըտի տամ, տի կրթեմ:

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Ոգնի՛ր, տատի՛, նա մեռնո՛ւմ է: Ա՛յ տատի՛:

ՎԻՏՏԻԹԵՆ

Յերեվում է խրճիթի շեմքին, ծախ ձեռքին՝ մի բաղյա յեկ կան-
չում է կատվին.

Ա՛րի, փի՛ստ,

Անցողակի՛ Հայնրիսի հասցեյին.

են բա՛նջարը հլա չի՛՝ բըսել, վոր քո ցա՛վին
հա՛ր անի:

Դե ի՛սանը մե՛ռնիլ պըտի, բունեց ա:
Թե մե՛ռել ա — կարգը, զաթի, ե՛տ ա, բա՛լամ, չա՛րան ինչ:

Ա՛րի, փի՛ստ, ա՛րի, ըստի մի նա՛խա՛ կաթնը կա:

Ել յե՛տ կա՛տուն ո՞ւր կորալ՝

— Հե՛յ, տըղա՛մարդ ծառաբընակ վոզիններ,

ըստի՛ ե՛կեք, քաթ եմ բերել լազանում:

— Հե՛յ, կինա՛րմատ ծառաբընակ վոզիններ,

ըստի՛ ե՛կեք, թա՛ժա հաց կա ամանում:

Կե՛ր ու խո՛ւմը, վոր ձեզ հըմար բերել եմ հա՛—ե՛ն-

բան համով պա՛տառ են,

դըրա խա՛թեր ի՛շխան ու խան իրար գըլուխ կըտան

ու կը պըտա՛ռեն:

Մոտ տասը փոքրիկ ծիծաղաշարժ ծառերի արու յեզ եզ վոզիններ
շտապով դուրս են գալիս անտառից ու վրա տալիս ամանին:

— Հե՛յ դինջ կացեք, ի՞նչ եք ըստի աղմըկում:

ամեն մընիդ կը հա՛սնի հո մի-մի թի՛քա, մի-մի կում:

Ի՞նչ եք կըռվըմ, ի՛րար բըշտում,

ջանավա՛րնի անկըշտում:

Ետ վոր ըսկի՛ սագա կան չի—

յեդնա ա՛րի ու ձեզ մերուց դո՛ւս կանչի:

Ձեր ըսո՛րվա փայը կե՛րար—

վա՛յ իսա՛ննի խայտա՛ռակ

տո՛ւնըս տակն ու վըրա ա՛րին—

հայդա, կո՛րեք ձեր մե՛րին:

Ծառերի արու յեզ եզ վոզինները հեռանում են անտառը, վորտե-
ղից յիկել եյին: Լուսինն արդեն ծագել է: Խրճիթի յետեվից կախ-
ված ժայռի վրա յերեվում է Ֆալնը: Ձեռները փողի ձեկով բեր-
նին դրած՝ նա արձագանքի պես, կրկնում է ողնության կանչը:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Ա՛խ, ոգնեցե՛ք՝

¹ Նա՛խա — մի բիչ:

ՎԻՏՏԻԽԵՆ

Քե՞զ ինչ ելալ:

ԿԱՆՁԻ ՁԱՅՆԵՐ, հե տ, անտառի խորքից՝

Հա՛յնրիխ, Հա՛յնրիխ:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ, առաջվա պես՝

Ա՛խ, ոգնեցե՛ք:

ՎԻՏՏԻԽԵՆ, սպառնալով Ֆալնին՝

Շաշո՛ւթյունըդ ու՛ղ արա

սա՛րի խա՛լսից, ա՛վարա:

Դու մե՛ռած ես,

վոր մի շո՛ւշով լիքը բըթոց վե՛ր ածես,

շուն սըպա՛նես:

յա կամ բա՛նվոր հա միից հա՛նես ու տա՛նես

ճըլկըտներըմ՝ մու՛րես,

վոր շըլնքը վո՛տն ել հե՛տը հըլլո՛րես:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Տա՛տի, գըլխիդ հարը տես. —

հյուրեր պիտի ընդունե՛ս:

Տե՛ս, թե սագը ինչ է բերում թեվի վըրա—

նա բերում է փըրփուր հարող վարսավիրա՝

Տե՛ս, թե սագը ինչ է բերում իր ուսին—

յերկարածամ վարժապետին-թերուսին:

Յեզ վերջապես ահա նա

բերում է խաչ-քահանա՝

ԿԱՆՁԻ ՁԱՅՆԵՐ, առաջվանից ազելի մոտ՝

Հա՛յնրիխ, Հա՛յնրիխ:

¹ ճըլկըտներըմ— հահիճներում:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ, առաջվա պես՝

Ոգնեցե՛ք :

ՎԻՏՏԻԽԵՆ

Գրո՛ւր տա՛նի քեզ, ա՛ր բալամ, գրրո՛ւր :
Մի վարժա՛պետ, հե՛տն ել տե՛րտեր—վա՛յ գրխիս—
բե՛րըմես վոր յես ի՛նչ անեմ :

Բողոնցքով սպառնալով Ֆավնին՝

Հըլա կա՛ց .

մըտի՛դ պահի. ե՛նքան պի՛ծակ ու մո՛ծակ,
քըշեմ վըրադ. կըծացընեմ, վոր ցա՛վից
իմա՛նաս վոչ թե ուր կորչես :

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ, չարախնդաց,

Գալի՛ս են :

Հեռանում ե .

ՎԻՏՏԻԽԵՆ

Գա՛լիս են—գա՛ն, ըսկի՛ ել իմ վե՛ջը չի :

Դառնալով Ռաուտենդեիին, վորո՛ւ կլանված է Հոյնրիխի տեսքն
ու տանջ սն քը դիտելով.

Յեկ տուն, լի՛սը փըչի, բո՛ւնըս տա՛նըմ ա :

Յե՛գին ժա՛ժ եկ :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Մոայլ ու համառ .

Յես չեմ ուզում :

ՎԻՏՏԻԽԵՆ

Ո՛ւզըմ չե՛ս :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Այո՛, տատի, յես չեմ ուզում :

ՎԻՏՏԻԽԵՆ

Ետ խի՞ վոր :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Նըրանք կըգան, սըրան կառնեն—կը տանեն :

ՎԻՏՏԻԽԵՆ

Ե՛. թո՛ղ տանեն :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Յես չե՛մ ուզում, վոր տանեն :

ՎԻՏՏԻԽԵՆ

Չե՛, ա՛խչի, չե՛, կապուտվորի սիրուն, յե՛կ,
ես լե՛ջը թող ընդի մընա, — դու ա՛րի :
Մեռելնե՛րը մեռե՛լի հետ ինչ ո՛ւզըմ են թող ա՛նեն .
մե՛ռնիլ պըտի—դե թող մե՛ռնի, ի՛րա հըմար լամիլ ե՛տ ա :
Տե՛անըմ չես թե կյա՛նքը վո՛նց ա չարչարըմ,
վո՛նց ա տըղի սի՛րտը դա՛ղըմ ու մա՛շըմ :

ՀԱՅՆՐԻԽ, յերազում՝

Արե՛վ ծագեց :

ՎԻՏՏԻԽԵՆ

Ըսկի ա՛րեվ տե՛հած կա՞ :

Ա՛րի, թող նա պա՛ռկած մընա, լա՛վ կըլի :

Ներս ե մոռում խրճիթը :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Մենակ ականջ ե դնում, նորից լսվում ե կանչը՝ «Հայրիս, Հայրիս»: Յանկարծ աղջիկը մի ծաղկած ճյուղ կտրելով՝ բոլորակ զիծ ե քաշում Հայրիսի շուրջը յեւ այդ միջոցին ասում՝

Այս նոր ծաղկած ծառի վոստով
յես՝ տատի պես — գրծեմ շուտով՝

կախարդական
ամո՛ւր շրջան:

Մընա՛ յեկվոր
անվիրավոր,

յեւ քե՛զ համար, յեւ ի՛նձ համար
ապրի՛ր ձըմեռ, ապրի՛ր ամառ:

Այս շրջանը ներս չի՛ առնի յեւ վոչ մեկին,
Յեւ վոչ մի մարդ. յեւ վոչ մի՛ կին
յերիտասարդ

կամ ալեգարդ:

Քաշվում ե մութի մէջ:

Մեկը մյուսի հետեւից անտառից դուրս են գալիս՝ Պաստորը, Վարսավիրան յեւ Ռուսուցիչը:

ՊԱՍՏՈՐ

Լճ՛ւյս եմ տեսնում:

ՌԻՍՈՒՅԻԶ

Յես ե՛լ յես ե՛լ:

ՊԱՍՏՈՐ

Վորտե՛ղ ենք:

ՎԱՐՍԱՎԻՐԱ

Սաստա՛ծ գիտե՛. Ահա նորից կանչեցին՝
«ա՛խ, ոգնեցե՛ք»:

ՊԱՍՏՈՐ

Մեր վարպետի ձայնն ե դա:

ՌԻՍՈՒՅԻԶ

Բան չեմ լըսում:

ՎԱՐՍԱՎԻՐԱ

Չայնը հընչեց վերեւից:

ՌԻՍՈՒՅԻԶ

Չեր ասածը ճիշտ կը լիներ, եթե մարդ
վայր ընկնելիս դեպի յերկինք սըլանար:
Սակայն կարծեմ հակառակն ե պատահում՝
գըլորվում են սարից — ձորը, վո՛չ թե ձորից դեպի սար:
Թող գըրողի փայ լինեմ յես յեթե հէտուն վոտնաչափ
նեքքեւ ընկած չըլինի մեր վարպետը:

ՎԱՐՍԱՎԻՐԱ

Տընաքանդնե՛ր, կանչի ձայնը չե՞ք լըսում:
Յեթե ձայնը վարպետինը չըլինի —
Ռյուբեցագել՝ գըժին թող յես ածիլեմ:
Արհեստիս չափ լավ գիտեմ վոր այս ձայնը —
վարպետինն ե: Ահա նորից նա կանչեց:

ՌԻՍՈՒՅԻԶ

Վորտեղի՞ց ե ձայնը գալիս:

¹ Ռյուբեցագել — լեռնային մրրկի մարմնացումն ե, մի ցասկոտ վոգի:

ՊԱՍՏՈՐ

Պարոններ,
 փորտե՞ղ ենք մենք, նախ ինձ դուք ա՛յդ ասացե՛ք,
 Յես փոտներըս հազիվ հազ եմ քարշ տալիս,
 կըրունկներըս ցավում, դեմքըս — արնոտել,
 ել յես առաջ չեմ ընթանա:

ԿԱՆԶ՝

Ոգնեցե՛ք

ՊԱՍՏՈՐ

Նորից կանչեց:

ՎԱՐՍԱՎԻՐԱ

Տաղը քայլից հեռու չեր:
 Չայնը հրնչեց մոտիկ տեղից, շա՛տ մոտից:

ՊԱՍՏՈՐ

Ուժասպառ նստելով՝

Հոգիս դուրս եկավ, բարի ընկերներ,
 այլեվըս առաջ գընալ չեմ կարող:
 Ինձ այստեղ լըբեք, կամ ծեցեք, ծեծկեք —
 դարձյալ տեղիցըս դուք ինձ չեք շարժի:
 Գըթառա՛տ յերկինք: Յեվ հանդիսավոր
 Աստուծո տոնը — այսու վերջացավ:
 Կարո՞ղ եր մեկը յերեվակայել:
 Ապա այն զա՛նգը, մեր հե՛շ, բարեպաշտ
 վարպետի վըսեմ գըլուխ գործո՞ցը:
 Արդ՝ Տիրոջ վերին, վեհ ուղիները
 անճառելի յեն յեվ հըրաշալից:

ՎԱՐՍԱՎԻՐԱ

Վո՞ր տեղ ենք մենք: Պարոն Պաստոր, դո՛ւք այդ
 հարցը տըվի՛ր մեզ:
 Բարի խորհուրդ տամ ձեզ՝ դո՛ւք, դո՛ւք այստեղից,
 արա՛գ-արա՛գ, փորչափ փոր դուք կարենաք:
 Յես կուզեյի ավելի շուտ պիժակների բընո՛ւմ յեվ
 մե՛րկ գիշերել,
 քան թե այստեղ. Տեր-Աստված, Գու ոգնիր մեզ:
 Արբան կասեն՝ Արծաթայանջ յեվ մենք պառավ Վիտ-
 տիխի
 տընակիցը գըտնըվում ենք հարյուր քայլից վո՛չ հեռու:
 Անիծվի՛ այդ վըհուկ-մուկը: Յեկեք, հեռո՛ւ այստեղից:

ՊԱՍՏՈՐ

Անկարող եմ:

ՈՒՍՈՒՅԻԶ

Յեկե՛ք, խընդրեմ, հեռանանք:
 Ամենից քիչ կախարդական վայր ե սա
 վըհուկն ել ինձ բընավ յերկյուղ չի՛ սաստում,
 բայց ա՛յս տեղից վատը յես չեմ ճանաչում:
 Շրըջմոլիկների, մաքսանենգերի,
 գողերի համար — կատարյալ դըրախտ,
 ավազակությամբ յեվ արյունարբու
 մարդասպանությամբ այնքա՛ն հըռչակված,
 փոր սարսափին ընտելանալ կամեցող
 Պետրոսն՝¹ այստեղ կընտելանար անպայման:

¹ Ուսուցիչը «Wie Peter das Grusseln lernte» հեքյամն ե ակ-
 նարկում, «Ինչպես Պետրոսը (առաքյալը) սովորում եր սարսափին ըն-
 տելանալ» — Գերմանիայում հանրաժանոց մի հեքյամ: Ծան. Թարգ.

ՎԱՐՍՍԱՎԻՐԱ

Բազմապատկման աղյուսակը դուք գիտեք,
բայց կան բացի աղյուսակից — ա՛յլ բաներ:
Չեմ կամենում, վոր դուք փորձով իմանաք
թե ինչ բան ե կախարդանքը, վարժապետ:
Չար կախարդը՝ չարի վերա թուխս նստած,
չար կախարդը՝ գորտի նըման զարշելի,
ցավ ե նյութում յեվ ուղարկում ձեզ նըվեր,
տավար ունես՝ գոմըդ ժանտախտ ե բըցում,
արյուն ես դու կըթում կովից կաթի տեղ,
փոչխարներըդ քոս են ընկնում, ձիաներըդ—կատաղում,
մանուկներիդ չիք ու վերք ե բաժանում,
կամ՝ այլանդակ մեծ գըլուխներ յեվ ուռույցք:

ՈՒՍՈՒՑԻՉ

Դուք, պարոններ, զառանցում եք. ձեզ գիշերն ե շը-
փոթել:

Կախարդից եք խոսում: Լըսեք, ինչպե՞ս ե նա հառաչում:
Ահա նըրան իմ աչքերով տեսա:

ՊԱՍՏՈՐ

Ո՞ւմ:

ՈՒՍՈՒՑԻՉ

Նըրան, ում վոր փորոնում ենք՝ Հայնրիխին:

ՎԱՐՍՍԱՎԻՐԱ

Տե՛ս, կախարդը նըրան արդեն ձեռ առավ:

ՊԱՍՏՈՐ

Կախարդական ուրու յե դա:

ՈՒՍՈՒՑԻՉ

Ի՛նչ կախարդ,

Յերկու անգամ յերկուն — չորս ե յեվ չի դառնա յերբեք
հինգ:

Վո՛չ կախարդ կա, վո՛չ կախարդի ուրվական,
այլ պառկած ե մեր զանգ ձուլող վարպետը:
Յեա իմ հոգին: Ամպի ճեղքից լուսինն ահա կը ցոլա...
Դե՛հ, պարոններ, ուշ դարձըրեք. — ըհը՛, հիմա հո ճի՞շտ ե:

ՊԱՍՏՈՐ

Արդարեվ դա վարպետն ե:

ՎԱՐՍՍԱՎԻՐԱ

Մեր զանգ ձուլող վարպետը:

Յերեքն ել շտապով գնում են Հայնրիխի մոտ յեվ, դիպչելով կա-
խարդական շըջանին, յետ են մղվում:

ՊԱՍՏՈՐ

Վա՛յ:

ՎԱՐՍՍԱՎԻՐԱ

Վա՛հ:

ՈՒՍՈՒՑԻՉ

Ա՛յ- ա՛յ:

ՌԱՌԻՏԵՆԻԵԼԱՅԵ

Յերեվում ե լոկ մի վայրկյան ծառի ճյուղից վայր ցատկելու մի-
ջոցին. Անճետանում ե դիվային կծու ծիծաղով.

Հա՛ - հա՛ - հա՛ - հա՛:

— Լուրբյուն —

ՈՒՍՈՒՅԻԶ, 22/աժ.

Այս ի՞նչ բան եր:

ՎԱՐՄԱՎԻՐԱ

Ա՞յս ինչ բան եր:

ՊԱՍՏՈՐ

Մեկը խընդաց:

ՈՒՍՈՒՅԻԶ

Իմ աչքերից հուր ցայտեց,
կըրակ մաղվեց իմ գրվածին:

ՊԱՍՏՈՐ

Իսկ ծիծաղը լըսեցի՞ք:

ՎԱՐՄԱՎԻՐԱ

Յես լըսեցի ինչ վոր ծիծաղ ու հայթյուն:

ՊԱՍՏՈՐ

Լուսնի աղոտ շողերի տակ որորվող
այն յեղեմի ծառից հրնչեց ծիծաղը:
Բուն, վոր հիմա հիչով թըռավ—ա՛յն տեղից:

ՎԱՐՄԱՎԻՐԱ

Պառավից վոր պատմում եյի—հիմա հավատ կընծայե՞ք:
Ճիշտ չե՞, բացի հաց ուտելուց նա ուրիշ շա՛տ բան
զիտե:

Անվրտանգ ե այտեղ, այո՞—թե դուք ել
ինձ պես ահից դողդողում եք: Սատանա՛:

ՊԱՍՏՈՐ

Խաչը ձեռքին բարձր բռնած՝ վճռականորեն դիմում ե դեպի
խրճիթը:

Թող ճիշտ լինի ձեր ասածը: Թող նոյն իսկ
իր բունն այստեղ հյուսած լինի սատանան:
Անվախ առա՛ջ: Մենք կը հաղթենք Աստուծով:
Յերբեք այնպես պարզ չի յեղել սատանի
չար խորհուրդը, վորքան այսոր, յերբ զանգը
ձուլողի հետ միասին նա վայր նետեց:
Աստուծո մի սպասավորի յեվ մի զանգ,
վորի կոչումն եր անդունդի յեզերքից
յերգել ողում խաղաղության մեղեդին,
հավերժական սիրո յերգը, ավետիսը թողության:
Արդ՝ մենք այստեղ զինվորներ ենք Աստուծո,
յես բաղխում եմ դուռը:

ՎԱՐՄԱՎԻՐԱ

Չանեք:

ՊԱՍՏՈՐ

Բաղխում եմ:

Բաղխում ե դուռը:

ՎԻՏՏԻԽԵՆ

Ո՞վ ա դուռը:

ՊԱՍՏՈՐ

Մի քրիստոնյա՛:

ՎԻՏՏԻԽԵՆ

Քրիստոնյա, յա կըռա՛ պաշտ
Ի՞նչ խաբար ա:

ՊԱՍՏՈՐ

Դուռը բացե՛ք :

ՎԻՏՏԻԻՅԵՆ

Դուռը բաց ե անում յեվ մի վառ լապտեր մեռերին՝ յերեվան գալիս,
Յանի հըմի ի՞նչ եք ուզում:

ՊԱՍՏՈՐ

Հանուն Նորա, Վո՛րին դու չես հանաչում...

ՎԻՏՏԻԻՅԵՆ

Լա՛վ էրբա՛տի զա՛յդի յա սա ըսկըսում:

ՈՒՍՈՒՉԻՅ

Չայնըդ կըտրի՛ր յեվ վո՛չ մի բառ, անիծյալ:
Դու չափն անցար — ժամըդ արդեն հասել ե:
Յեվ խայտառակ քո կյանքով,
արարքներով անառակ
վողջ շրջանում դառել ես դու—ատելի:
Յեթե իսկույն չըկատարես ինչ վոր մենք քեզ ասում
ենք —

քո կըտուրի վըրա կարմիր արգաղը
ափելի շուտ, քան թե վաղը կը կանչի
յեվ վըհուկի բունըդ բոց ու ծըխի մեզ
դեպի յերկինք կըցընդի:

ՎԱՐՍԱՎԻՐՍ

Շարունակ յերեսը խաչակնքելով.

Անիծվա՛ծ կատու, յես չե՛մ վախենում
քո չար հայացքից, հո՛ւր թափիր վըրաս.
վորտեղ կամենաս կարմիր աչքերով

դիպակըս տեսնես — մի՛շտ կը տեսնես խաչ:
Ինչ վոր քեզ հիմա ասում ենք — արա՛,
յե՛տ տուր այն մարդուն մեզ իսկույն յեվ յեթ:

ՊԱՍՏՈՐ

Հանուն Նորա, Վորին դու չես հանաչում,
թո՛ղ, ասում եմ, դըժոխային խաղերըդ:
Թո՛ղ յեվ ոգնիր. այստեղ մի մարդ ե ընկած,
մի մե՛ծ վարպետ, ըսպասավո՛ր Աստուծո,
վոր ի փառքս Տյառն մերո,
ի նախատինք, համոթ, հանեծք
դիվանըվեր ուժերի՝
իր արվեստով գիտեր իշխել յեթերում:

ՎԻՏՏԻԻՅԵՆ

Շարունակ լապտերով պաշտպանվելով՝ քայլում ե դեպի Հայնրիխը,
Բո՛լ ա, Ըստի ընկած նա՛չար ջա՛մդաքը
թե ա՛ռնըմեք — ա՛ռեք, ի՛մ ինչ գո՛րծըն ա:
Ե՛, ղըվա՛թը պա՛տի, կա՛րա — թող ա՛պրի,
ե՛նքան ապրի — ի՛նչքան շո՛ւնչը կըսա՛տի:
Ամա ե՛րկար ա՛պրողը չի՛ — տե՛նըմեմ:
Ո՞ւստա յա, հա՛... Ուստո՛ւթյունը մա՛շուր չի.¹
տրդի շի՛նած են երկա՛թի զա՛նգերը,
յես ի՛մ,² բա՛լքի լա՛վ են զընգըմ ձեզ հըմար,
Դուք ե՛ն թափուր անգան ո՛ւնեք, վոր ըսկի
բա՛ն չեք լըսում, Նորանց ձեներ — մեզ հըմար
հե՛ջ անուշ չի: Ի՛րա հըմար ել լա՛վ չի:

¹ Մաշուր չի — չի յերկվում, չի նկատվում:

² Յես իմ — յես ի՞նչ իմանամ, — այսինքն՝ չգիտեմ:

Ի՛նքը զի՛տի, ի՛նչ ա պա՛կաս զանգե՛րին.
 բիրա՛դինն ել, թե՛ կուզ լա՛վը—նա՛քած են:
 Հըրե՛ ա՛ռեք են խա՛րակն՝ ու ձեք տըղին
 յետ տա՛րեք տուն: Ո՞վ ա ասըմ, վա՛րպետ ա:
 Ռա՛նգը թըռած վա՛րպետ, վե՛ր իլ: Տերտե՛րին
 ախըր պե՛տք ա դու ո՛գտես վոր քա՛րոզ տա,
 վարժապե՛տին—վոր երե՛խանց լա՛վ թա՛կի,
 դալլա՛քին ել, վոր փըրփո՛ւրը լա՛վ հարի:

Հայնրիխին դնում են պատգարակի վրա: Ուսուցիչն ու Վարսա-
 վիրան վերցնում են պատգարակը:

ՊԱՍՏՈՐ

Վո՛հ մեղսալից. անառակ կին, դե լըռի՛ր
 յեվ քո նամփով դըժոխային ընթացիլ:

ՎԻՏՏԻԻՅԵՆ

Չեր քա՛րոզը իմա՛նըմ հմ, խընայե՛ցեք ձեք նա՛ռը:
 Գի՛տեմ. ե՛ն ա՛ ըզզացմունքը—մե՛ղք բան ա,
 ես յե՛րկիրը—մի նաշ՝ ա
 յե՛րկինքըն ել—խո՛ւփըն ա՛:
 Են ա՛ստղերը—ծա՛կեր են,
 ա՛րեմլն ել մի յե՛քբա ծակ ա—դըբա դուս:
 Տե՛րտեր չըլի—ա՛լամ-ա՛շխարհ կը փըլչի,
 իսկ Տերն-Ա՛ստված—խըրտվի՛լակ ա ձեզ հըմար:
 Տե՛ղը չի մարդ. եի՛պոտն ա՛ռնի, եի՛ոնե՛րիդ՝ հա՛խից զա՛:
 Ե՛ս ա՛—ո՛ւրիշ բան չըկա՛:

Հետեվից դուռը ուժգնորեն խփում—փակում ե.

1 Խարակ—պատգարակ
 2 Նաշ—դագաղ
 3 ձիլո—թոյլ, տկար

ՊԱՍՏՈՐ

Սատանա՛ կին:

ՎԱՐՍԱՎԻՐԱ

Աստված սիրեք—սուս արեք,
 մի՛ չարացնեք—մեր բանը բուրդ կը լինի:

Պատտըրը, Ուսուցիչն ու Վարսավիրան հեռանում են անտառը:
 Լուսինը պայծառ բարձրացել է խաղաղ լեռնադաշտի վրա: Առա-
 ջին, յերկրորդ յեվ յերրորդ ելփերը գուրս են թռչում անտառից
 յեվ պտույտ գալիս խմբապարի մեջ:

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ—շշնջալով կանչում ե՛

Քո՛ւյր:

ՅԵՐԿՐՈՐԴ ԵԼՖ

Քո՛ւյր:

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ

Ճերմակ ու դալուկ

լուսինն ելավ նորելուկ:

Մութ է յեվ ցուրտ է փըչում—
 հովտում, ձորում ու կիրճում:

ՅԵՐԿՐՈՐԴ ԵԼՖ

Վորտեղի՞ց ես գալիս, քույր:

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ

Մեր ջըրվեժից ձյունաթույր,
 լույսը՝ բեկվել—ջըրի մեջ
 հուր է վառել, հուր անշեջ
 Ալիքները ցուցըլուն

շառաչում են, թավալում:
Յես գիշերով՝ փըրփրադեզ
զըրից յեւա—թըռա դես:

ՅԵՐՐՈՐԴ ԵԼՖ, գալիս է

Ա՞յս է տեղը ձեր պարի:

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ

Շուռ յեկ, քույրիկ, շուռ արի:

ՅԵՐԿՐՈՐԴ ԵԼՖ

Վո՞րտեղից ես դու յեկել:

ՅԵՐՐՈՐԴ ԵԼՖ

Պարե՛ք, պարե՛ք անարգել:
Ժայռերի մեջ—վըճիտ, խոր
լիճ կա—նա ինձ բերեց նոր:
Լիրճը—վորպես սեւ գոհար,
գըրկին՝ աստղեր անհամար:
Հավաքելով թանկագին
արծաթ-շորը իմ հագին՝
լուսնի ցուրով սրլացա
թեթեւ ողով լեռն անցա:

ՉՈՐՐՈՐԴ ԵԼՖԸ գալիս է

Քույրե՛ր:

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ

Քո՛ւյր, քո՛ւյր, շո՛ւտ արի,
շարքը մըտիր մեր պարի:

ԲՈՒՈՐԸ

Պարե՛ք, փարե՛ք խընդագին
խըմբապարի պըսակին:

ՉՈՐՐՈՐԴ ԵԼՖ

Տիկին Հոլլի՛ մամուռից
ծածուկ փախա իմ մորից:

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ

Պարե՛ք, փարե՛ք խընդագին
խըմբապարի պըսակին:

Շանթերն սկսում են ավելի պայծառ պսպալալ, Հեռվից հնչում է
ամպրոպի մրմուռը՝

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Հանկարծ յերեվան է գալիս խրճիթի շեմքին՝ ձեռները զլսի յե-
տեվը դրած: Լուսինը նրան լուսավորում է:

Հե՛յ, ելֆիկներ՛ը:

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ

Սո՛ւս, կամա՛ց,
ճիչ եմ լըսում իմ դիմաց:

ՅԵՐԿՐՈՐԴ ԵԼՖ

Վա՛յ իմ ըզգեստ: Կորի՛ք, վատ
ցըցված ձերուկ կոճղարմատ:

¹ Հոլլա, Տիկին Հոլլա—յերկարահեր, տգեղ պառավ, վոր բնակվում է
լճերում, ջրերի մեջ: Ծան. Թարգ.

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Հեյ, երբիկնե՛ր:

ՅԵՐՐՈՐԴ ԵԼՖ

Վա՛յ անգին

բանկոնակը իմ հագին:

Ո՛վ ե սուրում լույս թագով,
հախրում ողում մութ ագով
յեվ մեր պարը խանգարում:

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ, մտնելով պարի մեջ:

Տեղ տրվեք ինձ ձեր պարում,
ձեր շուրջպարի պըսակում,
շըշընջացող ողակում:
Արծաթի՛ք ելիք, տե՛ս հոգիս,
ինչ շորնր են իմ հագիս:
Տատս ե գործել խնդալից
արծաթահյուս խաս թելից:
Սեփորա՛կ ելիք, սեփորա՛կ,
տես ինչ թո՛ւխ եմ ու բարա՛կ:
Վոսկեգո՛ւշն ելիք, տե՛ս զանգուր
վարսերըս վա՛ռ, վոսկեհո՛ւր.
վեր թըռչեմ — վե՛ր կը թըռչեն,
կերպասի ծուխ ու հուր չե՛ն,
դեմքիս վրա վոր թափեն —
լույս ու վոսկու տարափեն:

ԲՈՒՈՐԸ

Պարե՛ք, փարե՛ք խընդագին
խըմբապարի պըսակին:

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Ջրերն ի՞նչ են աղմըկում.
մի զանգ սուզվեց լընակում:
Ելի՛ք, ո՞ւր ե հիմա նա,
ձեզնից վո՞րը կիմանա:

ԲՈՒՈՐԸ

Պարե՛ք, փարե՛ք խընդագին
խըմբապարի պըսակին:
Զատկածաղի՛կ, անմոռո՛ւկ,
չե՛ք դիպչի մեր վոտին դուք:

ԱՆՏԱՌԻ ՖՍՎՆ

Այժի պես վաստոտալով՝ գալիս ե. Մըրիկը սաստկանում ե. Հե-
տագա խոսքերի ընթացքում — ամպրոպի ուժգին հարվածի յեվ
անծրեփի ծայն ե լսվում:

Իսկ յես ծաղիկ ու դալար —
վողջ անում եմ վոտնահար:
Յերը հահե՛րց ջուր ե ցայտում,
շըվոց լըսվում թավ խոտում —
ելի՛ք, այդ յե՛ս եմ թըռչում:
Գոմում յեզն ե բառաչում,
ջահիլ կոմիս ել միալար
ծայնակցում ե սիրահար:
Զիու բաշին՝ դեռահաս —
մի հանճ-փեսա, մի հանճ հարս,
յեվ մոծակներ — ագու տակ
պար են զալիս շարունակ:
Ծե՛ր ձիապան — չո՛ւռ ու ցա՛վ —
աղջիկը հո չուշացա՞վ:
Ախոռը տաք ե, ա՛յ կին,

պառկենք փափուկ հատակին:

Այ ջան, հա ջան, աման ջան —

շրշուկները վերջացան:

Կարկաչելով սառցի տակ՝

կյանք ե յեռում — պարզ, հրատակ . .

Տե՛ս, մըլավեց մեր կատուն,

վոր իր կինը շուտ գա տուն:

Բազե, կարապ ու սոխակ,

նապաստակ ու կաջաղակ,

սարյակ, արտուտ, կաքավ, լոր,

ցէց, արագիլ, լու, արլոր,

յեղնիկ ու գորտ ու բրզեզ —

վո՛ղջ ապրում են սիրակեզ . .

Գրկելով մի ելֆ հետը վազում ե անտառը: Մնացած ելֆերը վազեվազ անհետանում են: Ռաուտենդելայնը, մենակ ու մտախոհ մնում ե լեռնադաշտի մեջտեղում կանգնած: Փոթորիկը, կայծակն՝ ու անձրեվը դադարում են:

ՆԻԿԵԼՄԱՆ

Յեղնում ե ջրհորից

Բրե՛կեկեկե՛քս, բրե՛կեկեկե՛քս, այդ ի՞նչ ես
այստեղ կանգնել:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ա՛խ, սիրելի ջրրամարդ,

այնքան տրխուր, ա՛խ, յես այնքան տրխու՛ւր եմ:

ՆԻԿԵԼՄԱՆ, խորամանկ-խորամանկ,

Բրե՛կեկեկե՛քս, վո՞ր աչքով:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ ուրախուրախ,

Զախ աչքով, չե՞ս հավատում:

ՆԻԿԵԼՄԱՆ

Ե՛, իհա՛րկե, իհա՛րկե:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Մատներով շոշափում ե իր ձախ աչքը:

Ապա նայի՛ր՝ սա ի՞նչ ե:

ՆԻԿԵԼՄԱՆ

Ախրը ի՞նչը:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ինչ վոր կա իմ աչքի մեջ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Քո աչքի մեջ ի՞նչ կա: Ցույց տուր մեկ տեսնեմ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ինչ վոր փոքրիկ ջերմ կաթիլ ե ընկել մեջը:

ՆԻԿԵԼՄԱՆ

Յերկընքի՛ց:

Դե մոտ արի, թող վոր տեսնեմ՝ ինչ բան ե:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Արցունքի կաթիլը մատներով բռնած՝ պարզում ե նրան բոլորովին
ճերմակ, փոքրիկ ջերմ կաթիլ:

Ապա նայի՛ր:

ՆԻԿԵԼՄԱՆ

Աման, տես ինչ սիրո՛ւն ե:

Տո՛ւր ինձ — յեթե ուզենաս —

նուրբ-վարդագույն խեցիկի մեջ կը պահպանեմ անվրնաս:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Այ, դընում եմ քո ջրհորի կիսաբանդ
ափին: Սա ինչ բան է:

ՆԻԿԵԼՄԱՆ

Սիրուն աղամանդ:

Մեզը նայես՝ կը ցոլա այդ բարի մեջ
աշխարհի վողջ վիշտն ու խինդը սընամեջ:
Դրբան կասեն՝ արցունք:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Արցո՞ւնք: Ասա վոր
ես լացել եմ, թափել արցո՞ւնք անսովոր:
Պատմիր — տեսնեմ՝ ի՞նչ բան է դա, ծերունի:

ՆԻԿԵԼՄԱՆ

Սիրուն բալիկ, դե մոտ արի:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Զի՞ լինի

այսպես ասես: Ի՞նչ եմ անում քո փրթած,
հին ջրհորը — սըլկո՞ւն, ցելսո՞ւտ, աիը՝ թաց,
սարդի վոստա՞յն... Ե՛հ, ի՞նչ ասեմ, ջրհորըդ...
զըզվելի յեք — յե՛վ դու, յե՛վ դուք բոլորըդ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Բրե՛կեկեկե՛քս, ցավալի ե, հշմարիտ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Դարծյալ մի նոր կաթիլ, մի նոր մարգարիտ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Անծրեվային ժամանակ ե: Անծրելի
մի կաթիլ ե ընկել աչքըդ, յերելի:
Հուրհուրում ե վարպետ Տորը բարծր ու հեռու իր տեղում:
Մանկան աչքի թարթի նրման՝ քնքույշ շանթեր են տեղում
նրբա միրքից յեվ ներկում են հոծ-մըթամած ամպերը
մանիշակի կապույտ գույնով: Ագռավներն լամբերը
մոլեգնաբար ուղեկցում են նըրան յեվ գորշ յեթերից
յերելում են՝ շանթի շողից, թաց թեվերով՝ անծրելի
հորդ շեթերից:

Լըսի՛ր, մանկիկ, թե ինչպես ե մայր յերկերը ծարավ-
ծարավ ջուր ծըծում:

Կայծակներից, վոր հայթում են անհամար
ի՛նչ ուրախ են դալար ու ծառ յեվ հավ ու ճիվ իր
ծոցում:

Կվո՞ռքս: Փայլալ Այդպե՛ս: Վարպետն ահա հովիտ-
ներում իր համար

կըրակ վառեց հանդիսավոր
տասնըյերկու մըղոն հեռու լուսավոր
յեվ հըրացայտ մուրճը ձեռքին՝ աննրկուն
սասանում ե յեկեղեցին, զանգատունը խորտակում,
ծո՛ւխ ե յելնում... .

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Լըռի՛ր, լըռի՛ր, ասում եմ,
կամ ա՛յն պատմիր, ինչ վոր քեզնից ուզում են:

ՆԻԿԵԼՄԱՆ

Բրե՛կեկեկե՛քս, վոչընչություն, ճընճըղուկի հիմար ծա՛գ,
միտքըդ ի՞նչ ե, քեզ շոյում են, իսկ դու՝ ծակում հա-
մարծակ

Այս ի՞նչ կարգ ե. մարդ իր ձեռքիցն եկածն անի ան-
խընահ
վողջ — բեզ համար, վերջը՝ ապտա՞կ ըստանա:
Ճի՞շտ չեմ ասում: Ի՞նչ ես ուզում, դե ասա՛ վոր իմանամ:
Նեղացե՞լ ես, նորից :

ՌԱՌՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Վոչինչ, ինձ քիչ հանգիստ տուր մընամ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Բան չե՞ս ուզում իմանալ :

ՌԱՌՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Վոչ

ՆԻԿԵԼՄԱՆ աղերսելով

Գեթ մի խոսք,

մի բառ ասա :

ՌԱՌՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Կուզենայի ձեզնից հեռու լինել սոսկ:

Արտավաթոր աչքերը հառում ե հեռունները:

ՆԻԿԵԼՄԱՆ ցավագին, համոզիչ շեշտով.

Ի՞նչ արի բեզ, ախրը այդ ո՞ւր ես ուզում:
Մարդկանց յերկրի մասին հո չե՞ս յերազում:
Ըզգո՞ւյշ յեղիք. մարդ ասածըդ ի՞նչ ե վոր —
պատահաբար մեզ մոտ ընկած՝ թույլ ու մոլոր մի յեկվոր:
Մեր յերկրից յեվ վոչ, կարծես թե հյուր ե:
Կես՝ այստեղ ե, կես՝ ո՞վ գիտե թե ուր ե:
Մեր եղբայրը, մեր ծընունդը, ընտանին՝ —

Դառավ մեր խորթ ու թուլամորթ թըշնամին :
Վա՛յ մեր ազատ լեռնաստանը լըբողին,
վա՛յ նրբան, ով կը միջանա այդցեղին,
վոր փորում ե իր արմատը անդադար,
մինչեվ ուղն ու ծուծը տրկար, ցնորատար,
վորը, վորպես գետնախընձոր մառանում
ծիլ ե տալիս յեվ մութի մեջ թառամում:
Թույլ թեվերը պարզած՝ լո՛ւյս ե նա տենչում,
իսկ իր մորը՝ Արեվին չի՛ ճանաչում:
Գարնամուտի հողմի շունչը հիվանդ շյուղը կը բեկի,
բայց կը բաշխի դալար շյուղին զով ու կորով կըրկնակի:
Յեթե մարդկանց շարքը մտնես խենթի պես —
պարանոցիդ ջաղացի քար կը կապես,
գորշ գիշերի մըշուշի մեջ ընկըղմած՝
խընդալու տեղ — լաց կը լինես տըխրամած,
Մայր Արեվից կը նըզովվես յեվ հիվանդ
կը շըղթայվես ինչ վոր գըրբի հընավանդ :

ՌԱՌՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Մեր տատը քեզ իմաստուն ե համարում,
ապա նայի՛ր գետակներիդ գալարուն.
Ինչքան ել վոր առվի ջուրը լինի բարակ ու նըվազ —
միջկնույն ե, հասնելու յե մարդկանց վայրը վազեվազ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Բրե՛ կեկեկե՛քս, կվո՛ւաքս, իսկ դու մի՛ գընա,
հազարամյա ձերիս լըսիր ու մընա:
Առուները — հորտեք են, թո՛ղ իրենց ճամփով ընթանան՝
մարդկանց համար շոր լըվանան, ջաղացքարեր պըտույտ
տան,
կաղամբ, բանջար ջըրեն նըրանց պարտիզում,
կուլ տան. . . յախկ, իմ սիրտը խառնել ե ուզում . . .

Իսկ դո՛ւ, դըշխո Ռաուտենդելայն, վառ լուսին,
 պիտի դառնաս թագավորի ամուսին:
 Յես թագ ունեմ—բյուրեղից և թանկագին—
 իմ լուսավառ դահլիճի մեջ այն կը դընեմ քո գըլխին:
 Իսկ դահլիճիս կահ-կարասին՝ մարջանից և կապուտակ,
 սյունե՛ր, պատե՛ր, յեվ առաստա՛ղ, յեվ հատա՛կ:

ՌԱՌՏԵՆԴԵԼԱՅՆ

Թեկուզ թագըդ լինի շողուն շափուղից—
 ինչի՞ս և պետք: Տո՛ւր դըստերցըդ, դուրս գան իրենց
 նըկուղից

յեվ պարծենան: Իմ մագերը վոսկեշող—
 ահա՛ թագըս, վոր վոչ ծանր և, վոչ նընշող:
 Այն ի՛նչ կյանք և, թեկուզ բյուրեղ-մարջանում,
 քո ջըրհորի գորտ ու ձըկանց ջըրջանում,
 քո ջըրհորում, ուր ապրում և, տըղմում կորած, ով ասես՝
 մամուռ, յեղեգ, կվո՛ւաքս, կվո՛ւաքս, ծովասեգ:

Գնում ե.

ՆԻԿԵԼՄԱՆ

Ո՞ւր ես գընում:

ՌԱՌՏԵՆԴԵԼԱՅՆ, անփույթ ու անտարբեր.

Քո ինչ բանն և:

ՆԻԿԵԼՄԱՆ, վշտալից.

Չա՛տ իմ բանն և:

ՌԱՌՏԵՆԴԵԼԱՅՆ

Ուր վոր սիրտըս կամենա:

ՆԻԿԵԼՄԱՆ

Ո՞ւր և սիրտըդ կամենում, վո՛ր:

ՌԱՌՏԵՆԴԵԼԱՅՆ

Դե՛ս ու դե՛ն:

ՆԻԿԵԼՄԱՆ

Ի՞նչ, դե՛ս ու դե՛ն:

ՌԱՌՏԵՆԴԵԼԱՅՆ

Ձեռները վեր բարձրացնելով.

Յեվ յերկիրը մարդկային:

Շուտափույթ անհետանում և անտառում:

ՆԻԿԵԼՄԱՆ, ահաբեկ՝

Կվո՛ւաքս:

Հառաչանքով՝

Կվո՛ւաքս:

Որորելով գլուխը՝

Բրե՛կեկե՛քս:

Վերջ առաջին արար

1900 1901 1902

Ձանգ ծուլող Հայնրիխի տունը: Հին-գերմանական վոճով սեն-
յակ: Յետեվի պատի մի կեսը բռնում է խոր վորմախորշ, վորի մեջ
բաց ոջախ է շինված, վրան ել ծխնելույզ: Մարած ածուխների
վրա կաթսա է դրած: Բեմի առաջնակողմը դուրս յեկող պատի
մյուս կիսում՝ գոգավոր ապակիներով պատուհան, վորի տակ մահ-
ճակալ, Կողքի պատերից ամեն մեկում՝ մի-մի դուռ՝ ճախակողմ-
յանը դեպի արհեստանոցն է տանում, աջակողմյանը՝ նախասեն-
յակը: Առաջնակողմում, աջից՝ սեղան յեվ աթուղներ: Սեղանի վը-
րա՝ կաթով լի աման, բաժակներ, կլոր հաց: Սեղանից վոչ շատ
հեռու՝ կոնք: Սենյակը զարդարված է Ազամ Կրաֆտի, Պետեր
Ֆիշերի եվ այլ անդրիյագործների քանդակած արձաններով, վո-
րոնց մեջ աչքի է ընկնում վրան խաչելություն նկարած փայտե
խաչը:

Հայնրիխի զավակները, մեկը՝ հինգ, մյուսը՝ ինը տարեկան,
կիրակնորյա զգեստներով նստած են սեղանի մոտ՝ մի-մի թաս
կաթ առաջներին: Աջ կողմից մտնում է սենյակը Տիկին Մագ-
դան, նույնպես տոնախան հագուստով՝ ձեռին մի փունջ «յերկըն-
քի բանալի»¹, վաղ առավոտ է: Ըստը աստիճանաբար բացվում է:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Տես՛ք, յերևխայք՝ թե ի՛նչ եմ բերել:
Այգու յետեվի մարգագետինում
յես մի տեղ զըրտա — սըրանցով լի յեր:
Հիմա կարող ենք հայրիկի տոնի
հանդիսին վայել զարդեր ունենալ:

ԱՌԱՋԻՆ ՄԱՆՈՒԿ

Ինձ . . .

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՆՈՒԿ

Ինձ մի փընջիկ . . .

¹ Այդ անունն է կրում գերմաներեն զարնանածաղիկը:
Ծան. Թարգ.

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Յես ամեն մեկիդ
հինգ ծաղիկ կը տամ, վորոնցից մեկը
արդեն կարող ե, ինչպես դուք գիտեք,
յերկինքը բանալ: Խմե՛ք ձեր կաթը,
ձեր հացը կերեք, վոր շուտով գընանք,
մենք պիտի յերկար ճանապարհ կըտրենք՝
մատուռի ուղին յերկա՛ր ե ու գի՛րդ:

ՀԱՐԵՎԱՆՈՒՆԻ

Պատուհանից՝

Արդեն զարթո՞ւն եք, հարեւանուհի:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Ամբողջ գիշերը աչքըս չեմ փակել,
սակայն հոգսը չեր ինձ արթուն պահել,
հիմա յես այնքան թարմ եմ, վոր ասես
արջամուկից ել ավել եմ քընել:
Թրվում ե՝ որը պայծառ կը լինի:

ՀԱՐԵՎԱՆՈՒՆԻ

Իհա՛րկի:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Դուք ել մեզ հետ կը գաք, չե՞:
Յես բոլոր սրտով ձեզ խորհուրդ կը տամ:
Ուխտագնացութիւնն աջող կը լինի,
իսկ ուղին, յեթե միյասին գընանք
թեթեւ կը թըվա: Մենք, հարմարվելով
փոքրերի քայլին, դանդաղ կընթանանք:

Թեյեմ, ճիշտն ասած՝ հարեւանուհի,
յես ավելի շուտ թըռչել կուզեյի,
քան վոտով գընալ. այնքա՛ն անհամբեր
յեմ ուրախ եմ յես:

ՀԱՐԵՎԱՆՈՒՆԻ

Ձեր ամուսինը
գիշերըս մի՞թե չի վերադարձել:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Ինչպե՞ս եք կարծում. կարո՞ղ եք արդյոք
յեթե զանգն ամուր կախ տըված լինի,
մինչեւ համայնքը հավաքվի այսօր,
այդ ել մեծ բան ե այս կարճ միջոցում:
Ինչպե՞ս մարդ իրան խընայի, յերբ վոր
արագ գործ ե պետք: Յեթե իմ վարպետ
Հայրիխը մի ժամ ազատ ե յեղել
վոր կարողանար գլուխը դնել
խոտերի վըրա, աչքերը փակել,
քիչ հանգըստանալ — արդեն ունեմ հիմք
բարի Աստըծուն փառք տալու: Մեկ ե՛
քանի վոր մեծ եր այն աշխատանքը,
վարձը ավելի մեծ պիտի լինի:
Դուք չեք հավատա, թե ինչ բարեպաշտ,
պայծառ ու հըստակ ղողանջուն ունի
նորածոյ զանգը: Դուք ուշիմ յեղեք.
յերբ վոր առաջին անգամ իր ձայնը
զանգը կը հանի, վորպես ջերմ աղոթք,
յեմ վորպես բարոզ, հըրեշտակային
յերգեցողութուն, յեմ մըխիթարանք,
յեմ յերջանկութուն:

ՀԱՐԵՎԱՆՈՒՂԻ

Այո՛, իհա՛րկե:

Սակայն մի բան ե ինձ զարմացրնում,
ինքներըդ գիտեք, վոր մեր տան բակից
լերան կատարին լավ յերեվում ե
փոքրիկ մատուռը: Ասում եյին թե
զանգըն իր տեղում ամրացնեն թե չե,
պիտի մի ներմակ դրոշակ պարզեն.
բայց վոչ մի ներմակ դրոշ չեմ տեսնում:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Վոր մի լավ նայեք, անշուշտ կը տեսնեք:

ՀԱՐԵՎԱՆՈՒՂԻ

Վո՛չ, հաստա՛տ չըկա:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Թող հենց իսկպպես

ձե՛ր ասած լինի, ի՞նչ դուրս եկավ վոր:
Թե իմանայի՛ք դուք յեվըս ինձպես՝
ինչ աշխատանք ե պահանջում գործը,
ինչպպես վարպետը գիշեր ու ցերեկ
գըլուխ ե կոտորում, տըքնում ու ջանում,
հիմա այլեվըս չեյիք զարմանա
վոր վերջին մեխը կանուխ վորոշած
ժամին չի գամված, բայց գուցե հիմա
ծածան-դըրոշը տեսնում եք արդեն:

ՀԱՐԵՎԱՆՈՒՂԻ

Չեմ կարծում վոր դա՛ լինի պատճառը:
Ամբողջ գյուղում ա՛յն կարծիքն ե տիրում,

Թե մի փորձանք ե պատահել սարում.
յեվ չարագուշակ նըշան ե յեղել.
մի հոխարշտայնցի տեսել ե մի կին,
մերկ, վարագ հեծած, արտերի միջով
սըրարշավելիս: Քար ե առել վոր
խրիի տեսիլին, բայց տեղն ու տեղը
խեղճի դաստակը անզգայացել ե:
Ասել ե՝ սարի չար վոզիները
զայրացել են նոր զանգի պատճառով:
Զարմանալի յե, վոր դուք այդ մասին
վոչինչ չըգիտեք: Հա, տանուտերը
մի խումբ մարդկանց հետ վերեվ բարձրացավ:
Յեվ կարծում են, վոր...

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Յեվ կարծում են, վոր...

Տանուտերն արդեն վեր ե բարձրացել...
Ի սե՛ր Աստըծո...

ՀԱՐԵՎԱՆՈՒՂԻ

Դեռ վոչինչ չըկա,
վոչ մի հաստատ լուր, յեվ վոչ մի պատճառ
անհանգըստության: Յես ձեզ խընդրում եմ
գուր մի գըրգըռվեք: Դըժբախտությունից
վոչ վոք չի խոսում: Միյայն ասում են
իբրեվ թե զանգի սայլը կոտորել ե
յեվ զանգին ինչ վոր բան ե պատահել,
բայց ի՞նչ—չը գիտեն:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Յեվ ուրիշ վոչինչ:

Գըլուխը բարը. ինչ կուզե լինի՛

զանգը — վարպետը անվրտանգ մընա:
Փունջը առայժմ թող մընա կըրծքիս:
Բանի վոր վոչինչ հաստատ լուր չըկա
վերջըրեր, խնդրեմ, յերեխաներին...

Արագ-արագ դուրս ե հանում պատուհանից յերեխաներին:

Դուք հո կարո՞ղ եք...

ՀԱՐԵՎԱՆՈՒՆԻ

Այո՛, իհարկե,

կը տանեմ մոտըս:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴՍ

Ուրեմըն, խընդրեմ,

սըրանց ձեր տանը պահեք, վորպեսզի
յես արագ-արագ գընամ յեվ շուտով
տեսնեմ յեվ ոգնեմ ինչով կարող եմ,
գեթ այնտեղ լինեմ,

Շտապում ե դուրս գա:

Վորտեղ վարպետն ե:

Հարեվանուհին քաշվում ե պատուհանի մտից, լսվում ե ամ-
բոխի մըմուռը, ապա՝ Մագդալի բարձր ու սուր ձիչը:

Պատտորը շտապ-շտապ ներս ե մտնում, հառաչում ու սըր-
բում աչքերը, Վորոնող հայացքով նա նայում ե շուրջը, ապա՝ ա-
րագ-արագ բաց անում անկողինը: Յետո յետ ե վազում յեվ դրան
շեմքին դեմ առնում պատգարակին, վորի վրա պտկած ե Հայն-
րիսը: Ուսուցիչն ու Վարսավիրան բերում են պատգարակը: Ար-
կածյալի տակին կանաչ ճյուղեր են փռված: Տիկին Մագդան,
վորպես ամենախոր դիբախտության պատկեր, ապուշ կտրած,
զրեթե խելակորույս, գալիս ե Իրանց յետեվից: Նրան բերում են
մի տղամարդ եվ մի կին: Հայնրիսին պառկեցնում են անկողնի
մեջ:

ՊԱՍՏՈՐ, դիմելով Մագդալին:

Տիկին, Աստրծուն ապավինեցեք:
Սթափվեցեք: Վորպես մի նընջեցյալի
մենք նորան առանք մեր պատգարակը,
բայց հանապարհին նա ուշքի յեկավ,
յեվ, վորպես նորան բըննող բըժիշկը
ասաց թերեվրս կարող եք հուսալ:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴՍ

Հուսա՞լ: Տե՛ր Աստված: Մի վայրկյան առաջ
տակավին այնքա՛ն յերջանիկ եյի:
Ինձ ի՞նչ պատահեց: Ի՞նչ ե կատարվում
շուրջըս, վորտեղ են յերեխաները:

ՊԱՍՏՈՐ

Ապավինեցեք Աստրծուն, տիկին.
Նախ համբերություն, հեզություն ե պետք:
Իմացած յեղեր՝ ում կարիքը վոր
ալելի մեծ ե, ամենից առաջ
Աստված նորան ե ոգնություն բաշխում:
Նախախնամությունն եթե վորոշի
ժամանակավոր բուժում չառաքել,
կարող ե մի բան ձեզ մըխիթարել.
Ձեր ամուսինը հիմա գընում ե
հավիտենական բերկրության գիրկը:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴՍ

Մխիթարություն — այդ ի՞նչ եք խոսում
դուք, պարոն Պաստոր: Մի՞թե կարոտ եմ
մըխիթարության: Նա կառողջանա,
նա պետք ե բուժվի:

ՊԱՍՏՈՐ

Այո՛, հուսով ենք :
 Այլ կերպ կատարվի—արդ կը կատարվի .
 Աստուծո կամբը : Այսպես թե այնպես
 վարպետը յաղթեց : Ի ծառայութիւն
 ամենաբարձրյալ Աստուծո յելավ
 լերան կատարը, խավար ու ժերի
 բընակավայրը, վորտեղ կիրճ ու վիհ
 սպառնալիորեն բերան են բացել
 ընդդէմ Աստուծո : Վերջապես նայել
 ի ծառայութիւն Ամենաբարձրյալ
 Աստուծո ընկալ : Նա պայքար մըղեց
 նենգ, դժոխային վոզիների դեմ,
 վորոնք վախեցած իր զանգի զրվարթ
 ավետելիքից—դիվային դաշինք
 կըռելով՝ յելան
 նորա դեմ : Աստված կը պատժե նոցա :

ՎԱՐՍՍՎԻՐԱ

Այստեղ՝ մոտերքում մի հըրաշագործ
 կին կա, աղոթքով հիվանդ ե բուժում,
 ինչպես վոր Փըրկչի Առաքյալները :

ՊԱՍՏՈՐ

Փընտուեցե՛ք նորան յել գըտնելուն պես
 ներա բերեք այստեղ :

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Ի՞նչ ե պատահել,
 ի՞նչ եք աչք չըռած՝ նայում—դո՛ւրս եկեք :
 Հեռո՛ւ—պիղծ, պարապ հետաքըրքիրներ,

նըրան հայացքով հերի՛ք շոշափեք :
 Քաշե՛ք վերակը. նըրանք կըսպանեն,
 կամ, առնրվազըն—կաղտոտեն նըրան :
 Այդպե՛ս, հեռացեք, զընացեք հիմա
 լարախաղացի մոտ աչք չըռելու :
 Ի՞նչ ե պատահել նըրան, խուլ հո չե՞ք :

ՈՒՊՈՒՅԻԶ

Իրժվար ե ասել, թե ինչպես յեղավ .
 զանգի ընկնելուց պահելու պահուն,
 թե այլ կերպ,—մի բան անտարակույս ե .
 թե այն անդունդը տեսած լինելիք՝
 հիմա ձընկաչոր դուք փառք կը տայիք
 Աստըծուն անշուշտ : Քանի դեռ յելըս
 նա կենդանի յե, ուղղակի կասեմ—
 մի հըրաշք ե դա :

ՀԱՅՆՐԻԻ, Թուլ ծայնով

Ինձ քիչ ջուր տըվեք :

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ, կայծակի արագությամբ նետվելով—
 Դե դուրս, շուտ արեք :

ՊԱՍՏՈՐ

Եհ, բարի մարդիկ,
 այստեղ հանգիստ ե հարկավոր հիմա .
 Ոտար մարդիկ դուրս են գնում,
 Թե կարիք լինի իմ ոգնությանը ,
 գիտեք ինձ վորտեղ կարող եք գըտնել :

ՎԱՐՄԱՎԻՐԱ

Ինձ նըմանապես:

ՈՒՍՈՒՅԻԶ

Իսկ յես — չըմընամ:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Վո՛չ, վո՛չ վոք, վո՛չ վոք:

ՀԱՅՆՐԻԽ

Ինձ մի քիչ ջո՛ւր տուր:

Պաստորը, Ուսուցիչն ու վարսավիրան ցած ծայնով իրար հետ խորհրդակցելուց հետո՝ ուսերը թոթվելով յեվ գլուխներն որորելով քաշվում են:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ, ջուրը ձեռքին շտապելով Հայնրիխի մօտ.

Արթո՞ւն ես, Հայնրիխ:

ՀԱՅՆՐԻԽ

Սաստիկ ծարավ եմ:

Չո՛ւր տուր: Չե՞ս լրտում:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ, ակամս.

Մի քիչ համբերիր:

ՀԱՅՆՐԻԽ

Շուտով յես, Մագդա, լավ կը սովորեմ համբերող լինել, լոկ դու մի վայրկյան պիտի համբերես:

Իմում ե.

Շընորհակալ եմ:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Ա՛լա, Հայնրիխ, այդպես մի խոսիր, յերբ վոր այդպես ես խոսում յես վախենում եմ:

ՀԱՅՆՐԻԽ

Յերկյուղ կըրելու իրավունք չունես, վորովհետեւ դու պետք ե վոր ապրես, առանց ինձ ապրես:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Բայց յե՛ս չեմ կարող:

Յես չե՛մ կամենում ապրել առանց քեզ:

ՀԱՅՆՐԻԽ

Ինձ քո մանկական վըշտով մի՛ տանջիր, անվայել ե քեզ — չե՞ վոր դու մա՛յր ես: Ըմբռնիր խոսքս յեվ վիշտը զըսպիր:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Այդքան չոր ու չար մի վարվիր ինձ հետ գեթ հիմա:

ՀԱՅՆՐԻԽ

Ինչ վոր դու անվանում ես չոր ու չարություն — նըշմարտություն ե. քեզ պատկանում են մանկական փոքրիկ մահճակալների մեջ պառկածները: Այնտեղ պառկած են յերջանկությունըդ, կյանք ու կարիքըդ: Քո ամեն ինչը

հանգիստ ե առնում ճերմակ կըտավում:
Անեծք կը լինենր—այդպես չըլինենր:

ՏԻԿԻՆ ՄԱԳՊԱ

Աստված ոգնական: Յես քեզ ավելի
շատ եմ սիրում, քան յերեսաներին,
քան թե ինքըս ինձ, քան թե ամեն ինչ:

ՀԱՅՆՐԻԽ

Ուրեմըն վա՛յ ձեզ, խեղճ ու վաղաժամ
վորքացածներիդ: Յերիցըս վա՛յ ինձ,
ձեր բերնից հացն ու կաթը կըտրելու
դատապարտվածիս: Թունոտ ե լեզուս,
ըզգում եմ, սակայն, հենց լավը այդ ե:
Ե՛հ, մընաս բարով: Այսպես թե այնպես
քեզ պիտի հանձնեմ Նըրա խընամքին,
Վորից խուսափել վոչ վոր չի կարող:
Շատերը համար տենչալի լույս են
թըվացել մահվան խոր ըսավերները,
թող այդպես լինի նայել ինձ համար:

Մեղմ՝

Տուր ինձ քո ձեռքը: Շատ անգամ քեզ հետ
խոսքով ու գործով յես վատ եմ վարվել:
Յեկ բազում անգամ վիրավորել եմ
քո սերը, Մագդա, ներիր ինձ հիմա:
Յես այդ արել եմ առանց միտումի,
չըզիտեմ ինչ յեկ ով եր ըսախալում
քեզ ցավ պատճառել: քեզ հետ նայել ինձ—
ինչ վոր բան, սակայն, ըստիպում եր ինձ:
Ների՛ր ինձ, Մագդա:

ՏԻԿԻՆ ՄԱԳՊԱ

Ներեմ, բայց ի՞նչը:

Թե ինձ սիրում ես—այդպես մի խոսիր,
թե չե՛ արցունքըս չեմ կարող պահել:
Լավ ե նախատիր: Դու հո գիտե՞ս, թե
ի՞նչ ես ինձ համար:

ՀԱՅՆՐԻԽ, տանջված.

Վոչ, յես չըզիտեմ:

ՏԻԿԻՆ ՄԱԳՊԱ

Դու ինձ առնելով՝ հանեցիր վերել
յեկ մարդ դարձրիր: Յես խեղճ ու կրրակ
կյանք եյի վարում մի անձրեվաթոր
գորշ կամարի տակ: Դու ինձ դյութեցիր՝
պոկեցիր, տարար խընդության գիրկը.
յերեք ավելի ջերմ չեմ սիրել քեզ
քան այն ժամանակ, յերբ իմ հակատը
քո դաժան ձեռքով դարձրիր լույսին:
յեկ յե՞ս պիտի քեզ դեռ յեվըս ներեմ,
յեկ այն ամենի՞ համար, ինչով վոր
յես ամբողջ կյանքով պարտական եմ քեզ:

ՀԱՅՆՐԻԽ

Մեր հոգիների վոստայնը վորքա՛ն
տարորինակ ե խընքնվել իրար:

ՏԻԿԻՆ ՄԱԳՊԱ, շոյիով նրա մագերը, մեղմ՝
Թե այս կամ այն կերպ կարողացել եմ
քո սիրտը շահել, արհեստանոցում
կամ տանը կարճել քո ժամանակը,

Թե վոչ մի բանից դժգոհ չես յեղել,
մրտածիր, Հայնրիխ, յես, վոր վողջ հոգով
պատրաստ եմ յեղել—բեզ չգիտեմ ինչ—
ամեն, ամեն ինչ նըվիրաբերել—
բացի դրրանից բան չեմ ունեցել,
յերախտահատույց լինելու համար:

ՀԱՅՆՐԻՒ, անհանգիստ,

Մեռնում եմ, Մագդա, սակայն դա լավ ե.
Աստված այդպես ե բարվոր համարել:
Թե ես ապրեյի... Թերվիր դեպի ինձ...
ինձ ու բեզ համար իմ մահը լավ ե,
կարծում ես՝ դու վոր ծաղկել ես, այն ել
ինձ համար ծաղկել—ծաղկումը քո մեջ
յե՛ս եմ հարուցել: Սըխալ ես: Դա այն
Մըշտընջենական հըրաշագործն ե
արել, վոր գուցե վաղը՝ անտառում,
իր ձըմնունաշունչ հողմերով հազար
յեվ բյուր զարնային ծաղիկ մըտրակի:
Մահըս յերկուսիս համար ել լավ ե:
Յես ծեր եմ յեղել, յեվ Թույլ, յեվ տըծեվ.
զանգածույր, վոր ինձ ավելի լավ
չըստեղծեց, հիմա, ինձ դեն ե քըցում,
յեվ յես չեմ ցավում յերբ վոր նա Թափով
ինձ անդունդ նետեց իմ սեփական վատ
գործի հետեվից, յես ուրախ եյի:
Սյո, իմ գործը վատ եր յեվ վիժեց,
բարձունքի վայել զանգ չեր, վոր նըրա
ծայնին լեռները արծագանք տային:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Անհասկանալի բաներ ես ասում,
այնքան անվանի յեվ անբիծ մի գործ,
մետաղն՝ անարատ եվ ծայնը՝ հըստակ:
«Ի՛նչ հրեշտակային ծայնով ե յերգում
վարպետի զանգը» — ահա՛ Թե մարդիկ
ի՛նչ եյին ասում մի բերան յերբ վոր
ծառերի միջեվ դըրսումը կախված,
հանդիսավոր ծայն հանեց քո զանգը:

ՀԱՅՆՐԻՒ

Հովտում կը հընչի՛ — բայց վո՛չ լեռներում:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Սըխալ ես: Պետք ե լըսած լինեյիր
պաստորի խոսքը, վոր նա հուզմունքով
ասաց ժամկոչին. «տե՛ս Թե՛ լեռներում
վորքա՛ն փառավոր պիտի դողանջի»:

ՀԱՅՆՐԻՒ

Հովտում կը հընչի՛ — բայց վո՛չ լեռներում:
Սյո յե՛ս զիտեմ լոկ, իսկ պաստորը — վոչ:
Յես մեռնեմ պիտի յեվ իմ ուզածը
այդ ե, մանկիկըս: Դիցուք՝ դալլաքը
կարկատան անի յեվ, այսպես ասած՝
յես առողջանամ անկելանոցի
կամ, ի՛նչ իմանամ, ի՛նչ տեղի համար:
Կը նըշանակի՛ կյանքի խըմիչքը —
յերբեմըն դառը, յերբեմըն բաղըրը —
սակայն ջերմ ու Թունդ խըմելուս ատեն —
յես պիտի փոխեմ ջըրալի, Թըթու,

գաղջ ու փրչացած անհամ ապուրի՞:
 Ում վոր դա համով թըվա, թող խըմի,
 իսկ յես զըզվելով զըզվում եմ: Մո՛ւս կաց
 յեմ հանգիստ լըսիր, յեթե դու բժիշկ
 բերելու լինես, չկարծես թե նա
 կարող ե ինձ հին խընդուծյան ունակ
 դարձընել, կորով ներշնչել դեպի
 հին աշխատանքըս: Վոչինչ չի ոգնի:
 Վախճանըս, Մագդա, հասել ե արդեն:

ՏԻՎԻՆ ՄԱԳԴԱ

Ա՛յ մարդ, ասա ինձ, ի սեր Գրիստոսի,
 քեզ ի՞նչ պատահեց: Քե՛զ նրման մարդուն,
 յերկնային շնորհով լիուլի ոժտված...
 Քե՛զ, համբավավոր, ամենքից սիրված,
 վրան արվեստի հրմուտ վարպետիդ...
 Խանդավառ, անդուլ ջանասիրությամբ
 դու հարյուրավոր զանգեր ես ձուլել,
 վորոնք քո գուլքն են յերգում ու փառքը
 զանգատըներից: Չանգերից, ասես
 կործ բաժակներից, քո հոգու խորունկ
 գեղեցկությունն ե թափվում—վողողում
 անդ ու անդաստան: Դո՛ւ վոր ձուլվում ես
 իրիկնաժամի ծիրանի արյան
 յեմ արշալույսի վոսկիների հետ,
 հարո՛ւստ, վոր գիտես այնքան բան բաշխել,
 դու—Աստրծու ձայն: Դու վոր բաշխողի
 յերջանկությամբ ես արբել, մինչդեռ մենք
 աղքատի ցավով, մուրածո հացով,
 վողորմությամբ ենք գոհացել: Հայնրիկս,
 դո՛ւ յես քո գործի յեմ որի վըրա

հիմա ապերախտ աչքով նայողը:
 Դու ինձ ինչպե՞ս ես դեպի կյանք մղում,
 քանի վոր ինքքդ զըզվում ես կյանքից:
 Յեթե նույնիսկ դո՛ւ, կեղծ կոպեկի պես,
 կյանքը դեն քրցես, ել ի՞նչ ենք անում,
 այլեվըս կյանքը, մեր ինչին ե պետք:

ՀԱՅՆՐԻԻ

Լավ ըմբռնիր ինձ: Դու ինքքդ այնպես
 խորունկ ու պայծառ հնչեցիր հիմա,
 ինչպե՞ս չի հընչել յեմ վոչ մեկը իմ
 թափած զանգերից—շնորհակալությո՛ւն:
 Սակայն պետք ե վոր... դու ինձ հասկանաս,
 դե մեկ ել ասեմ: Իմ վերջին գործը
 անաջող յեղաւ: Մարդիկ իմ զանգը
 գոռում գոչյունով սար եյին հանում,
 իսկ յես—սըրտաբեկ՝ հետեւում եյի...
 Բայց նա վայր ընկավ, հարյուր վոտնաչափ
 ներքեմ գըլորվեց յեմ լուռալընում
 հանգչում ե հիմա: Ույժ ու արվեստիս
 վերջին արդյունքն ե հանգչում այն լըծում:
 Իմ ամբողջ կյանքը՝ այնպես, ինչպես վոր
 յե՛ս եմ անց կացրել ավելի լավ գործ
 չի ստեղծագործել յեմ չե՛ր ել կարող,
 յեմ ահա—իմ վատ գործի յետեմից՝
 դեն եմ շրպըրտում նայել իմ կյանքը:
 Արդեն նա լերան լըծում ե հանգչում,
 իսկ յես—իմ տըխուր գոյության վերջին,
 չընչին մնացորդը շուտով կըսպառես:
 Յե՛՛վ ափսոսում եմ, յե՛՛վ չեմ ափսոսում
 կորուստիս համար: Բայց անտարակույս.

զանգըս, ինչպես յեվ կյանքըս, այլեվըս
 չի վերադառնա: Յեթե կարոտըս
 դըրդեք ինձ դարձյալ թաղված ծայներին
 ունկընդըրելու, վայր յեկել եք
 վարպետիս տարել: Գոյությունն՝ այնպես,
 ինչպես վոր յե՛ս եմ ըմբռնել, ապրել—
 վիշտ ու զրոջումով, խելագարությամբ,
 մոլորությունով, մուայլով, բացախով
 յեվ մաղծով լիքը մի պարկ ե յեղել:
 Սակայն այլեվըս գոյությունն ա՛յդպես
 յես չեմ ըմբռնում: Ել հովիտներին
 սպասավորելը ինձ չի՝ հրապուրում:
 Հովտի հանգիստը առաջվա նըման,
 յեռուն արյունըս չի մեղմացնում:
 Այն որից ի վեր, յերբ յես վեր յելա
 բարձունքը, հոգիս վերելք ե ծրգաում,
 ծով-մըշուշից վե՛ր, պայծառ վոլորտում
 թափառելու յեվ վերին կորովից
 գործեր կերտելու: Բայց վորովհետեվ
 հիվանդ եմ յեվ . այդ չեմ կարող անել
 վորքան ել տանջվեմ—դարձյալ դեպի վեր
 յելնելու համար—կըրկին վայր կընկնեմ—
 ավելի լավ ե հիմիկուց մեռնեմ:
 Ուզածըս տեղում ապրելու համար
 յես պիտի ջահիլ լինեյի, լերան
 հըրաշք ու հեքյաթ ծաղիկների պես,
 ծառերի նըման՝ վոր յերկրորդ անգամ
 ծաղկելով՝ նոր-նոր պըտուղ են տալիս,
 պետք ե սըրտումըս առողջ ույժ ըզգամ,
 ձեռքերում՝ յեռանդ, տենչերում՝ յերկաթ,
 վոր խենթ ու խելառ հաղթական թափով
 մի նոր ու անլուր գործ հրաշակերտեմ:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Ա՛խ, Հա՛յնրիխ, Հա՛յնրիխ, յերանի՛ թե յես
 իմանայի, թե դու ուր ես ծըգաում,
 կարողանայի այն անմահական
 աղբյուրը գըտնել, վորի ջուրը քեզ
 ջահիլացըներ... Այն անմահական
 ջրրի յետեվից յես կը վագեյի,
 թող վոր վոտներըս վիրակալեյին,
 թող վոր մեռնեյի այն աղբյուրի մոտ.
 Ի՞նչ փույթ . միայն թե ջուրը քո շուրթին
 հասներ յեվ բաշխեր քեզ ջահիլություն:

ՀԱՅՆՐԻՒՅ, տանջալից, ուժասպառ, զառանցելով.
 Անո՛ւշ, սիրելի՛ս: Յես այդ չեմ ուզում:
 Ինձ խըմիչք չըտա՛ս: Արյուն ե բըղխում
 աղբյուրից, արյուն: Յես չեմ կամենում,
 թող ինձ յեվ գընա, թող վոր յես մեռնեմ:
 Ուշաթափվում ե.

ՊԱՍՏՈՐ

Նորից գալիս ե.
 Ինչպե՞ս ե, տիկին:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Ա՛խ, սաստիկ վատ ե՛ .
 ներքուստ խոր ցավով բըռնըված ինչ վոր
 անըմբըռնելի վըշտից մաշվում ե:
 Արդեն չըզիտեմ՝ ինչի՞ց վախենամ,
 կամ ինչի՞ վըրա հիմա հույս դընեմ:
 Արագ-արագ փաթաթվում ե շալի մեջ .

Ասում եյիք թե՛ ինչ վոր հրաշագործ
կին կա . . .

ՊԱՍՏՈՐ

Իմ այստեղ զալու պատճառը
հենց այդ է, տիկին: Նա բընակվում է . . .
Այստեղից հազիվ մի քանի մըղոն
հեռու . . . անունը ի՞նչ վոր . . . անունը . . .
Սահմանից ա՛յն դի . . . կարծեք ապրում է
սո՞նու անտառում . . . նըրա անունը . . .

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Վիտտաիխենն հո չի՞:

ՊԱՍՏՈՐ

Վո՛չ, ի՛նչ եք ասում:
Գա մի չար կին է, դեպի սիրուհի,
վոր պիտի մեռնի: Ժողովուրդն ահա,
ուր վոր է, զինված փայտով, քարերով
յեվ վառ ջահերով վերջ կը տա նըրան:
Այս դժբախտության մեղքը նըրանն է:
Իսկ իմ ասածը—տիկին Ֆինդեկին,
մի հովվի այրի՝ բարեպաշտ, շիտակ
յեվ ազնիվ կին է: Մի հընադարյան
դեղազիր է դա ժառանգել մարդուց,
վորը—շատերը հաստատում են այդ—
մի հըրաշալից բուժիչ ույժ ունի:
Գընա՞նք նըրա մոտ:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Հա, գերապատիվ:

ՊԱՍՏՈՐ

Հենց իսկույն յեվ ե՞թ:

Ներս է մտնում Ռաուտենդելայնը, աղախնու պես հագնված,
պտուղներ է բերել:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Ի՞նչ ես կամենում,
դու ո՞վ ես, մանկիկ:

ՊԱՍՏՈՐ

Միխելի վրանից
Սննան է յեկել: Բայց համը է, ավա՛ղ,
հարց ու փորձ չանեք: Նա պրտուղներ է
բերել ձեզ համար: Բարի աղջիկ է:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Ապա մոտ արի: Ինչ եյի ուզում . . .
Այն մարդը, մանկիկ, հիվանդ պառկած է.
յերը վոր նա զարթնի, ձեռքի տակ յեղիը,
խոսքըս հասկացա՞ր . . . տիկին Ֆինդեկին . . .
Այս չե՞ր անունը . . . ճամբան չափազանց
յերկար է, մինչդեռ տընից հեռանալ
հիմա չի լինի: Քիչ համբերեցեք,
տեսնեմ կարո՞ղ է հարեվանուհիս
ինձ փոխարինել . . . յես իսկույն յեվ եթ
կը վերադառնամ յեվ ինչպես արդեն
ասացի . . . Աստված, այս ի՞նչ կըրակ եր . . .

Դուրս է գնում:

ՊԱՍՏՈՐ

Այստեղ կը կանգնես, իսկ ավելի լավ
 կանես, թե նըստես: Խելոք պահիր քեզ,
 հարկ յեղած դեպքում պիտանի յեղիր,
 դու մի բարի գործ արած կը լինես,
 վարձըդ ել Աստված կը հատուցանի:
 Բայց, սիրո՛ւն աղջիկ, այն որից ի վեր,
 ինչ քեզ չեմ տեսել, վորքան փոխվել ես:
 Դե՛, խելոք յեղիր, բարեպաշտ մընա՛,
 փորովհետեւ մեծ գեղեցկութունն ե
 շնորհել քեզ Աստված: Ճըշմարիտ՝ աղջի,
 մարդ քեզ տեսնելուց... կարծես թե դո՛ւ յես
 յեվ կարծես—դու չե՛ս. մե՛կ ել—հեքյաթի
 դըշտո յես թըվում... Չեյի՛ հավատա...
 նըրա նակատը զովացնել ե պետք,
 հասկացա՛ր: Մարդը վառվում ե :

Դառնարով Հայնրիխին.

Աստված:

Թող քեզ բուժում տա

Պաստորը դուրս ե գնում:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Մինչ այդ յերկնոտ ու քաշվող՝ այժմ միանգամայն կերպարանա-
 փոխվում, արագաշարժ ու գործունյա ե դառնում:

Շողո՛ւն կայծեր—մոխրի միջից

բոցավառվեք կյանքի շրնչից:

Կարմիր քամի, յե՛լ վեր ու վես,

հեթանոս եմ քեզ պես յեվ ես:

Յեռա՛, յեռա՛, յերգի՛ր:

Ոջախի կրակը վառվում ե:

Ճոնվից կաթսան լայնաբերան՝

պղնձե ծանրը խուփը վորան:

Յեփի՛ր, ապուր, փըրփո՛ւր-փըրփո՛ւր,

ծուփ-ծուփ ծըփա՛, ա՛՛ո համ ու բույր :

Յեռա՛, յեռա՛, յերգի՛ր:

Այս խոսքերի վրա նա պղնձի կաթսայի խուփը բարձրացնում
 ե, յեվ գնում՝ ինչ կա մեջը:

Ապուր, մեջըդ ածեմ—կուզես—

մայիսի թարմ ծաղիկ ու սեզ,

դառնաս քաղցըր, թուևդ ու համով

խըմողիդ տաս ույժ ու կորով:

Յեռա՛, յեռա՛, յերգի՛ր:

Շաղգամը մաքրեմ յեվ ջըրի գընամ.

կոտը դատարկ ե: Բայց լուսամուտը

նախ բանամ—հետո: Ի՛նչ յեղանակ ե:

Վաղը քամի յե անելու, սակայն:

Հըսկա ծրկան պես մի յերկար ամպ ե

լեռների լանջին պառկել. վաղն եվ եթ

նա պատուեց թե չե—սոճու անտառի,

կիրճերի միջով խոլ վոգիները

շաչ ու շառաչով պիտի վայր թափեն

մարդկանց հովիտը: Այստեղ ել կրկուն

կո՛ւ-կո՛ւ յե կանչում, ծիծեռնակները

սլանում են, սուրում, յեթերում շողուն—

որը իր անշեղ շրջանն ե առնում:

Հայնրիխը բաց ե անում աչքերն ու ս՛վեռում Ռաուտենդելայնին,

Շաղգամը մաքրեմ յեվ ջըրի գընամ:

Աղախին եմ, չե՞, աննչիքըս շա՛տ—

բարի բոց—չանցնե՛ս, դե՛հ, կըպչեմ գործիս:

ՀԱՅՆՐԻՒ

Անասելի զարմանքով.

Ո՞վ ես . . . ո՞վ ես դու :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Արագ, կայտառ յեվ աներկյուղ.

Ռաուտենդելայն:

ՀԱՅՆՐԻՒ

Ռաուտենդելայն: Յես այդ անունը
յերբեք չեմ լրսել: Բայց քեզ մի անգամ
կարծես տեսել եմ: Վորտեղ եր, արդյոք:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վե՛րը, լեռներում:

ՀԱՅՆՐԻՒ

Միանգամայն ճիշտ:

Այո: Վորտեղ վոր տենդով բըռնըված՝
յես ընկած եյի: Բեզ եյի յես այն
պահուն յերագում, յեվ հիմա կըրկին
քեզ եմ յերագում: Մարդուս յերազը
տարորինակ ե հանախ լինում, չե՞:
Ահա՛ իմ տունը, իմ ոջախի՛ մեջ
կըրակ ե վառվում, ինքըս՝ մահացու
հիվանդ պառկած եմ իմ անկողնի մեջ:
Սա՛ — լուսամուտիս փեղկը — բըռնում եմ:
Դըրսում մի ծիծեռ թըռավ: Պարտիզում
սոխակները — վողջ խայտում են կայտառ:

Ներս ե թափանցում շեփորուկի յեվ
հասմիկի բույրը: Ամեն ինչ — մինչեվ
վերջին մանրուքը — տեսնում ու զգում եմ.
Վրայիս վերմակի վոստայնը, նըրա
ամեն մի թելը . . . միջի հանգույցը.
բայց այսու հանդերձ յես յերագում եմ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Դու յերագո՞ւմ ես, եհ, ինչե՞ համար:

ՀԱՅՆՐԻՒ

Վորովհետեվ յես յերագի մեջ եմ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Դու այդքան հաստատ հավատացա՞ծ ես:

ՀԱՅՆՐԻՒ

Այո՛: Վո՛չ: Այո: Վոչ: Ի՛նչ եմ խոսում:
Յերբեք չըզարթնել: Դու հարց ես տալիս՝
հավատացա՞ծ եմ, վոր յերագում եմ:
ինչ ել վոր լինի՝ իրականություն
թե յերագ — դու կաս, գոյություն ունես.
այդ յես ըզգում եմ, այդ տեսնում եմ յես.
Իմ մեջ, ինձնից դուրս — դա միջեվույն ե:
Թանկագին վողի: Գուցե իմ հոգու
ծընունդն ես — մեկ ե՛ քեզ այդ պատճառով
պակաս չեմ սիրում: Միլայն թե մընա՛ . . .

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վորքան կամենաս:

ՀԱՅՆՐԻՒ

Բայց սա յերազ ե :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ուշ դիր՝ տոտիկըս բարձրացընում եմ,
կարմիր կըրունկըս տեսա՞ր : Այո՞ : Լա՛վ :
Ահա մի ընկույզ : Յես վերցընում եմ
իմ բըթամատով յեվ ցուցամատով .
հիմա դընում եմ վոտիս տակ—տըրա՛խկ,
կոտըրվեց : Ա՞յս ել յերազ ե, այո՞ :

ՀԱՅՆՐԻՒ

Այդ Աստված գիտե :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Դե մեկ ել ուշ դիր .

հիմա պիտի գամ մոտըդ յեվ նըստեմ
անկողնիդ վըրա : Արդեն նըստեցի
յեվ իմ ընկույզի միջուկն եմ հիմա
հաճույքով ուտում : Քեզ հո չե՞մ նեղում :

ՀԱՅՆՐԻՒ

Վոջ, սակայն ասա՛ ի՞նչ ցեղից ես դու,
ո՞վ ե քեզ այստեղ ուղարկել, ի՞նչ ես
վորոնում ինձ մոտ : Հիմա յես ջարդված՝
տանջանքի կուլտ եմ յեվ իմ վախճանը
հաշվում եմ արդեն ակընթարթներով :

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Քեզ հավանում եմ : Ինքս չըգիտեմ,
թե ինչ ցեղից եմ, չըգիտեմ նայել,

թե ուր եմ գնում : Քրիկերի Տատն ե
մամուռի միջից առել յեվ մի վիթ
ինձ ծիծ ե տըվել : Ճահին, սար, անտառ,—
ահա՛ իմ տունը : Յերբ քամին վոռնում,
գոռում ե, գոչում, վայրի կատվի պես
մլավում, մըմըռում—հաճույքով ողում
ճախրում եմ, սուրում : Այնպե՛ս եմ խընդում,
հըրհվում այն պահուն, վոր արծազանք ե
զարթնում լեռներում : Անտառի Փամլը,
մամուռի վոզին, յե՛վ ջըրահարսը,
յե՛վ ջըրամարդը—քիչ ե մընում վոր
ծիծաղից ճաքեն : Չար եմ յես, սաստիկ
չանգառող ու կըծող : Ով ինձ նեղացնի
—թող ըզգու՛յշ կենա : Ասենք՝ յերբ վոր ինձ
հանգիստ են թողնում—դա քըջով ե լավ :
Չար եմ յեվ բարի—քըմահաճորեն .
մեկ՝ չար, մեկ՝ բարի, ե՛հ, նայած թե ինչ
քամի կը փըչի : Բայց քեզ սիրում եմ
յեվ քեզ չեմ կըծի : Յեթե ուզենաս,
կը մընամ այստեղ : Բայց լավ կը լինի,
յեթե դու հետըս մեր լեռները գաս :
Յեվ կը տեսնես թե՛ ինչպիսի խանդով
կը ծառայեմ քեզ : Յես քեզ ցույց կը տամ
աղամանդի յեվ հակինթի տեղը,
այն հընադարյան խորշերը, վորտեղ
թագուն հանգչում են զըմրուխտ, ամեթիստ
յեվ տըպազիոն : Ինչ վոր պատվիրես,
յես կը կատարեմ : Յես կամակոր եմ,
քըմահան յեվ ծույլ, անհընազանդ եմ,
նենզ յեվ ինչ ասես,—բայց միշտ կը նայեմ
քո թարթիչներին, վոր նախ քան մի բան

ցանկանաս, իսկույն քեզ «այո՛» ասեմ:
Թըփերի Տատը ա՛յն կարծիքին ե... .

ՀԱՅՆՐԻԻ

Իմ սիրուն մանկիկ, մի ասա՛ ո՞վ ե
Թըփերի Տատը:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Թըփերի Տա՛տը:

ՀԱՅՆՐԻԻ

Այո՛:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Զրգիտե՞ս:

ՀԱՅՆՐԻԻ

Մարդ եմ յես յեվ կույր:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Շուտով կը տեսնես: Ինձ տրված ե իմ
համբույրով մարդկանց աչքերը բանալ
յեվ թափանցել տալ յերկինք, հեռուներ:

ՀԱՅՆՐԻԻ

Դե վոր այդպես ե, ի՛մն ել բաց արա:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ:

Բայց դու քեզ հանգիստ կը պահես:

ՀԱՅՆՐԻԻ

Փորձի՛ր:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Համբուրում ե Հայրիկի աչքերը:

Աչքե՛ր, բացվեցե՛ք:

ՀԱՅՆՐԻԻ

Իմ անո՛ւշ մանկիկ,
իմ վերջին ժամին ինձ մոտ ուղարկված:
Ծաղկափրթիթ ճյուղ, վորին ինձ համար
հայրական ձեռքով կատված ե կրտրել
ինչ վոր հեռավոր գարունից, ս՛ դու,
ագատածին շյուղ,—յեթե առաջվա
մարդը լինեյի, վոր ցայգալուսին
բրունեց իր ուղին—քեզ ի՛նչ հրրեմվանքով
յես կը սեղմեյի հիմա իմ կրթքին:
Յես կույր եմ յեղել: Հիմա ինձ լույսն ե
առաջնորդում յեվ նախազգացումով
ըմբռնում եմ թե ինչ աշխարհից ես:
Վորքան ավելի յերկար եմ տեսքըդ
վայելում, այնքան ավելի յեմ յես
ըզգում, վոր այժմ իրող տեսնում եմ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Եհ, նայիր վրրաս, վորքան կամենաս:

ՀԱՅՆՐԻԻ

Ի՛նչ գեղեցիկ յեվ ի՛նչ առատ վոսկե
վարսեր ունես դու: Իմ չըքնա՛ղ յերագ,
դո՛ւ յեղիր հետըս—յեվ Աքերոնի
մակույկը աչքիս մի արքայական
նավ կը յերեվա, վորը ծիրանի

առագաստներով իր հանդիսավոր
 ուղին բըռնել ե ղեպի Արեւիլը,
 ղեպի նորածագ արեւի կողմը:
 Դու արեւմըտյան աննըշմար փըչող
 քամին ըզգո՞ւմ ես: Ա՛յն վոր հարավի
 կապույտ ծովերի կայտառ ջրերի
 ճերմակ փըրփուրը շոյելով, գալիս
 մեզ սըրբսկում ե ադամանդային
 թարմությամբ. այո՞: Ըզգո՞ւմ ես: Յեւ մենք...
 ընկողմած վոսկու յեւ կերպասի մեջ,
 մի յերանավետ հավատով լեցուն,
 այն հեռուններն ենք կըտրում, վորոնք մեզ՝
 գլխե՞ս ինչից են բաժանում... չե՞ վոր
 դու ճանաչում ես այն դալար կըղզին,
 վորի յեզերքին թըղթենիները
 կախել են իրենց ծանրը ճյուղերը
 յեւ թըրջում են լուրթ ու լույս ջրերում...
 Լըսում ես գարնան յերգասացների
 հըրեմանքը—նրանք մեզ են ըսպասում:

ՌԱՌՍԵՆԳԵԼԱՅՆ

Այո՛, լըսում եմ:

ՀԱՅՆՐԻԽ, ուշագնաց.

Լա՛վ, յես պատրաստ եմ:
 Յերբ վոր արթնանամ—ինձ մեկը կասի՝
 «յեկ ինձ հետ»: Հետո լույսը կը մարի,
 ներսըս կը սառչի: Տեսնողը—վորպես
 մի կույր, կը մեռնի: Բայց յես քեզ տեսա...

ՌԱՌՍԵՆԳԵԼԱՅՆ, կախարդական շարժումներով.

Ներհի՛ր, վարպետ: Արթնանաս—
 արդեն իմը կը դառնաս:
 Կապրի խոսքի յեւ մըտքի
 ույժը ցավըդ կամոքի:

Ոչախի առջեւ արարողություններ կատարելով.

Անթիվ գանձեր դյուլթված, թաղված գորշ հողում
 լույս աշխարհի են ձըգտում. խորքում չեն շողում:
 Շըները թող գուր գազազեն, հոխորտան—
 խրոխտ արվեստի առջեւ պիտի տեղի տան:
 Իսկ մենք զըվարթ կը ծառայենք, անթերի,
 ու մեզ փըրկի—ընդմիշտ նա մեզ կը տիրի:

Հայնրիխի մոտ շարժումներ անելով.

Մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք—դե յեղի՛ր նորոգ
 յեւ նորոգվելով—ազատ ու անհոգ:

ՀԱՅՆՐԻԽ

Այս ի՞նչ պատահեց: Այս ի՞նչ քընից եր,
 վոր յես արթնացա: Ի՞նչ առավոտի,
 ի՞նչ արեգակի շողն ե թափանցում
 բաց պատուհանից յեւ վոսկեգոծում
 իմ ձեռքը: Ո՞ գու՛, վաղորդյան զեփյո՞ւու:
 Այս քո՞ կամքով ե, յերկինք, այս ույժը
 իմ մեջ բըռընկել-յեռում յեւ կուրծքս
 նոր տենչով վառում: Քո ակնա՛րկն ե այս,
 կամքիդ նըշա՞նը: Յեթե այդպես ե,
 ապա թող վոր յես վեր կենալու պես՝
 քայլերըս դարձյալ դեպի կյանք ուղղեմ,
 վոր դարձյալ տենչամ, ձըգտեմ յեւ հուսամ,

խիզախեմ, ստեղծեմ ու ստեղծագործեմ:

Ներս և մոնում Տիկին Մագդան:

Այդ դո՞ւ, յես Մագդա:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Նա արթնացել և:

ՀԱՅՆՐԻԹ

Այո, այդ դո՞ւ յես, Մագդա:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Ուրախ: Նախագգացումով:

Ինչպե՞ս ես:

ՀԱՅՆՐԻԹ

Լա՞վ... այո՛, լավ եմ: Յես ապրելու յեմ:

Ըզգո՞ւմ եմ՝ կապրեմ այո՛, ըզգում եմ:

ՏԻԿԻՆ ՄԱԳԴԱ

Ծայր աստիճան ուրախացած:

Ապրո՞ւմ ե, ապրո՞ւմ... Ո՛, իմ սիրելի,

իմ Հա՛յնրիխ, Հա՛յնրիխ:

Ռաուտենդելանը հրացայտ աչքերով քաշվում և մի կողմ:

Վերջ յերկրոզ աւարի

ԱՐԱՐ ՅԵՐՐՈՐԻ

Լեռներում, ծյունակույտերից վրջ հեռու, մի խրճիթ—ապա-
կու պարսպ գործարան: Աջակողմյան պատը փոխարինող ժայռից
ջուր է ցայտում, վոր կավե խողովակով անցնում, թափվում է բը-
նական կերպով գոյացած քարավազանի մեջ: Յետի պատին կից
—դարբնի քուրա, ծխնելույզով յեվ փուքսերով: Չախ թեվի վրա,
խորքում, դարբասածեվ մուտքից լեռնային տեսարան է բացվում
—լեռան կատարներ, ճահիճներ, թավ անտառներ յեվ շատ մոտիկ—
մի գիրդ վիհ: Խրճիթի տանիքին՝ ծխի յերդիկ: Աջ թեվի վրա,
մեջտեղը, սրածայր ժայռ՝ միջից ճեղքված:

Յերեվում է, ինչպես Անտանի Ֆալնը, դեռ յեվս խրճիթ
չմտած՝ մի կոճղարմատ է քաշ տալիս, նետում դուրսը դարսված
փայտակույտի վրա, ապա՝ վարանելով ներս է մտնում յեվ շուրջը
այք ածում:

Նիկելմանը մինչեվ կրծքի ներքին մասը դուրս է գալիս
ջրհորից:

ՆԻԿԵԼՄԱՆ

Դե ներս արի, բռեկեկեկեքս:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Այս ո՞վ է:

ՆԻԿԵԼՄԱՆ

Մատանան այս ծուխն ու մուխը նրզովե:
Յե՛ս եմ:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Նրրանք դո՞րս են թրուել:

ՆԻԿԵԼՄԱՆ

Ո՛ւմ հետ ես:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Նրրա՛նք ելի՛:

ՆԻԿԵԼՄԱՆ

Հա՛, իհա՛րկե, հենց գիտես
այստեղ չեյի՞ն լինի:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Յես նոր տեսա վոր
հանապարհից անց կացավ մի պողավոր...

ՆԻԿԵԼՄԱՆ

Ե՛...

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

յեվ հետը սըղոց, կացին եր կըրում:

ՆԻԿԵԼՄԱՆ

Ի՞նչ եր ասում:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Թե դու շա՛տ ես կըռ-կըռում:

ՆԻԿԵԼՄԱՆ

Դե ախմախը ականջները թող գոցե:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Թե՛ կըռուցըդ—ուղղակի լաց ու կոծ ե:

ՆԻԿԵԼՄԱՆ

Շատ կը խոսի—կը բըրդգըզեմ ապուշին:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Տեղն ե, ծերուկ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Դըրան յեվ մեկ ուրիշին:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ, Ծիծաղում ե:

Անիծվա՛ծ ցեղ, խուժում ե մեր յերկիրը,
բանդում, կերտում, կըրում մեր հողն ու կիրը:
Բա՛ց են անում հանքը, յերան լայն ծոցում
հայում, ձուլում, կըռում, ծեծում ու ծեծում:
Վոգիններին լեռնասուն ու ջրասուն
լըծկան դարձրին. ինձ ու քեզ մարդ չեն ասում:
Նա վայելի մեր գեղազույն շեկ ելքին—
իսկ դու մրյայն հեռվից նայես այդ քեֆին:
Հիմա ելքը գողանում ե իմ վոսկին,
ծաղիկներըս յեվ քարերըս թանգագին,
վործաքարըս, ձյութըս, սաթի պես դեղին
յեվ բոլորը տանում—տալիս այդ տըղին:
Ծառայում ե նրան—գիշեր ու ցերեկ,
համբուրում ե, իսկ մեզ քըշում՝ թե կորե՛ք:
Վոչինչ, վոչինչ չի դիմանում նրա դեմ.
ամենածեր ծառերն անգամ նա արդեն
տապալում ե: Վողջ յերկիրը դղըրդում,
որ ու գիշեր յուրաքանչյուր անդրնդում
արծազանք ե ծնում մուրճի հարվածով,
իսկ բուրայի բոցկրտացող հուրը—ծով
նետում ե իր կարմիր բոցը յեվ այրում
ինձ, անգամ իմ հեռու տընում—բարայրում:
Ի՞նչ կըստեղծի հիմա նա—
սոսկ սատանան կիմանա:

ՆԻԿԵԼՄԱՆ

Քռեկեկեկեքս, յեթե նըրան դու շիտակ
հենց ա՛յն գըլխից ընկըղմեյիր ջըրի տակ,
զանգածույլը իրա գազան զանգի հետ
հիմա վաղուց արդեն փըթած եր անհետ:
Ա՛յ թե զանգը հանկարծ դառնար ըմպանակ,
փորով զառ են բըցում խաղի ժամանակ—
զառըս պիտի լիներ նըրա կըմախքից՝

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Աբաղաղի պոչը դըրան կը վըկայի դըժոխքից՝

ՆԻԿԵԼՄԱՆ

Իսկ դըրա տեղ՝ առողջ, ու ժեղ, դարբնոցում
մուրճի զարկով փոսկորներս ե թափանցում՝

Լալագին՝

Ել՛ֆի համար գործում ե թագ, մատանի,
շոյում այտը, ուսն ու կուրծքը գեղանի՝

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Տո՛ իմ այծի դունչը վըկա—սա խենթ ե.
Ժեր տեղովը լաց ե լինում—ինչ ե թե
վառվել ե մի մանուկ—ել՛ֆի կըրակով,
նա բեզ չի ել ուզում թողնել իրա քով:
Վոր այդպես ե՛ դու ել յեղի՛ր աչքաբաց,
ծովը խորն ե յեվ աշխարհըս—լայն ու բաց:
Մի ջըրահարս բըռնիր հետը զազազիր,
ապա՛ ապրիր փորպես փեղիր ու նագիր:

Վերջ ի վերջո կընտելանաս, փոր տըղին
ել՛ֆըդ շուտ-շուտ տանում ե դեպ անկողինս՝

ՆԻԿԵԼՄԱՆ

Նա կը մեռնի...

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Նըրա վըրա թըխադեմ
ել՛ֆիկը խիտ տարացել ե:

ՆԻԿԵԼՄԱՆ

Կը խեղդեմ...

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Ել՛ֆը արդեն ել չի ընկնի քո թաթը.
Տատը—տըղի կողմն ե պահում,—խսկ տատը
չի վախենում քո ցատումի աղմուկից.
Նըրա խելքը գընացել ե այդ գույզից:
Յեթե հույսըդ դնու չես կըտրել — ապա պիտի
համբերես.

ՆԻԿԵԼՄԱՆ

Անիծվա՛ծ խոսք:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Հերթով որեր կանցնեն եվ այդ
աներես:

մարդը—դարձյալ մարդ կը մընա: Յերեվի,
արբեցումը շատ ել յերկար չի՛ տեվի:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ, տակավին անտես՝ յերգելով գալիս ե՛:

Ծառին թառեց մի բըզկեզ,
գո՛ւմ, գո՛ւմ:

Բանկոնը՝ զոլ-զոլ բեհեզ:

զո՛ւմ, զո՛ւմ:

Ռաուտենդելայնը յերեփան ե գալիս:

Ի՞նչ այց ե սա: Դե լավ, բարի յերեկո:

Նիկելմանը լրվացե՛լ ե իմ վոսկին,

այծոտանին—կոճղարմատըս բերե՛լ ե:

Բե՛ռըս տեսեք՝ մեզը հըրաշք-իրեր կան .

հա՛՛ շըրջում եմ, հա՛՛ աշխատում անդադրում:

Ահա՛ լերան բյուրեղ, ահա՛ աղամանդ,

այստեղ ել մի վոսկու փոշով լիքը պարկ,

մեղրահաց ե այստեղ. . . այս ի՞նչ տապ որ ե:

ՆԻԿԵԼՄԱՆ

Իսկ տապ որին կը հաջորդի տապ գիշեր:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ճիշտ ե գուցե: Իսկ քո տա՛րրը—պաղ ջուրն ե .

ապա սուզվիր յեւ զովացիր ջըրհորում:

Անտառի Ֆալնը խելագարի պես ծիծաղում ե:

Նիկելմանը լռելոյսն սուզվում ու անհետանում ե .

Կը հասցընի այնտեղ, վոր մարդ չարանա:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Գրո՛ղը տանի:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ծուռնկիս կապն ել իջել ե,
ցավացնում ե վոտըս:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Կուզե՞ս—արծակեմ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ի՞նչ քո բանն ե: Գընա—կորի՛ր, փոքրիկ Ֆալն,
հոտ ե գալիս քեզնից, հետըդ այնքան շատ
ճանճ ե լինում—ասես ամպ ե քո շուրջը:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Ճանճերս են լավ, թե քո շուրջը խըռնըվող
թիթեռները, իրենց փոշոտ թեփերով,
վոր հըպում են շուրթերիդ ու մազերիդ,
գիշերներն ել—թառում կըրծքիդ, ագէրերիդ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ, ծիծաղում ե .

Սրբան տես ե՛: Լա՛վ, հերիք ե:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Գիտե՞ս ինչ,

այս անիվը նըվիրիր ինձ: Տեսնես դա ի՞նչ անիվ ե:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ինքըդ ինձնից լավ գիտես այդ, սրբիկա՛:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Չանգի սայլը Ֆալնը կոտրած չըլիներ—
ազնիվ բազեն հո չե՛ր ընկնի քո ցանցը:
Շընորհակալ յեղիր, տո՛ւր ինձ այդ բանը:
Չյութած թոկով յես մի լա՛վ կը փաթաթեմ,
կըրակ կը տամ յեւ անդունդի գիրդ գըլսից
կը գըլորեմ—գընա ներքեւ լեռն ի վա՛յր:
Ա՛յ քեզ հանա՛ք:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Հետն ել հրրդեհ գյուղերում:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Այո՛, զոհի կարմիր կըրակ, կարմիր բոց:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Բան չի դուրս գա: Լավ կը լինի—բո գըլուխը ազատես:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Այդքան վըռա՞գ: Պիտի գընա՞մ, իսկապե՞ս: Ասա, զոհն, ի՞նչ ե շինում վարպետդ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Գործ ե կերտում:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Հազվագյու՞լա բան: Միշտ հետը՞
լինի: Գիշեր—համբույր, ցերեկն—աշխատանք,
ի՞նչ եմ ասում, կը ծուլի մի ուրի՛շ զանգ:
Հովիտը—սար, սարը—հովիտ դարձրնի,
իսկոյն յեվ եթ հըրաշք-յերկը կը ծընի,
յերկդիմի բան՝ կես-աստված ու կես-գազան,
յերկնի ծաղր ու յերկրի փառքը սըրբազան:
Արի, ելֆիկ, տըկողնուտը տանեմ քեզ—
ինչ վոր նա յե անում—կանեմ նայեվ յես:
Նըրա հետ մե՞ծ պատվի պիտի դու համեսս,
չըկարծես թե փըրկիչ ե վոր կըծնես:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Փուչ-կենդանի՛, թե իմ ընտրած մարդու դեմ
ելի խոսես—բո աչքերը կը հանեմ:
Գիշերը՝ յերբ մուրճի զարկերն են հընչում—
ծեզ անեծքից ազատելու համար ե նա մարտընչում:
Ձե՞ վոր անեծք կա մեզ վրա, վոր ահեղ
իշխում ե մեր լեռնաստանում ամեն տեղ:
Ով ել լինես—դու անգոր ես այս վայրում,
վորտեղ հիմա մեր վարպետի արի վոզին ե տիրում:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Ի՞նձ ինչ: Վողջո՞ւյն բո ամուսնուն: Թե մի ո՞ր
կարողացա մըտնեմ մոտը՝ հանքահո՞ր...

Ծիծաղելով հեռանում ե:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Կարճ պատգամից հետո:

Ձըգիտեմ թե ինչ եղավ ինձ՝ տո՞թ, թախի՞ծ...
Գընամ մոտիկ Ձյունադաշտը՝ զով կը լինի ան-
ծավում:
Թող նորահալ, սառցի պես պաղ-կանաչավուն ջու-
ըը ինձ
Թարմացրնի: Վոտըս ո՞ծի դեմ առավ:
Ծըծումբի պես կանաչ քարի վըրա պառկած՝—
բարձրերում—
տաքանում եր: Քիչ եր մընում ինձ խայթի:
Ախ, ինչ ծանր ե: Քայլերի ծա՛յն՝ սո՛ւս, ո՞վ ե:

ՊԱՍՏՈՐ

Լեռնազգեստ հագած, քրտնաթոր, լարվածությունից-շընչա-
կըտուր՝ յերեվան ե գալիս դրան առջեվ:
Այստե՛ղ, պարոն փըրփուրի պետ, իմ յետեվից:
Դյուրին գործ չեր, բայց յես ահա ամուր վոտով
կանգնած եմ:

Այո՛, հանուն Աստծո սիրո ընծեռնեցի այս գործը—
Աշխատանքըս բյուրապատիկ վարձատրություն կըս-
տանա—

Թե ինձ, իբրեւ բարի հովիւի, աշողվի
մի մոլորված ոչխար փրկելի: Արդ՝ հառա՛ջ:

Ներս և մոռում:

Ո՞վ կա այստեղ:

Նկատելով Ռաուտենդելին.

Դու այստե՞ղ ես: Հենց այդպես ել գիտեյի:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ի՞նչ եք ուզում այստեղ.

ՊԱՍՏՈՐ

Այդ դու կիմանաս:

Աստված վրկա, իսկույն յեւ եթ կիմանաս,
հենց վոր շունչըս տեղը գա
յեւ բրբտինքըս չորանա,
բայց դու, մանկիկ, առաջ ասա՝ մենա՞կ ես:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Դու ինձանից հարցընելու բան չունես:

ՊԱՍՏՈՐ

Սրբան տեսե՛ք: Վատ չե՛ր, վատ չե՛ր: Այդ ձեւով
ցուցադրում ես քո իսկական յերեսը:
Առավիւ լաւ՝ կը դուրանա իմ գործը:
Յեւ դու . . .

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Մարդո՛ւկ, ըզգո՛ւյշ կաց:

ՊԱՍՏՈՐ

Ձեռնամած ընդառաջ ե գնում:

Դու անգոր ես իմ դեմ: Ամուր յեւ մաքուր ե իմ սիրտը:
Յես ահ չունեմ: Նա, վոր իմ ծեր անդամներին ույժ
բաշխեց

բարձրանալու ձեր վորջը—

Նա ինձ հետ ե, ըզգում եմ:

Դո՛ւ, սատան ես, զուր ես սպառնում յեւ իզուր

մի՛ շքուայլիք քո սիրային արվեստը:

Դու յես նորան քո լեռները գրավել:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ո՞ւմ:

ՊԱՍՏՈՐ

Ել ո՛ւմ՝ վարպետ Հայնրիխին:

Դու դյուլթանքով դըժոխային, սիրո անուշ խըմիչքով
հասցըրիք ա՛յն որին նորան, վոր քեզ շան պես յեն-
թարկվի:

Գերդաստանի տե՛րը, մի մարդ. վոր այլոց եր որինակ,
վորը մինչեւ ուղն ու ծուծը բարեպաշտ եր . . . Տե՛ր
Աստված . . .

Մի հասարակ սարի աղջիկ նորան բրունի-փաթաթի
զոգնոցի մեջ յեւ յետեւից քաշ տա—ուր վոր կամենա . . .
Դա՛ռը ամոթ մեր քրիստոնյա համայնքին:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Թող ավազակ լինեմ—քեզնից յես հո բան չեմ գողացել:

ՊԱՍՏՈՐ

Ինձնից բա՛ն չես գողացել հա՞: Յեպերելի՛ արարած,
վոչ թե միայն ինձնից, նորա զավակներից, ամուսնուց,
այլևս ամբողջ մարդկու թյունից խրլեցիր դու այն մար-
դուն:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Հանկարծակի կերպարանափոխելով, հրճվանքով՝

Հե՛յ, առջեվդը նայի՛ր—տես ո՛վ ե գալիս:
Նըրա ազատ յեվ հավասար քայլի ծայնը չե՞ս լրատւմ:
Յեվ քո թըշվառ նախատինքը դու հրճվանքի չե՞ս փո-
խում:

Դու Բաղբերի՛¹ աչքի փայլը չե՞ս ըզգում,
չե՞ թափանցում անդամներիդ մեջ այդ փայլը, պարի
պես:
Խոտն ե անգամ ուրախանում, վոր նա վոտով ճըխում ե:
Արքա յե, վոր մերձենում ե, յեվ դո՛ւ, աղքատ, չե՞ս հրըն-
վում:

Ուխտա՛յ ուխտա՛յ: Հե՛յ, ջա՛ն վարպետ, վողջո՛ւյն քեզ:

Ընդառաջ ե վազում յեվ նետվում նրա գիրկը:

¹ Բաղբերը — գարնան աստվածն ե, ամենապայծառն ու հեղը բո-
լոր աստվածներից, նրա մայրը—Ֆուեյան — բոլոր բույսերից յերդում ե
վերցրած լինում, վոր վոչ մեկը նրանցից չվնասի իր վորդուն, այդ
պատճառով ել վոչ մի նետ, վոչ մի նիզակ չեր կարող խոցել նրան:
Մի փոքրիկ բույս սակայն մոռանում ե մայրը, վորից նե՛նզ Լոկին նետ ե
շինում յեվ Բաղբերի կուր յեղբոր—Դորերի միջոցով սպանում ե աստ-
վածներից ամենաարդարին: Ե՛րան. Թարգ.

ՀԱՅՆՐԻԻ

Աշխատանքի գեղանկար զգեստով, մուրճը ձեռքին, յերե-
վան ե գալիս Ռաուտենդելի ձեռքը բռնած նա մոտենում ե յեվ
ճանաչում Պաստորին:

Բարի գալո՛ւստ, հազա՛ր բարի:

ՊԱՍՏՈՐ

Աստված որհնե քեզ, վարպետ:

Սիրելիդ իմ, հրնարավո՛ր բան ե սա:
Չինարի պես կանգնած եք դուք ուժով լեցուն յեվ
խորոխտ,
մինչդեռ դուք նոր մաշված, զուևատ, ուժասպատ:
յեվ գրրեթե անհույս հիվանդ պառկած եյիք ան-
կողմում:
Թըվում ե թե Բարձրյալն ե ձեզ գրթացել,
ջերմացրել ձեզ իր սիրո հրգո՛ր շընչով, վորպեսզի
վայրկենաբար յերկու վոտով ձեր մահնից վեր ցատ-
կելով՝
կարողանաք Դավթի նրման ծընծղա զարկել ու
պարել
յեվ հըրճվանքով ձեր Տիրոջ ու Փրրկչի գովըր որհ-
ներգել:

ՀԱՅՆՐԻԻ

Այդպես ել ե՛, ինչպես վոր դուք ասում եք:

ՊԱՍՏՈՐ

Հըրա՛շք եք դուք:

ՀԱՅՆՐԻԻ

Ճըրմարիտ ե այդ յեվըս:
Վողջ եյութեամբ ըզգում եմ յես հըրաշքը:
Գընա՛, զինե՛ի բեր, սիրելիս, Պաստորը թող ճաշակի:

ՊԱՍՏՈՐ

Շնորհակալ եմ... վո՛չ... վո՛չ հիմա... վո՛չ այսոր:

ՀԱՅՆՐԻԽ

Քե՛ր, սիրելիս, գընա՛: Գինին լալն ե, յեղեք ապահով:
Ձեր կամքըն ե, սակայն: Նըստեք, խընդրում եմ:

Այն որից վեր, ինչ յես ինծնից թոթափեցի հիվանդու-
թյան ամոթը—

մեր առաջին յեվ խընդագին հանդիպումն ե յերեկոյան
այս պահուն:

Չեյի կարծում, վոր իմ աշխույժ աշխատանքի վայրում
ծեզ

յես ամենից առաջ պիտի վողջունեմ:

Յեվ կըրկնակի ուրախ եմ յես: Դա ապացույց ե վոր դուք
կոչում, կորով, սեր ունեք,

վոր վարձկանի կապանքները թոթափել եք բըռունցքով
յեվ Աստըծուն վորոնելու համար—մարդկանց ծառա-
յելուց փախել եք:

ՊԱՍՏՈՐ

Փա՛ռք Աստուծո. առաջվանն եք մընացել:
Սուտ են ասում մարդիկ այնտեղ ներքեվում՝
թե առաջվա մարդը չեք դուք, փոխվել եք:

ՀԱՅՆՐԻԽ

Նույնն եմ դարձյալ յեվ ա՛յլը:
Լույս ու Աստված կը մըտնեն ներս—պատուհանը վոր
բանաք:

ՊԱՍՏՈՐ

Լավ խոսք եր այդ:

ՀԱՅՆՐԻԽ

Լավագույնը — չըգիտեմ:

ՊԱՍՏՈՐ

Յես ավելի լավը գիտեմ—սակայն վատ չեր նայեվ այդ:

ՀԱՅՆՐԻԽ

Թե կամենաք հիմա պարզել ձեր ձեռքը—
աքաղաղով, ձիյու գըլխով յեվ կարապով յերդվում եմ
վոր ի բոլոր սըրտե իբրեվ բարեկամի կընդունեմ
յեվ ձեր առջեվ լայն կը բանամ հոգուս գարնան դըռ-
ները:

ՊԱՍՏՈՐ

Խիզախ կերպով բացեք: Դուք այդ բանը հաճախ արել եք
յեվ ինձ արդեն բավականին ճանաչում եք այդ կողմից:

ՀԱՅՆՐԻԽ

Այո՛, յես ձեզ ճանաչում եմ: Սակայն յեթե անձանոթ
ել լինեյի
յեվ իմ առջեվ բարեկամի դիմակի տակ մի ստոր մարդ
նըստած լիներ յեվ կամենար շահագործել հոգուս ազ-
նիվ շարժումը,

— մեկ ե՛ վոսկին վոսկի յել միշտ կըմընա—
յեվ չի կորչի անգամ մատնիչ-մարդու հոգու աղտի մեջ:

ՊԱՍՏՈՐ

Այնու հանդերձ, վարպետ, այն ի՞նչ տարրորինակ յեր-
դում եր:

ՀԱՅՆՐԻԽ

Աքաղաղը յեվ կարա՛պը:

ՊԱՍՏՈՐ

Մեկ ել՝ ձիյու գըլուխը:

ՀԱՅՏՆՐԻԽ

Ինչպես միտքըս ընկավ—այդ յես չըզիտեմ:
Յեկեղեցու արևորակերպ հողմացույցը, յերեվի,
վոր փայլում ե արեվի տակ վերեվում,
գուցե ձիյու գըլուխը մեր հարեվանի տան կըտեր,
կամ կարապը, վոր նոր թըռավ լուրթ յեթերում ու կո-
րավ—

մեկն ու մեկը քրցեց միտքս, յերեվի:
Վերջ ի վերջո միյեմնույն ե: Գինին արդեն այստեղ ե:
Հիմա՝ խոսքիս ամենախոր իմաստով—
խըմում եմ. ի՛մ յեվ քո՛, յեվ ձե՛ր կենացը:

ՊԱՍՏՈՐ

Շնորհակալ եմ, ի պատասխան կասեմ սոսկ՝
առողջություն կը կամենամ բուժվածիդ:

ՀԱՅՏՆՐԻԽ, անց ու դարձ անելով.

Բուժվել եմ յես, վերածընվել, ըզգում եմ վողջ եյու-
թյամբ
Այդ ըզգում ե կուրծքըս, վորը այնքան ուրախ բարձ-
րանում,
այնքան ուժգին ու խընդագին շունչ ե առնում, վոր
կարծես
իմ սըրտի մեջն ե թափանցում զորությունը մայիսի:
Ըզգում ե այդ իմ բազուկը յերկաթյա
յեվ իմ ձեռքը, վոր բազեյի հանկի պես
բաց ու խուփ ե լինում պարապ ողի մեջ—
ըստեղծագործ խանդի թափից անհամբեր:
Տեսնո՞ւմ եք դուք տահարը իմ պարտիզում:

ՊԱՍՏՈՐ

Ի՞նչ եք ուզում ասել:

ՀԱՅՏՆՐԻԽ

Նայեք՝ այնտեղ ել մի ա՛յլ հըրաշք:

ՊԱՍՏՈՐ

Յես չեմ տեսնում:

ՀԱՅՏՆՐԻԽ

Յես այն ծառն եմ ակնարկում,
վոր իրիկվա ծաղկուն ամպի յե նըման,
վորովհետեվ նըրա վըրայ Ֆրեյյեր¹ Աստվածն ե իջել:
Վոր մոտենաք նըրա բընին՝ ի՛նչ հեշտագին ու խորունկ
սոսավյունի ձայն կը լըսեք յեվ կը տեսեք անհամար
ժիր մեղուներ նըրա բուրյան ծաղիկների վըրա արբած
ու բըզզուն:
Ըզգում եմ, վոր յես նըման եմ այդ ծառին
հոգուս մեջ ել Ֆրեյյեր Աստվածն ե իջել,
ինչպես նըրա հյուղերին,
հոգուս մեջ ել ծաղիկներ ե վառել նա—
ո՛ւր են ծարավ մեղուները— դե թող գա՛ն:

ՊԱՍՏՈՐ

Հետո՞, հետո՞—յես ձեզ սիրով լըսում եմ,
ծաղկած ծառն ու դուք—կարող եք պարծենալ,
հասնելու ե ձեր պըտուղը արդյոք թե վոչ — Աստծու
կամբից ե կախված:

ՀԱՅՏՆՐԻԽ

Ի՛նչն ե, վոր չի կախված նրանից, բարեկամ:
Նա ինձ անդունդ նետեց, քըսան մըղոն խոր—

¹ Ֆրեյյերը—արեվի, յեթերի, անձրեվի, բույսերի, պտղաբերու-
թյան աստվածն ու պայծառ ելիքերի պեսն ե, Ծան. Թարգ.

Նա ինձ նորից բարձրացրեց յեվ ահա յես ծաղկափր-
թիթ կանգնած եմ:

Նըրանից եւ ծառ ու ծաղիկ, ամսն ինչ,
աղոթեցե՛ք վո՛ր նա որհնի ամառը:
Ինչ վոր իմ մեջ այժմ աճում ե, արժե վոր
բարգավաճի, հասունանա, նըշմարիտ՝
սըրա պես գործ յերբեք յես չեմ հըղացել,
մի ընտիր զանգ—ծուլված ազնիվ մետաղից,
վոր ինքն իրեն պիտի հընչի՛, ղողանջի՛:

Յերբ փողակերպ ծալած ձեռքըս յես դընում եմ ա-
կանջիս—
հընչյուններ եմ լըսում, իսկ յերբ փակում եմ իմ աչքերը—
հըստակ ձեվի մեջ մարմնացած պարզ ու պայծառ
տեսնում եմ:

Ահա՛—ի՛նչ եմ վորպես ընծա ըստացել.
հենց ա՛յս եյի վորոնում յես տանջանքներով անանուն,
յերբ վոր դուք ինձ կոչում եյիք յե՛վ յերջանիկ, յե՛վ
վարպետ:

Յես յեղել եմ վարպետ բայց վոչ յերջանիկ,
իսկ հիմա յե՛վ յերջանիկ եմ յե՛վ վարպետ:

ՊԱՍՏՈՐ

Յերբոր մարդիկ ձեզ վարպետ են կոչում — սիրով լը-
սում եմ,
զարմանք բան ե, վոր ինքներդ եք դուք ձեզ վարպետ
անվանում:

Ձեր գործը վո՛ր յեկեղեցու համար ե:

ՀԱՅՆՐԻԽ

Յեվ վոչ մեկի:

ՊԱՍՏՈՐ

Ո՞վ ե տրվել ձեզ պատվերը:

ՀԱՅՆՐԻԽ

Նա՛, ով վոր այն սոճուն հրաման տրվեց վոր
խորխորատի գիրդ յեզերքին փարթամորեն բարձրանա:
Հուրջ եմ ասում. այն ձեք հիմնած մատուռը
ավերվել ե մասամբ, մասամբ՝ այրվել ե:
Այդ պատճառով յես բարձունքում ուզում եմ նոր հիմք
ըրցեմ,
նո՛ր հիմք մի նո՛ր տաճարի:

ՊԱՍՏՈՐ

Վարպե՛տ, վարպե՛տ: Սակայն վիճել չեմ ուզում
Նախ յեվ առաջ, իմ կարծիքով. իրար մենք չենք հաս-
կանում:
Վորովհետեվ ձեք նոր գործր... կարճ կապենք՝
կարծեմ այնքան թանկագին ե, վոր...

ՀԱՅՆՐԻԽ

Այո՛,

թանկագին ե:

ՊԱՍՏՈՐ

Մի այդպիսի ընտիր զանգ...

ՀԱՅՆՐԻԽ

Կոչեք, ինչպես կամենում եք:

ՊԱՍՏՈՐ

Ինքներդ այդպես չասացի՛ք:

ՀԱՅՏՆՐԻՒ

Այդ անունը պիտի կրրի այն, ինչ այդպես կոչեցի,
միյակը, վոր կամենում ե յեվ կարող ե այդ անունը տալ
իրեն:

ՊԱՍՏՈՐ

Ո՞վ պիտի ձեր գործի համար վըճարի:

ՀԱՅՏՆՐԻՒ

Իմ գործի համար, ո՞վ կը վճարի: Ո պաստոր, պաստոր:
Բա՛խտն եք կամենում բախտավորացնել, վա՛րձը վար-
ձատրել:

Փոյթ չե՛ ընտիր զանգ կոչեցեք գործը՝
քանի վոր ինքս եմ այդպես անվանել:
Բայց վոչ մի վանքի զանգակատանը
չի յեղել երբեք նրրա նըմանը:

Չայնի զորությամբ հավասար ե նա գարնան ամպ-
րոպին,

վոր մարգերն ի վեր թրնդում ե թափով:
Նա փոթորիկի շեփորների պես կը խրլացրնի
ձեր տաճարների բոլոր զանգերը յեվ խանդավառված՝
բուռըն բերկրությամբ—արար-աշխարհին
իմ զանգը լույսի վերածընության լուրը կափետի:
Նախամայր Արեւ: Քո կրրծքի կաթը
ծըծած իմ՝ յեվ քո զավակների պես, նայեվ ա՛յս մեկը—
շնորհիվ անձրեվի ջերմ սընընդարար յեվ հորդ շիթերին
գորշ հողից պոկված իր գալիք խինդը
պիտի դեպի քո անարատ ուղին— յերկինքը նետի.
յեվ գորշածավալ այս յերկրի նըման,
վոր դալա՛ր-քընքո՛ւյշ փըռվել ե հահա
քո առջեվ ի՛նձ ել զոհաբերության տենչով ես վառել:

յեվ յես կը զոհեմ քեզ ի՛նչ վոր ունեմ, յեվ ի՛նչ վոր յես կամ:
Յերանի՛ լույսի այն որին, յերբ վոր առաջին անգամ
ծաղկե տաճարիս մարմար-դահլիճից
զարթոնքի դըզորդ կոչը կը հընչի:
Յերբ ձըմնունային, ծանրը բեռի տակ, մեզ ճընշող ամպից
ադամանդե հորդ անձրեվ կը տեղա
յեվ յերբ բյուր հայցող ձեռներ կը պարզվեն—
վառված ակների դյութական փայլով՝
նոխ գանձերը տուն տանելու համար:
Իսկ խրճիթներից—ա՛խ վաղուց հետե
լըքված՝ մետաքսե դրոշակներն առած—
տոնախմբության կերթան արեւի ուխտավորները:

Այդ տո՛նը, պաստոր: Անառակ վորդու
առակը՝ գիտեք. —ահա՛ մոլորված զավակներին ե
մայր արեւը այդ տոնը պարզելում:
յերբ դրոշակների մետաքսը շըրջա՛,
ծածանվի՛ յեվ յերբ նըրանց շարքերը իմ տաճարը
զան—

այնժամ կը հընչի հրաշակերտ զանգըս
այնքա՛ն սըրտառո՛ւչ, ջերմագի՛ն, թովի՛չ, անո՛ւշ դո-
ղանջով,
վոր ամեն մի սիրտ վայելքի խոցող ցալից հեկեկա:
Մի յերգ կը հընչի—կորա՛ծ, մոռացվա՛ծ,
մանկական սիրո յեվ հայրենի յերգ,
հեքյաթի խորունկ աղբյուրից քաղած,
ամենքին ծանոթ, բայց դեռ չըլլսված:
Հենց վոր հընչի—մե՛ղմ, սըրտմաշո՛ւկ-յերկջոտ,
մերթ սոխակի վիշտ, մերթ աղալուտ խինդ՝
նա կը խորտակի ամեն մի մարդու կրրծքի սառույցը
յեվ բեն, կըշտամբանք, վոխ, վիշտ, տառապանք,
կը հալվեն ջն՛րմ, ջն՛րմ արցունքների մեջ:

Մինչդեռ բոլորըս—դեռ արտասովաթոր,
 խանդավառ՝ խաչի մոտ ենք ընթանում,—
 մեռած Փրկիչը—Սրբվի ուժով
 ազատված՝ ահա իր անդամներն և
 շարժում յնվ պայծա՛ռ, ժրպտադե՛մ, աշխույժ՝
 իջնում ընդառաջ դալար Մախին:

Հայնրիիսը, վոր քանի գնամ ավելի վոգեվորված յնվ վերջը
 եքստագով և խոսում, այժմ անց ու դարձ և անում, Ռատոնեղե
 լայնը արբեցումից ու սիրուց դողալով՝ արցունքն աչքերին, չո-
 քում և նրա առաջ յնվ համբուրում նրա ձեռքը: Պաստորը հետե-
 վում և նրա ճառին՝ սաստկացող սարսափի նշաններ անելով:
 Ճառի վերջին նա ինքն իրեն զսպում և: Պառզից հետո նա սխտում
 և շինձու հանգստությամբ խոսել, սակայն շուտով հավասարա-
 կըշուությունը կորցնում և:

ՊԱՍՏՈՐ

Սիրելի վարպետ, յես ձեզ լրսեցի.
 ինչ որ համայնքի պատվաւոր մարդիկ
 մրտատանջությամբ հաղորդում եյին—
 կատարելապես ճիշտ և դուրս գալիս:
 Թեյել ձեր ընտիր զանգի հեքյաթը
 ինձ անասելի ցավ և պատճառում,
 բայց մի կողմ թողնենք մեծ-մեծ խոսքերը.
 ձեր հրրաշքների մասին լրսելու
 ծարավը չես վոր ինձ այստեղ բերեց,
 վոչ, յես յեկել եմ, վոր ձեր կարիքի պահուն ձեզ
 ոգնեմ:

ՀԱՅՆՐԻԻ

Կարիքիս պահո՞ւն: Ուրեմըն կարի՞ք եմ ունեցել յես:

ՊԱՍՏՈՐ

Ա՛յ մարդ, արթնացեք, դուք յերագո՞ւմ եք:
 Դա մի ցավագար յերագ և, վորից

մարդ արթնանում և հավիտենապես
 տանջվելու համար: Յեթե չաչողի
 Աստուծո խոսքով ձեզ արթնացրենել—
 դուք, վարպետ Հայնրիիս, — առհավետ կորաք:

ՀԱՅՆՐԻԻ

Այդ յես չեմ կարծում:

ՊԱՍՏՈՐ

Աստվածաշունչի խոսքը ինչպե՞ս եր:
 «Ում վոր կամեցավ Աստված կործանել—նախ կը կու-
 րացնե:»

ՀԱՅՆՐԻԻ

Թե Աստված ունի այդ տեսակ ծրագիր —
 դուք կասեցրենել նըրան չեք կարող:
 Յեթե հիմա՛ յեմ կույր—յերբ անարատ
 վոգով ներշնչված՝ պառկել եմ ասես
 վաղորդյան ամպի վըրա յեմ ազատ
 աչքերով յերկնի հեռաստաններն եմ
 սուզվում—արժե վոր Աստծո ցասումը
 կուրությամբ պատժեր ինձ յեմ առհավետ:

ՊԱՍՏՈՐ

Դե, վարպետ Հայնրիիս, այդ ձեր ընդունած
 թրուիչքն ինձ համար չափազանց բարձր և:
 Յես մի պարզ մարդ եմ յեմ յերկրի ծընունդ,
 վրսեմ բաներից վոչինչ չըգիտեմ:
 Բայց գիտեմ մի բան, վոր դուք չըգիտեք,
 դա իրավունքն և յեմ ապրենին,
 կամ վորն և չարը յեմ վորը բարին:

ՀԱՅՆՐԻՒՅ

Այդ Աղամն անգամ զրախտում չըզիտեր:

ՊԱՍՏՈՐ

Պարապ յեւ անմիտ բառեր, վորոնցով
ծեր պրղծութիւնը չեք բողարկի դուք:
Ցաւում եմ—յեւ ձեզ ամենայն սիրով կը խընայեյի,
բայց դուք ունեք կին, զաւակներ . . .

ՀԱՅՆՐԻՒՅ

Հետո՞ . . .

ՊԱՍՏՈՐ

Դուք յեկեղեցուց խորշում, լեռներն եք
քաշվում, ամիսներ շարունակ դուք տուն
չեք վերադառնում, ուրանդ կարոտ ե
քաշում ձեր կինը յեւ ձեր յերեխայք խըմում են իրենց
մոր արցունքները:

ՀԱՅՆՐԻՒՅ

Յերկար ու խոր լուծջութեանց հետո, յուզված՝

Յեթե յես, պատոր, կարողանայի այդ արցունքները
սրբել—կանեյի՛, բայց անկարող եմ:
Դատըն հոգսերի, դեգերումների պահուն ըզգում եմ,
վոր ինձ այլևից չի տըրված նըրանց ցաւը փարատել:
Յես ամբողջապէս սեր եմ յեւ սիրո մեջ վերածընված.
Իմ հարըատութեան ավելցուկներով չեմ կարող նըրա
պարապ բաժակը լըցնել, իմ գինին—բացախ կը թըլւա,
դառը մաղձ յեւ թույն: Ու մատների տեղ
բազելի նանկեր ունի, կարո՞ղ ե

հիվանդ մանուկի թաց այտը շոյել:
Թո՞ղ Աստված ոզնի:

ՊԱՍՏՈՐ

Խելագարութիւն

պիտի կոչեմ այդ, անբարըշտութիւն: Այո՛, հենց այդ—
պես:
Ձեր սարսափելի անաըրտութիւնից ցընցված եմ, վար—
պես:
Վատթար թըշնամին, ծաղրանըկարը Աստուծո այստեղ
յաղթանակել ե . . . այո՛, պետք ե վոր այդպես ել ա—
սեմ,—

հիմնավորապէ՛ս, ինչպես վոր յերբե՛ք չեք կարողացել:
Ի՛նչ եք բարբաջում ձեր գործի մասին,
Տե՛ր—Աստված, մի՞թե չեք ըզգում թե դա ի՛նչ պրղծու—
թիւն ե,

թե դա կարող ե լոկ կըռապաշտի զըլխում հըղանալ:
Բարվոր ե աղոթք անեմ առ Աստված,
վոր Յեզիպտացոց վերա առաքած ըլոր չարաչար
տառապանքները ի վերա համայն քրիստոնեյութեան
թափվեն, քան տեսնեմ այդ Մոլոր¹, Բահալ,
Բենեղզերուղի՛ տանարն ավարտած:
Դեռ ուշ չե. դարձեք յեւ խելքի յեկեք:
Մնացեք քրիստոնյա: Դո՛ւրս այդ աղջըկան,
դո՛ւրս վըռընդեցեք այդ ցոի վըհուկին,

¹ Փյունիկացոց աստվածներ, վորոնց պաշտամունքը տարածված ե
յեղել նայել Առաջավոր Ասիայի այլ ժողովուրդների մեջ, Մոլորը—այժմ
պատերազմի մարմնացումն ե, վորովհետեւ նրան յերբեմն մարդկային
զոներ եյին բերում յեղել, իսկ Բահալը—չարի:

Ալբին¹, Դրրուտին², անիծյալ վոգուն—
յեվ գայթաղության այդ ուրուն մեկեն
ի չիք կը դառնա յեվ դուք կը փրկվեք:

ՀԱՅՆՐԻԽ

Յերբ վոր մահամերձ՝ տենդով բըռնըված— պառկած եյի
յես,
նա՛ եր, վոր յեկալ, ինձ բուժում բերեց, վոտի կան-
գնեցրեց:

ՊԱՍՏՈՐ

Նըմանորինակ բուժումից—մահը ավելի վեր ե:

ՀԱՅՆՐԻԽ

Կարող եր կարծել—ինչպես կամենաք,
բայց այդ նո՛ր կյանքը յես ընդունեցի
ապրո՛ւմ եմ—ապա՛ յերախտապարտ եմ լինելու նըրան
մինչեվ վոր մահը ինձ կը կաշկանդի:

ՊԱՍՏՈՐ

Չափազանց խորը, մինչեվ պարանոց
դուք ընկըղմվել եք չարի մեջ: Դե՛հ, վե՛րջ:
Յերկնային փայլով դժոխքն եք ուզում զարդարած լինել:
Դուք աննըկուն եք. չեմ յերկարացնի՝ ինչպես յերբեմըն
հերետիկոսի համար—այնպես ել տակավին այսոր

¹ Ալբը նոյնն է, ինչ որ էլիբ—լեռնային վոգի:
² Դրրուտը—գարշելի աչքերով, գորշ ու կարճ մաղերով, անտա-
ռաբնակ մղձավանջային չար վոգի է: Լացող յերեխաներին՝ ասում են՝
«սո՛ւս կաց, Թե չե Դրուտը կը գա»:

Ծան. Թարգ.

կախարդի համար—խարույկը վառ ե:
Յեվ «ծայն բազմության—ծայն Աստուծո»: Դուք
չեք կարող ծածկել ձեր գաղտնագողի, հեթանոսական
արարմունքները: Ահաբեկում են տարածում նոքա
յեվ ատելութուն գըրգըռում ձեր դեմ:
Ընդվըզումն արդեն զրսպելու հընար չի՛ լինի շուտով
յեվ ժողովուրդը տեսնելով վոր իր սըրբութուններին
վըտանգ ե սպառնում վոտի կը կանգնի,
անողոք կերպով քար ու քանդ կանի ձեր գործանոցը:

ՀԱՅՆՐԻԽ

Պահ մի լությունից հետո, հանգիստ,
Հը՛մ, լըսո՞ւմ եր—ինձ դուք չեք վախեցնի:
Յեթե ծարավից տապանվող մեկին թարմ գինով լեցուն
կըթով մոտենամ—իսկ նա տա-կոտրի կուժն ու բա-
ժակը—

ծարավից մեռնելն—իր կամքն ե, գուցե
ճակատագիրը—յես մեղավոր չեմ:
Ինքըս ծարավ չեմ, վորովհետեվ յես ի՛մը—խմել եմ:
Իսկ յեթե նա՛, վոր ինքը խարված ե—
կույր ատելությամբ վառվի դեպի ինձ—
իսկ յես մի անմեղ պարզեվատու յեմ—
յեթե խավարի ախտը իմ հոգու լույսի դեմ յելնի
յեվ կամենա ցելս նետել ստորաբար—
յեթե յես-յե՛ս եմ, ապա գիտեմ թե
ի՛նչ կանեմ յեվ ի՛նչ կարող եմ անել:
Ինչպես մի քանի զանգի կաղապար փըշընել եմ արդեն—
այնպես ել մուրճըս կը բարձրացընեմ
մի զանգ ել փոշի դարձնելու համար,
մի զանգ—ամբողջի արվեստով կերտած—
չարիքից, մաղձից յեվ ամեն տեսակ վատություններից—
հիմարության յերգ հընչելու համար:

ՊԱՍՏՈՐ

Դե՛հ կործանվեցեր: Վերջ: Մընաք բարո՛վ:
Վոչ վոք չի կարող ձեր մեղաց մոլի խոտը քաղհանել:
Աստվա՛ծ վողորմի: Յակայն թույլ տվեք մի բան ել ասեմ,
խըղճահարութիո՛ւն—այդ տեսակ խոտը կա—
քո ցընորական արարածների շըրջանում, մի որ
իր նետով խիղճը սիրտըդ կը խոցի՛:
դու ել չես ապրի, չե՛ս ել մեռնի՛, մարդ:
Աշխարհ ու Աստված, քո գործը յեվ քեզ
յեվ ամենայն ինչ այնժամ կանիժես:
Այն պահուն ահա մըտաբերի՛ր ինձ:

ՀԱՅՆՐԻԻ

Պաստոր, ահարկու ուրվականներ— յես
կարող եմ ձեզնից աջող նըկարել:
Ձեր բարբաջանքը— լինելու բան չե,
յես գըրահ ունեմ ձեր նետերի դեմ,
Ձեր նետը— կաշիս չի չանգոի, ինչպես Վըրկին չի հընչի
այն զանգը— հինը— դուք զիտեք վորը—
վոր հակում ուներ դեպի անդունդը,
վոր գահավիժեց յեվ հիմա վարը-ընկած ե լընում:

ՊԱՍՏՈՐ

Կը հընչի՛, վարպետ, հիշի՛ր իմ խոտը:

Վերջ յեբոող արարի

Ա. ԲԱՐ ԶՈՐԲՈՐԴ

Ապակու գործարանի ներսույթը, ինչպես յերրորդ արարում.

Աջ թեփի վրա՝ պատի տեղ ծառայող ժայռի մեջ մի դուռ ե բացված, վորը տանում ե լերան մեջ գանվող անձավը: Ձախ թեփի վրա դարբնի բուրա—փուքսերով ու ծխնելույզով—մեջը կրակ ե վառվում: Բուրայի մոտ կուան ե կանգնած:

Հայնրիխը ունեւիրով յերկաթի մի շիկացած կտոր ե ամուր պահում կուանի վրա: Վեց մանրիկ թզուկներ լեռնականների զգեստներով ոգնում են նրան:

Առաջին թզուկը Հայնրիխի հետ միյասին բռնում ե ունեւիրը:

Յերկրորդ թզուկը—բարձրացնում ե դարբնի ահագին մուրճն ու զարկում շիկացած յերկաթին:

Երրորդ թզուկը—փուքսերով բորբորում ե կրակը:

Չորրորդ թզուկը—անշարժ, ուշի-ուշով դիտում ե աշխատանքին:

Հինգերորդ թզուկը—կանգնած ե սպասողական դրության մեջ: Նրա ձեռքին մի հաստ փայտ կա, վորովնա պատրաստ ե հարված հասցնելու:

Վեցերորդ թզուկը—փայլոն թագը գըլխին՝ նստած ե բարձրադիր փոքրիկ գահի վրա:

Չորս դին ճարտարապետական յեվ քանդակագործական կուածո յեվ թափձո կտորներ:

ՀԱՅՆՐԻԽ

Ձարկի՛ր, զարկի՛ր, մինչեվ թեփը գոսանա,
քո նըվվոցը չի շարժում ինձ, ափազա՛կ,
հարվածներիդ թիվը յնթե պակասի,
քուրայի մեջ քո միրուքը կը վառեմ:

ՅԵՐԿՐՈՐԴ ԹՉՈՒԿ

Վայր ե բյում մուրճը:

ՀԱՅՆՐԻԽ

Հենց այդպես ել գիտեյի: Կա՛ց, սիրելի՛ս.
աշկերտիս վոր սաստում եմ—դա կատակ չե:

Հայնրիկը քուրայի մտտ ե քարշ տալիս փորրիկին, վորը թպըրտում ու աղաղակում ե. Փուքսերի մտտ կանգնած թզուկը ավելի յեռանդուն ե աշխատել սկսում

ԱՌԱՋԻՆ ԹՁՈՒԿ

Ձեռքըս թըմրեց, վարպետ, յես ել չեմ կարող:

ՀԱՅՆՐԻԽ

Իսկույն կը գամ:

Յերկրորդ թզուկին.

Թըզուկ, ույժըդ տեղն եկա՞վ:

ՅԵՐԿՐՈՐԴ ԹՁՈՒԿ

Գլխով զվարթ նշան ե անում, յեռանդով վերցնում ե մուրճը յեվ քոլոր ուժով հարվածում:

ՀԱՅՆՐԻԽ

Աքաղաղը յեվ կարասն ե վրկա—պետք ե խիստ լինես:

Գրկին ունելիքը ձեռքն ե առնում:

Վոչ մի դարբին կոկ ձեւ չի տա յերկաթին—

Թե ձեզ նրման ծույլ աշկերտներ ունենա:

Դեռ առաջին հարվածը չեք հասցըրել—

ձեզ թըվում ե՝ յերկրորդ անգամ չեք կարող:

Ել չեմ ասում՝ ի՞նչ հավատ ե հարկավոր

ծըրագըրած գործըս գրլուխ բերելու:

Չա՛րկ, յերկաթի տաքն են ձեծում, պաղը—վո՛չ:

Ի՞նչ ես անում:

ԱՌԱՋԻՆ ԹՁՈՒԿ

Հափշտակված՝ փորձում ե շիկացած յերկաթին ձեւ տալ ձեռքով:

Ձեռքով ձեւ կեմ ուզում տալ:

ՀԱՅՆՐԻԽ

Խիզախ տըղա, խենթ հո չե՛ս:

Ձեռքըդ մոխիր կը դառնա—

իսկ առանց քեզ ի՞նչ անեմ:

Վիլանդի՛՜ զարմ, ի՞նչպէս առանց քո ույժի

ուզածիս պես յերազածըս վեհ գործի

կառուցվածքը գրլուխ բերեմ յեվ ինչպէ՞ս

հիմըրը քըցեմ յեվ զըմբեթը մենավոր

մերձեցընեմ ազատ ողում արեվին:

ԱՌԱՋԻՆ ԹՁՈՒԿ

Ձեւը տըվի—ձեռքըս մընաց անվընաս,

միյայն մի քիչ հոգնեց—թըմրեց: Բան չըկա՛:

ՀԱՅՆՐԻԽ

Վազի՛ր ջըրի տաշտի մտտ—

Նիկելմանը ծովասեզով զովացընի մատներըդ:

Յերկրորդ թզուկին՝

Ծույլ անպիտան, հիմա հանգիստ վայելիր,

իսկ յես զըննեմ—տեսնեմ ի՞նչ ե գոյացել:

Դա վարպետի համար վարձք ե յեվ վայելք:

Հայնրիկը վերցնում ե յերկաթի նոր կռած կտորը, նստում ու զննում:

Անզուգական աշխատանք ե, հըշմարիտ:

Սերն ու բարին պըսակեցին մեր այս ժամի ջանքերը:

Գոհ եմ յեվ զոհ լինել, կարծես, կարող եմ,

¹ Վեյանդը—սկանդինավյան դիցաբանության մեջ հարտարարվեստ զարբին ե.

անծելի իրից—ծընվեց ձեզ,
 մի պատվական յեզ կարեւոր առարկա
 առաջ եկաւ քառսից:
 Պիտի տակը յեզ յերեսը հարդարեմ,
 վոր յարմարվի ամբողջական շինվածքին:
 Այլ¹ այդ ի՞նչ ես շըշընջում:

Ձորորդ թզուկը աթոռի վրա յեւած՝ շշնջում ե Հայնրիխի ականջին:

Ինձ հանգիստ թո՛ղ:
 Թե չես ձեռն ու վտորդ իսկոյն կը կապեմ,
 լաթ կը խըրեմ, կը խըցանեմ բերանըդ...

Թզուկը փախչում ե:

Այս մասն ինչո՞վ չի հարմարում ամբողջին,
 ինչի՞ն ե, վոր չես հավանում: Հարց եմ տալիս—
 դե խոսի՛ր:

Յե՞րբ եմ յեղել հիմիկվա պես յերջանիկ,
 յե՞րբ ե ձեռքս հիմիկվա պես գործել սըրտիս հա-
 մածայն:

Պարսավո՞ւմ ես: Ուրեմըն յես վարպետ չե՞մ:
 Թե քեզ, տղա, ավելի վե՞ր ես դասում:
 Դե մոտ արի յով կարծիքդ պարզ ասա՛:

Թզուկը դարձյալ գալիս շշնջում ե. Հայնրիխը գունատ՝ հոգվոց հա-
 նելով վեր ե կենում յեզ գայրացած՝ պատրաստի կտորը կրկին
 կռանի վրա գնում:

Թող այս գործը սեզ-սատանան ավարտե՛—
 իսկ յեզ գընամ—գետնախնձոր, բողկ ցանեմ,
 ուտե՛մ, խըմե՛մ, քընե՛մ—ապա՝ մահանամ:

Հինգերորդ թզուկը մոտենում ե կռանին.

¹ Այլ—լեռնային վողի ե, նույնն ե, ինչ վոր էլքը:

Ձը հանդըզնե՛ս, այդ առարկան ձեռք չըտա՛ս:
 Ի՞նչ փույթ վոր քո դեմքը կապտել-կարմրել ե,
 վոր բիզ-բիզ են կանգնել գըրխիդ մազերը,
 վոր հայացքըդ ավերա՞ծ ե ավետում:
 Յեթե մարդ քեզ հըպատակվի, մարդասպա՛ն,
 ամուր ձեռքով քեզ հընազանդ չըպահի՛
 հարկադըրված կըլինի իր վիզը ճըկել քո առջել,
 յեզ մըտըակիդ հարվածները իբրեզ շընորհ ընդունել:

Հինգերորդ թզուկը կռանի վրա կատաղորեն փշում ե կռած մասը՝
 Հայնրիխը կրճտում ե ատամները:

Հետո՞—յեղա՞վ: Բայց հանգըստյան յերեկո յե, հե-
 ըրք ե:

Դեհ, թըզուկներ, գործիքներդ վայր դըրեք
 յեզ հեռացեք: Առավոտը թե նոր կորով ներշընչի—
 հուսով եմ վոր կը ներշընչի — ապա ես ձեզ կը
 կանչեմ.

հաճելի չե աշխատանքս—չեմ գոհանա, գընացեք:
 Հե՛յ, փուքս փըջող—դըժվար թե դու ինձ համար
 յերկաթի մի նոր կըտոր ել շիկացընես—հեռացի՛ր:

Բացի թագապսակ թզուկից—բոլոր մյուսները ժայռի մեջ բացված
 դռնով անհետանում են.

Թագապըսակ թըզուկ, դու վոր մի անգամ ես խո-
 սում կյանքիդ ընթացքում,
 դու ել գընա՛, ի՞նչ ես կանգնել-ըսպասում:

դու քո խոսքը վոչ այտը ես ասելու յեզ վոչ վաղը:
 լոկ յերկինքը գիտե—արդյոք յերբեվիցե կը խոսե՛ս:
 Յե՞րբ ապա վե՞րք... վախճա՛ն... այնքան հոգնել եմ...
 Քեզ, մըթընշաղ, չեմ սիրում յես: Դու ցերեկի յեզ
 գիշերի արանքում՝

վոչ սրբան յես պատկանում յեվ վոչ նրբան:

Դու ձեռքիցրս մուրճը խըլում—բուն չես տալիս,
բուն, հանգըստյան իմաստը:

Սիրտըս թեյեվ անհամբեր՝

բայց գիտե վոր պիտի անգոր ըսպասի

յեվ ցավագին սպասում ե նոր որին:

Իր ծիրանին բըցած վըրան՝ արեվը

խորն ե իջնում յեվ մեզ թողնում միայնակ:

Լույսին ընտել՝ անողնական դողում ենք,

ծայր աստիճան աղբատացած՝ մատնում ենք մեզ
գիշերին:

Մենք ցերեկով արքաներ ենք, յերեկոյան—մու-
րացկան:

Ցընցոտի յե այն վերմակը, որ բընելիս մենք բըցում
ենք մեզ վըրա:

Ձգվում ե հանգստյան տեղում յեվ բաց աչքերով պառկած՝ յե-
րագում: Բաց դըռնից ներմակ մշուշ ե թափանցում: Յիրք վոր
մշուշը ցրվում ե՝ ջրհորի յեզրին յերեվան ե գալիս Նիկեյմանը:

ՆԻՆԵՎՄԱՆ

Բռե՛ կեկեկեքս, կվո՛ւարս, հիմա իր յեղեգե տընա-
կում,

հողի ճիճուն—վարպետն արդեն նիրհում ե:

Վոչ լըսում ե յեվ վոչ տեսնում: Լերան վըրա սո-
ղում են

Գորշ ամպի պես սապատավոր ուրուններ,

մերթ անշըշուկ բըռունցքներով ըսպառնում,

մերթ թեվերը աղերսագին տարածում:

Նա վոչ մի բան չի նըկատում: Չի լըսում այն
ծուռ յեղեմիլի հառաչը,

կլփի ցածրը, չար սուլոցը չի լըսում:

Իսկ ձերագույն սոճիների ասեղները դողում են,

նրբանք ահից թափ են տալիս նյուղերը

ինչպես հալիս ե թափահարում թեվերը:

Մըրսում ե նա—ծըմեռնային սարսուռը

թափանցում ե ահա նըրա վոսկորների ծուծի մեջ:

Բայց նա անդո՛ւլ, բընի մեջ ել, իր ցերեկվա գոր-
ծին ե:

Թո՛ղ, իզո՛ւր ես պայքար մըղում. Աստծու դեմ

ե պայքարըդ,

Աստված եր բեզ մարտի կոչել — հիմա նա բեզ

մերժում ե,

վորովհետեվ տըկար ես:

Հայնրիխը հառաչանքով շուռ ե գալիս:

Ջոհրդ զո՛ւր ե, մեղքըդ մեղք ել կը մնա:

Չարժանացար աստվածային շընորհին՝

վոր հանցանքըդ ծառայության յեվ պատիժըդ—
վարձ դառնա:

Արատավո՛ր, արյունոտ ե հանդերձըդ,

լըվացարար կա, կարող ե արատներդ լըվանալ,

սակայն ինչքան կուզես կանչիր՝ նա չի՛ գա:

Սեվ ելփերը հալաբվել են կիրճերում ու վիհերում,

պատրաստվել են վայրի վորսի, յեվ շուտով

կը հասնի քո ականջներին շան հաջոց—

վորսի հոտ են առել:—Պայժառ յեթերում

մըշուշային հըսկաները մըռայլ բուրգ են կառու-
ցանում ամպերից,

պարիսպներ ու աշտարակներ—ահարկո՛ւլ յեվ
սպառնալի՛ց—

դանդաղորեն մոտենում են քո լերան,

վոր բեզ, գործըդ յեվ ամեն ինչ խորտակեն:

ՀԱՅՆՐԻԹ

Ռաուտենդելա՛յն, ինձ մի ալբ ե տանջում, հասի՛ր
ոգնութ՛յան:

ՆԻԿԵԼՄԱՆ

Լըսե՛ց: Կըգա՛: Սակայն նա քեզ չի՛ ոգնի,
անգամ յեթե Ֆռեյյա դառնա: Ինքըդ Բալդեր կըտ-
րեյիր,
յեվ արեվի աղեղներով լեցուն կապարճ կըրեյիր,
նետերիցըդ յեվ վոչ մեկը չըվըրիպեր—դու դարձյալ
պիտի անգոր տեղի տայիր: Դե լըսի՛ր.
մի զանգ ե հանգչում մեր խորունկ լըճում
բար ու ժայռի մեջ:

Յերկնային՝ անշեջ
լույսերին կարոտ՝ բարձունքն ե տենչում:
Ձըկները լողում—մըտնում են զանգի մեջն ու
դուրս գալիս . . .
Բայց կանաչահեր, կըրտսեր աղջիկըս նըրան տես-
նելիս՝

չըրջում ե յերկչոտ, լող տալիս հեռուն,
կարեկցութ՛յունից լալիս ու տըխրում:
Տարորինակ բան՝ նա թոթովում ե այնպես ցա-
վազին,

կարճես բերանը լի արյուն լինի . . .
Յընցվում ե, շարժվում, վոր տեղից յեղնի . . .

Վա՛յ քեզ—յեթե նա ղողանջի կըրկին:
Բի՛մ-բա՛մ:

Յերազի մեջ ես—Աստված պահապան:
Բի՛մ-բա՛մ.

ծա՛նր ու տըխրամա՛ծ,
կարճես թե մահն ե զանգի մեջ բազմած:

Բի՛մ-բա՛մ:

Յերազի մեջ ես—Աստված պահապան:
Նիկելմանը սուգվում ե ջրհորի մեջ

ՀԱՅՆՐԻԹ

Ոգնի՛ր: Ոգնեցե՛ք: Ինձ մըղձավանջը տանջում ե,
ոգնի՛ր:

Ձարթնում ե.

Վորտե՞ղ եմ արդյոք . . .

Տրորում ե աչքերը յեվ նայում շուրջը:

Ո՞վ կա այդտեղ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Յերեվում ե դրան շեմքին.

Յես:

Ինձ կանչո՞ւմ եյիր:

ՀԱՅՆՐԻԹ

Այո՛, յեկ այստեղ:

Յեկ յեվ ձեռքըդ դիր հակատիս—այդպես.
վորպեսզի ըզգամ մազերըդ, սիրտըդ յեվ քեզ: Յե՛կ,
—այսպե՛ս,
բոլորովին մոտ: Դու անտառային գով շունչ ես
բերում
յեվ խընկի բուրմունք: Դե համբուրի՛ր ինձ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Քեզ ի՞նչ ե յեղեկ, սիրելիս:

ՀԱՅՆՐԻՒ

Վոչինչ . . . ինքըս ել չը
գիտեմ:

Յես այստեղ պառկել յեվ մըրսում եյի—մի վեր-
մակ տուր ինձ—

Թույլ, ուշագրնաց, սիրտըս գընում եր:

Խավար ույժերի գոհը դարձա յես,—

Թափվեցին վըրաս յեվ տանջում եյին, խեղդում
եյին ինձ:

Բայց հիմա լավ ե, մանկիկ, յես կըրկին
ամրապընդվեցի յեվ թո՛ղ գան . . .

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ովքե՞ր:

ՀԱՅՆՐԻՒ

Թըշնամիներըս:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ի՞նչ թըշնամիներ:

ՀԱՅՆՐԻՒ

Բոլոր անանուն չար

վոտխներըս—

յես առաջվա պես նորից ամրապինդ վոտի յեմ
կանգնել:

Անյերկյուղ եմ յես—թեյեվ սարսափը բորենու
նըման

ներս սողաց սիրտըս յերբ քընած եյի:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ջերմում ես, Հայնրիխ:

ՀԱՅՆՐԻՒ

Հա, մի քիչ ցուրտ ե:

Վոչինչ, ինձ գըրկի՛ր յեվ սեղմիլը կըրծքիդ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Իմ սիրով սիրա՛ծ...

ՀԱՅՆՐԻՒ

Ասա՛ ինձ, մանկիկ,

Դու հավատ ունե՞ս դեպի ինձ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Բա՛լդեր,

Արեվի հերո՞ս: Ինչ գունա՛տ ես դու:

Քոդ վոր համբուրեմ կապույտ ու պայծառ
աչքերիդ հերմակ յեվ կեռ հոնքերը...

ՀԱՅՆՐԻՒ

Այո՞, Բալդերին նըմա՞ն եմ, հի՞շտ ե:

Հավատ ներշընչիլը, գիտակցության բեր

յեվ վեհ արբեցում հաղորդիլ հոգուս:

Այդ կարեվոր ե իմ գործի համար:

Յերբ ունելիքը յեվ մուրհը ձեռքիդ գործի վըրա յես,

պիտի մարմարը քանդակես, վարես փորագըրիչը—

յեվ տեսնում ես վոր ա՛յս չի աջողվում, ա՛յն ե

անկատար—

ամեն մի մանրուք շիտկելու համար ջանք պիտի

թափես,—

հաճախ կորչում ե արբեցում, հավատ,

սիրտըդ— նեղանում, աչքըդ մըթագնում,

չըքանում հոգուդ պայծառ պատկերը:

Յերկնի շընորհը— արեվածարալ յեվ անկաշկանդ ե,
 ինչպե՛ս չըկորչի առորչա մանըր, չընչին հոգսերից:
 Շընորհը կորչի— կը ցընդի հետը նայել հավատը,
 յեվ կանգ ես առնում խաբվածի նըման,
 փորձում ես վանել կատարման ցավը—
 վոր քողարկված եր յաղթական խինդով
 գործի հըղացման բերկրալի պահուն:

Իմ զոհի ծուխը դեռ յեվըս ուղիղ յերկինք ե յելնում:
 Թե վերից մի ձեռք ուղղելու լինի ներքեվ— թո՛ղ անի:
 Ինքըս չեմ հանի— բայց իմ ուսերից քահանայական
 ըզգեստը— կընկնի: Յեվ յես, վոր այնքան բարձր
 եյի կանգնած,

վորքան յեվ վո՛չ վոր,— լուռ ու մունջ կիջնեմ Գո-
 բերից¹ ներքեվ:

Իսկ հիմա— ջահե՛ր բերեք, լո՛ւյս լինի:
 Դու, կախարդուհի, արվեստըդ ցույց տուր:
 Տուր ինձ քո զինուց: Հասարակ մարդկանց նըման—
 վաղանցուկ,

բայց յերջանկավեստ պըտուղներ քաղենք անվեհեր
 սըրտով:

Ավելի լավ ե անխուսափելի— պարապ միջոցը
 կյանքով լըցնենք, քան անոգ ծուլությամբ,
 որեր շըռայլող ամբոխի նըման: Յերաժըշտությո՛ւն:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Լեռնաստանն ի վեր թըռչում եյի յես:
 Մերթ քամու բերնին սարդոստայնի պես վոլոր-
 վում եյի,

¹ Գորբըրը— Սինա լեռնաշղթայի մեջ ե գտնվում, Դա այն լեռն է, վորտեղից Մովսես մարգարեն իջավ իր որհնքներով: Ծան. Թարգ.

մերթ սուրում եյի իաշմեղվի պես,
 մերթ ծաղկե-ծաղիկ թըռչում ու թառում թի-
 թեռի նըման:
 Բոլոր բույսերից՝ ծաղկից ու խոտից, պուտ ու մե-
 խակից,
 կարճ՝ ամեն մեկից յերդում վերցըրի— քեզ վընաս
 չըտան:
 Պայծա՛ռ ես, բարի՛ յեվ քո վոխերիմ վոտխ—
 սեվ ելքը
 գո՛ւր պիտի գընա, վոր մահաբեր նետ կըտրի քեզ
 համար:

ՀԱՅՆՐԻԻ

Ի՞նչ մահաբեր նետ: Յես մի ուրու յեմ ճանաչում.
 նա՛ վոր
 քահանայական ըզգեստով յեկավ, վոր ըսպառնալից
 ձեռքը բարձրացրեց, ինչ վոր նետից եր բարբա-
 շում, վորը
 պետք ե վոր շիտակ իմ սըրտին դիպչի:
 Ապա ո՞վ ե այդ նետը նիզակից արձակելու, ո՞վ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վոչ վոր, սիրելիս, դու կախարդված ես,
 ասում եմ վոչ վոր, կախարդված ես դու:
 Վոր աչքով անես, նըշան տաս— իսկույն
 ծըխի պես կընեն անուշ ղողանջներ,
 քեզ կը պաշարեն հընչող պատերի նըման յեվ
 յերբեք
 ներս չի թափանցի վոչ մարդկային կանչ,
 վոչ կոչնակի զանգ յեվ վոչ չար Լոկին¹ իր նենգ
 արվեստով:

¹ Լոկի— չար ու նեհեզ սկզբունքի մարմնացումն ե գերման դիցա-
 բանություն մեջ: Լոկին եր, վոր վատարար սպանեց պայծառ Քաղերին.
 Ծան. Թարգ.

Ձեռքով մի թեթեւ նըշան արա ինձ — կամար կը
կապի

բարձրը յեզ արծակ լեռնային դահլիճ:
Յերկրային մանրիկ վոգիներն իսկույն շարեշաբ
կը գան,

յեզ բազմաշըշուկ կը խռնվին չորս դին,
սեղան կը բանան յեզ կը գարդարեն հատակ ու
պատեր...

Յեթե մերշուրջը չար վոգիների խուճը բազմանա —
մենք ել յերկրի խոր ներսը կը փախչենք
վորտեղ յեզ վոչ մի հրսկայի պաղ շունչ ել չի
հասնի մեզ:

Յեզ հազարավոր մոմեր թող վառվեն այդ դահ-
լիճի մեջ...

ՀԱՅՆՐԻԻ

Թող մանկիկ, — ի՞նչ տոն կարող ե լինել հիմա, —
բանի վոր

գործըս — անուրախ, ավերակի պես
լուռ ըսպասում ե ա՛յն ժամին, երբ վոր
բուռն բերկրությամբ ինր կավետի տոներն տոնը:
Յես պիտի գը՛ամ — տեսնեմ այն շենքը,
վորին սերտ կերպով շրջթայված եմ յես:

Մի ջահ վերցրո՛ւ, առաջ ընկիր յեզ լուսավորի՛ր,
շո՛ւտ:

Քանի անանուն թրշնամիներս գործի յեն անցել, —
այդ ըզգում եմ յես — բանի փորում են իմ շենքը
հիմքից —

վարպետը պիտի գործի յեզ վոչ թե տարվի բե-
ֆերով:

Ծըպայալ հրրաշքը յեթե պըղինձի, ակների, վոսկու

յեզ փըղոսկրի մեջ յես հայտնագործեմ յեզ ձայնը
հընչի —

ապա առհավետ կանգուն կը մընա:
Անավարտ բանին տնեծք կը թառի,
յեթե անեծքը թույլ լինի — ապա ծաղըր կը դառ-
նա —

յեզ պիտի դառնա:

Ուզում ե գնա — դրան մոտ կանգ ե առնում:

Ել ի՞նչ ես կանգնել:
Մի՛ կանգնիր, մանկիկ: Յեկ, գիտեմ, յես քեզ վիշտ
պատճառեցի:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վո՛չ:

ՀԱՅՆՐԻԻ

Ի՞նչ եղավ քեզ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վոչ ի՞նչ:

ՀԱՅՆՐԻԻ

Իե՛ղճ մանկիկ,
յես գիտեմ ի՞նչն ե քեզ ցավ պատճառում:
Յերբ վոր յերվներանգ թիթեռնիկներին յերեխաները
ձեռքով բըռնում են — բընքո՛ւյշ սիրելով հանդերձ՝
խընդալով
մեռցնում են նրբանց: Յես հո թիթեռից մի բան
ավե՛լ եմ:

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Իսկ յե՞ս: Այդ տեսակ յերեխաներից մի՞թե ավել չեմ:

ՀԱՅՆՐԻԻ

Սրդարացի յես: Ինչպե՞ս մոռանամ յեվ ուրա-
նամ վոր

դու իմ գոյության իմաստն ես, փայլը
յե՛կ, քո աչքերը շողում են, ինչպես ցողը լույսի
տակ

յեվ մատնում, վոր քեզ ցավ եմ պատճառել:
Քեզ վըշտացնողը վո՛չ թե յես եյի, այլ շըրթունք-
ներըս:

Յեվ իմ ներսույթում—միմիյայն սեր ե:
Յեկ, մի՛ մորմոքիր: Դու ինձ զինեցիր
նոր խաղի համար, դու պարսպ բուռըս
վտակով լըցրեցիր յեվ քո շընորհիվ
պայքար եմ մըտել Աստվածների հետ:
Յեվ հիմա, դարձյալ քո խորհըրդավոր
գեղեցկության դեմ յես ըզգո՛ւմ եմ ինձ անսահ-
մանորեն

պարգևատրրված: Յերբ վոր զարմանքըս
ծըգտում ե մի կերպ գեղեցկությունըդ մեկնել-
ըմբռնել—
գուշսկում ե վոր դա տառապանքին հարազատ ու
կից

յերջանկությունն ե: Հառա՛ջ, լո՛ւյս արա:

ԱՆՏԱՌՈՒ ՅԱՎՆԸ

Դուրսը աղաղակում ե.

Յալլա՛, դեպի վե՛ր, հե՛յ-հա՛յ, դեպի վե՛ր:
Ի՞նչ եք վարանում. պիտի Բահալի

տաճարը մոխիր դառնա, դեպի վե՛ր:
Դե՛հ, պարոն Պաստոր, փըրփուրի վարպետ,
Հառաջ, այստեղ կա ծըղոտ, կուպր ու ցախ:
Վարպետ Հայնրիխը հիմա մեղկորեն—անխոհ մեկ-
նըվել
անկողնու վըրա հա՛ պաչպրչում ե իր ելֆ. բալիկին:

ՀԱՅՆՐԻԻ

Դու այսոր ի՞նչ ես կերել, անպիտան,
գիշեր ե, մըշուշ—ի՞նչ ես գոռգոռում,
ըզգուշացի՛ր, հա՛:

ԱՆՏԱՌՈՒ ՅԱՎՆԸ

Քեզնի՞ց:

ՀԱՅՆՐԻԻ

Կարծո՛ւմ եմ:

Միրքիդ մագերը մեկ մեկ կը պոկեմ, փուչ այծոտանի
Չեզպեսների հետ յես գիտեմ վարվել,
յես քեզ ցույց կը տամ—վարպետը ո՞վ ե:
Կաշիդ քերթելով՝ խելքի կը բերեմ,
յեվ կը դառնաս այն—ինչ վոր չես յեղել՝
հաստափոր այծը—աշկերտ կը դառնա.
Հըռհըռում ես, հա՞: Կըռանը—այստեղ,
կուռ մուրճը—այնտեղ, հոգիդ կը հանեմ

ԱՆՏԱՌՈՒ ՅԱՎՆԸ

Մեջքը դեմ անելով.

Այս այծեղջյուրը վրկա—բերել տուր
յեվ զարկ: Հավատի նախանձախընդիր
քանի՛ թըրեր են խուտուտ ածել ինձ յեվ վերջը—
ջարդվել:

Քո այդ կրօնանի վերա յերկաթը կավ ե դառնալու
յեզ փրշուր-փրշուր լինելու մուրհից:

ՀԱՅՆՐԻԻ

Տեսնե՛նք, անիծված, հաստ-գըլուխ կորույճ¹
բերանիդ չափ մեծ ույժ ել ունենաս,
Վեստերվալդի² չափ ծեր լինես, դարձյալ
դու շղթայակապ ջուր պիտի կրրես,
իմ ճուլարանը ավելես, մեծ-մեծ
քարեր գըլորես յեզ կուշտ ձեծ ուտես, հենց վոր
ծուլանաս:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Նախագգուշացնում ե նա բեզ, Հայնրիխ:

ԱՆՏԱՌԻ ՅԱՎՆԸ

Ձե՛զ տեսնեմ, առա՛ջ: Յես հո կամ ու կամ:
Ի՛նչ խաղ կը լինի, յերբ վոր հորթի պես
բեզ քաշ տան բըցեն խարույկի մեջը:
Յես ել կուպր ու յուդ, ծրծումբ կը բերեմ տա-
կառների մեջ,
վոր հըրդեն բըցեմ յեզ պայծառ որը մըլսից սե-
վանա:

Պնում ե: Խորրում հնչում ե բագմության աղմուկն ու բացական-
կանչութիւնները:

¹ Կորույճ—լեռնային վոգի յե, ելֆի մի տեսակը: Արտաբուստ—կո-
բողը կարճահասակ ե յեզ անճոռնի մեծ գլխանի: Ծան. Թարգ.

² Վեստերվալդը—բարձրավանդակ ե ներքին Հոլանտի արևմեջան
կողմում: Ունի առանձին լեռնագագաններ: Ծան. Թարգ.

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Մարդկային ծայնե՛ր—լըսո՛ւմ ես, Հայնրիխ:
Սոսկալի՛ աղմուկ յեզ քո մասին ե
բոլորը:

Ներս ե ընկնում մի քար յեզ դիպչում Ռաուտենդլայնին

Տառի՛, հասի՛ր ոգնությեան:

ՀԱՅՆՐԻԻ

Ահա՞ թե ինչպե՛ս: Յերագիս տեսա՛
մի վորսի շուն եր ինձ հետապընդում:
Ահա յեզ վորսի շները, սակայն չեն հետապընդի:
Վորքա՛ն պատեն ե նրրանց հաջոցը:
Յեթե յերկընքից մի հրեշտակ իջներ
յեզ շուշաններով ինձ նըշան աներ,
անո՛ւշ թախանձեր անհողդողդ մընալ—
չեր կարող այնպես համոզեցուցից ցույց տալ իմ
գործի
ույժն ու արժեքը, ինչպես այս զազիր գոռում-
գոյցունը:
Յեկե՛ք: Յես ձերը—ձեզ ել կը թողնեմ:
Ձեզ կը պաշտպանեմ ձե՛ր դեմ: Ահա՛ իմ նըշա-
նաբանը:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Մենակ, ջերմ.

Հասի՛ր ոգնության, Թըրիերի Տառի՛: Նի՛կելման,
ոգնի՛ր:

Նիկելմանը դուրս ե գալիս:

Ախ, իմ սիրելի Նիկելման, խընդրեմ,
ջուր բաց թող ժայռից, հորդ ու հորձանուտ:

Թափփի, Թափալի: Դու այս շրներին
հալածիր: Կանն՞ս: Ինչ կըլինի վոր:
Դե՛հ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Բռե՛կեկեկե՛քս: Ի՞նչ պիտի անեմ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ջըրով մըտրակիր, յեվ անդունդ նետիր նըրանց
ջըրի հետ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Այդ յես չեմ կարող:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Արա՛, Նիկելման, կարող ես,
գիտեմ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Լա՛վ, դիցուք անեմ — ոգուտըս ի՞նչ ե:
Վարպետը, ըստ իս, ձեռքնտու մարդ չի,
ուզում ե իշխի Աստըծու վըրա յեվ մարդկանց
վըրա:

Հիմա ամբողջը նըրան կըսպանի—
ե՛ թող գըլխատի— իրավացի յե:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Գընա յեվ ոգնի՛ր, թե չե կուշանաս:

ՆԻԿԵԼՄԱՆ

Ինձ ի՞նչ կըտաս վոր:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ի՞նչ կըտամ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Այո՛:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ասա՛, ի՞նչ կուզես:

ՆԻԿԵԼՄԱՆ

Քե՛զ, բռե՛կեկեկե՛քս:

Կարմիր կոշիկ, սեղմիրան ու շըրջագգեստ—
հանի՛ր, յեղիր— ինչպես վոր կաս— թո՛ւխ, համեստ,
իջի՛ր ինձ մոտ— մոռանանք հոգս ու թախիժ,
հազար մըղոն հեռու գընանք այստեղից:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

ձի՞շտ: Սըրա՛ն տեսեր: Լավ ես մըտածել:
Մի անգամ ընդ միշտ այդ ցընորքները
քո ջըրակալած գըլխիցըդ հանի՛ր:
Անգամ Թըփերի Տատից լինեյիր
յեռապատիկ ձեր— յեվ ինձ վոստրեյի
խեցիկում ընդմիշտ փակած պահեյիր—
դու դարձյալ գըսպել չեյիր կարող ինձ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Յեթե այդպես ե— թո՛ղ նա կործանվի՛:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Սըտում ես, սըտում: Այդ ըզգում եմ յես:

Ականջ դիր կանչի՛ն, նրրա հին ծայնը վերադար-
 ձել ե:
 Ահից դողո՞ւմ ես, յեւ կարծում ես թե յես չե՞մ
 նըկատում:

Նիկելմանը չքանում ե, Հայնրիխը վերադառնում ե պայքարից
 բորբոքված՝ յեւ ծիծաղում ե վայրագ ու հաղթական ծիծաղով:

ՀԱՅՆՐԻԽ

Շընների նըման թափվեցին վըրաս,—
 յես խանձողներով յետ տըվի նըրանց— իբրեւ շը-
 ների:

Քարի բեկորներ գըլորեցի ցած,
 ու վըբը չը մեռան— փախուստ տըվեցին:
 Մի բան տուր խըմեմ: Պայքարը մարդու
 սիրտն ե թարմացնում, իսկ հաղթանակը —
 ամրապընդում ե: Արյունըս արագ
 շըրջան ե առնում յեւ զարկերակըս
 զըվարթ վոստոստում: Պայքարը բընավ
 չի հոգնեցընում: Պայքարը— ույժըդ
 տասնապատկում ե, վերանորոգում
 սե՛ր, ատելությո՛ւն:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ա՛ռ, Հայնրիխ, խըմի՛ր:

ՀԱՅՆՐԻԽ

Տո՛ւր, մանկիկ: Կըրկին գինու յեւ սիրո
 յեւ բո ծարավը տոչորում ե ինձ:

Խմում ե:

Քամու պես թեթեւ ելֆային վոզի — անգի՛ն կե-
 նացրդ:
 Թող սերտ յեւ ուժգին կապով մենք կըրկին մարդ
 ու կին լինենք:

Ստեղծագործողը քեզնից վոր զատվի—
 ծարավ կը մեռնի: Անբաժան կենաս—
 իմ հոգու թեվեր, յերբեք, մանկիկըս,
 չանջատվես ինձնից:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Յեթե միայն դո՛ւ չանջատվես
 ինձնից . . .

ՀԱՅՆՐԻԽ

Աստվա՛ծ չանի այդ: Յերաժըշտությո՛ւն:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Իմ կարճահասակ ժողովուրդ, արի՛:
 ծակ ու հեղբերից, կիրճերից հասե՛ք,
 մենք հաղթանակի տունն ենք կատարում:
 Փոքըիկ գործիքներդ առեք յեւ ամեք:
 Սըրինգ ու ջու թակ:

Յերաժըշտություն:

Պարե՛լ եմ ուզում,

Պըտո՛ւյտ գալ, հըկվե՛լ: Չեզ, կայծոռիկներ,
 կըղընեմ խոպուպ մազերիս վըրա—
 Յուեյայի մանյակն ել ի՛նչ եմ անում:

ՀԱՅՆՐԻԽ

Սո՛ւս կաց... թըվում ե...

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ի՞նչ կա...

ՀԱՅՆՐԻԻ

Չե՞ս լըսում...

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ի՞նչ կա — Ի՞նչ լըսեմ:

ՀԱՅՆՐԻԻ

Վոչինչ...

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ի՞նչ եղավ, իմ սիրոյ սիրած:

ՀԱՅՆՐԻԻ

Ինչ վոր հրնչյունն ե քո այդ նըվազի շըրթոթին ձուլվում... Ինչ վոր ձայն...

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ի՞նչ ձայն:

ՀԱՅՆՐԻԻ

Աղետա՛րշ հրնչյունն... վաղո՛ւց թաղված ձայն... թողնենք այդ... վոչինչ... մոտ արի յեվ տուր քո շըրթունքների պուրպուր-բաժակը — խըմե՛մ ու խըմե՛մ, մինչեվ վոր պարպի: Բո արբեցումի բաժակը բաշխիր — թո՛ղ յես կոր-ձանվեմ:

Նրանք համբուրվում են: Ձերմ գրկախառնության մեջ տեղական

լուծթյուն. Ապա՛ իրար սերտ կպած՝ մոտենում են դրան — փոքր առ փոքր նրանց հայացքը կաշկանդում ե լեռնա-յին վեհ տեսարանը:

Տե՛ս՝ խոր յեվ անհուն տարածությունն ե փրուվում յեվ այնտեղ մարդիկ են ապրում: Յես ել մի մարդ եմ, հասկացա՞ր, մանկիկ: Խորթ ու հարսզատ այստեղ, վերելում, խորթ ու հարսզատ այնտեղ, ներքելում: Դու այդ կարո՞ղ ես ըմբըռնել:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Այո՛:

ՀԱՅՆՐԻԻ

Ի՞նչ տարորինակ կերպով ես նայում:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Յես վախենում եմ:

ՀԱՅՆՐԻԻ

Ինչի՞ց:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Չըզիտեմ:

ՀԱՅՆՐԻԻ

Բան չըկա: Գընանք յեվ հանգըստանանք: Հայնրիիսը Ռաուտենդելայնի հետ ժայի միջի դրանը մոտենալով հանկարծ կանգ ե առնում յեվ շուռ գալիս:

Լուսինն իր հերմակ կավիճի դեմքով յերկընքից կախված թող ամենուրեք

խաղաղ լույս սրբութիւն—միջայն հովիտը,
վորտեղից յեւա, իր պայծառ լույսի մեջ չը ծափալվի,
վորովնետեմ յես չըպիտի տեսնեմ
այն, ինչ գորշ ամպի ծածկոցի տակ ե:
Ականջ դիր:—Վոչինչ, չե՞ս լըսում, մանկիկ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վոչինչ: Ասածըդ չեմ ել հասկանում:

ՀԱՅՆՐԻԽ

Հիմա՛, հիմա՞ ել վոչինչ չես լըսում:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ի՞նչ պիտի լըսեմ: Աշնան քամին ե
խոտերի միջով անցնում ու սուլում,
ցինն ե ծըղորտում, յեմ դու մեկի հետ
խուլ ու խորթ ձայնով մի տարօրինակ բանից ես
խոսում:

ՀԱՅՆՐԻԽ

Իսկ այնտեղ—ներքեմ, լուսնի արյունոտ ցոյքը չե՞ս
տեսնում,
վորտեղ ջրերում նա ցոյցըլում ե:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վոչինչ չեմ տեսնում:

ՀԱՅՆՐԻԽ

Դու քո բազեյի
աչքով չե՞ս տեսնում: Այն ո՞վ ե այնտեղ
դանդաղ ու դրժվար շարժվում դեպի մեզ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ուրու յե, պատրանք:

ՀԱՅՆՐԻԽ

Ի՞նչ ուրու, հանգի՛ստ,
հանգիստ կաց, տեսնեմ: Սա պատրանք չե, վո՛չ:
Սա նույնքան ճիշտ ե, ինչպես այն վոր իմ
մեղքերին Աստված թողութուն կը տա,
տես՝ մագըցում են այն քարի վըրա,
ճամփին ընկած այն լայն քարի վըրա:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Մի նայիր ներքեմ, թե չե յես դուռը
կը փակեմ յեմ քեզ ուժով կը փըրկեմ:

ՀԱՅՆՐԻԽ

Թո՛ղ, ասում եմ, թո՛ղ: Յես պիտի նայեմ, տեսնել
եմ ուզում:
Տե՛ս՝ ինչպես ճերմակ ամպի մշուշը
քարե կաթսայում, հորձանուտի մեջ պըտույտ ե
գալիս:
Նըրա շըրջանը չըմըտնես—թույլ նա:

ՀԱՅՆՐԻԽ

Յես թույլ չեմ: Վոչինչ: Ամեն ինչ անցավ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Լա՛վ. դարձյալ դու մեր տերն ու վարպետն ես:
Ույժըդ այդ թըշվառ ուրո՞ւն կը ցորի
Առ ձեռքըդ մուրճը—զա՛րկ, փըշրի՛ր նըրան յեմ
նստիր ներքեմ:

ՀԱՅՆՐԻԽ

Չե՞ս տեսնում ինչպես նըրանք շարունակ վեր են
մագըցում:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վորտե՞ղ են:

ՀԱՅՆՐԻՒ

Այնտե՛ղ, ժայռերի միջեւ,
ա՛յն նեղ շավիղով շապկանց գալիս են:

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Ովքե՛ր են:

ՀԱՅՆՐԻՒ

Փոքրիկ, բոպիկ մանկիկներ:
Մի փոքրիկ կուժ են բաշ տալիս նրանք,
բայց կուժը ծանր և փոքրերի համար:
Մերթ մեկն և, իր մերկ ու փոքրիկ ծունկով,
մերթ մյուսն՝ և հըրում, վոր առաջ մղեն:

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Սիրելի՛ մայրիկ, յե՛կ, խեղճին ոգնիր:

ՀԱՅՆՐԻՒ

Տես՝ գըլխիկների շուրջը—շողում են
լույսի պրսակներ...

ՌԱՌՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Քեզ մոլոր բոցն և
խաբում:

ՀԱՅՆՐԻՒ

Վո՛չ: Ապա՛ ձեռներըդ ծալի՛ր,
հիմա տե՛ս... տեսա՞ր... այնտեղ են...
Հայնրիխը չորում և, ներս են մտնում յերկու տեսիլ—մանուկներ,
գժվարությամբ ներս բերիլով մի կուժ: Յերեսիանների հագին՝
ճերմակ շապիկ:

ԱՌԱՋԻՆ ՄԱՆՈՒԿ

Մարվող ծայնով:

Հայրի՛կ:

ՀԱՅՆՐԻՒ

Ի՞նչ կա, մանկիկըս:

ԱՌԱՋԻՆ ՄԱՆՈՒԿ

Մայրիկը քեզ շատ բարեւ **և**
անում:

ՀԱՅՆՐԻՒ

Շընորհակալ եմ, սիրելի տղաս, քե՛քը ինչպե՛ս և:

ԱՌԱՋԻՆ ՄԱՆՈՒԿ

Դանդաղ ու դարդոտ, յուրաքանչյուր բառը շեշտելով
Լա՛վ և:

Խորրից հագիլ լսելի գանգի ղողանջ:

ՀԱՅՆՐԻՒ

Այդ ի՞նչ եք բերել:

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՆՈՒԿ

Փոքրիկ կուժ:

ՀԱՅՆՐԻՒ

Ի՞նձ համար:

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՆՈՒԿ

Այո՛, սիրելի հայրիկ:

ՀԱՅՆՐԻՒ

Իսկ այդ կըժի մեջ ի՞նչ կա:

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՆՈՒԿ

Աղի բան:

ԱՌԱՋԻՆ ՄԱՆՈՒԿ

Դաւը...

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՆՈՒԿ

Մայրիկի արցունքը:

ՀԱՅՆՐԻԹ

Տե՛ր իմ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Այդ ո՞ւր ես նայում:

ՀԱՅՆՐԻԹ

Նրբանց:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ո՞ւմ նրբանց

ՀԱՅՆՐԻԹ

Դու աչքեր չունե՞ս: Նրբա՛նց: Վորտե՞ղ ե
հիմա մայրիկը:

ԱՌԱՋԻՆ ՄԱՆՈՒԿ

Մայրի՛կը:

ՀԱՅՆՐԻԹ

Այո, վորտե՞ղ ե հիմա:

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՆՈՒԿ

Նունուֆարնիկի մոտ ե գընացել...

Խորքում—զանգի ուժգին զարկ:

ՀԱՅՆՐԻԹ

Իմ զանգը... զանգը...

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ի՞նչ զանգ:

ՀԱՅՆՐԻԹ

Այն հինը,

այն ընկրդավածը... հընչում ե կրկին:

Այն ո՞վ ե տալիս: Չեմ ուզում... ոգնի՛ր,
չեմ ուզում լըսել:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ուշքի յեկ, Հայնրիկս

Հայնրիկս:

ՀԱՅՆՐԻԹ

Հընչում ե. Աստված ոգնի ինձ:

Այս ո՞վ ե տալիս: Լըսո՞ւմ ես ինչպես
ջրի տակ թաղված ձայնը թընդում ե:
Նեղվածքում ուռչում յեվ դուրս ե թըռչում,
նըվաղում—ապա՛ կրկնակի թափով ուժգին դո-
ղանջում:

Ռատտենդիլին՝

Յես քեզ ատո՞ւմ եմ: Թըքա՛ծ քո վըրա:
Կորի՛ր—կը խըփե՛մ, երիային կախա՛րդ:

Անիծված վոզի—դո՛ւրս: Անիծվի՛ս դու,
յեվ յես, յեվ գործըս—ամեն ինչ... այստե՛ղ...
Շես դեռ այստե՛ղ եմ... գալի՛ս եմ, գալիս:

Ուզում ե գուրս գա—վոսները ծալվում են: Նորից վեր ե կենում
յեվ քարշ գալիս դուրս:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ուշքի՛ յեկ, Հայնրիխ: Նա գընա՛ց—կորավ...

Վերջ չորրորդ արարի

ԱՐԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԿ

Վիտախիսնի տնակը լեռնադաշտում, ինչպես առաջին արարում:
Կես-գիշերներն անց ե․

Ջրհորի շուրջը նստատեղ են յերեք ելֆ․

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ

Հուրը բորբոքվեց:

ՅԵՐԿՐՈՐԴ ԵԼՖ

Յեվ զոհի կարմիր

բամին փրչում ե բոլոր լեռներից
հովիտի վրա:

ՅԵՐՐՈՐԴ ԵԼՖ

Մուխը կուտակվել—

սեվ ամպի նրման յեղեմիների
կատարին քրսվում— սողում ե ներքեվ:

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ

Հովիտը հերմակ ամպ ե պարուրել,
մինչև վ պարանոց բընբույշ մըշուշի
ծովի մեջ սուզված՝ տավարը կանգնել
յեվ բառաչում ե, կանչում, աղաչում,
փոր իրեն տանեն— ախտոներն անեն:

ՅԵՐԿՐՈՐԴ ԵԼՖ

Նրշդարենուտում սոխակ եր յերգում—
ս՛ւշ եր— այնպե՛ս եր յերգում, հեկեկում,
փոր յես ցավացունց՝ նետվեցի խոնավ՝
սազարթի վրա յեվ յերկար լացի:

ՅԵՐՐՈՐԴ ԵԼՖ

Տարորինա՛կ բան: Սարդի փոստայնի
ցանցի վրա յես պառկեցի— բընեմ:

հյուսված խոտերի ցողունների մեջ՝
 նուրբ, ծիրանագույն թելերից—ասես
 թագուհու քրնքույշ անկողին լիներ:
 Հոգիս պարուրեց մի անուշ հանգիստ:
 Մայրմուտի հուրով վառված ցողերը
 ինձ վըրա պայծառ ցոլք եյին նետում:
 կոպերըս այնքա՛ն ծանրացել եին,
 աչքերըս կրպան յեվ յերանավետ նիրհը ինձ պա-

տեց:
 Յերբ վոր արթնացա՛ լույսը հեռավոր տարածու-
 թյան մեջ
 մեռել եր արդեն յեվ անկողինըս դառել մոխ-
 րագույն:

Իսկ արեվելքում լույսի մի աղոտ
 նըշույլ առկայծեց: Աստիճանաբար
 վառվեց, բորբոքվեց, մինչեվ վոր լերան
 քարքարոտ մեջքին բազմեց լուսինը,
 ինչպես հըրաշեկ մետաղի կըտոր:
 Արնագոյն լույսի շեղ շողերի տակ
 դաշտը տարորեն տարուբերվում եր:
 Լըսվում եր ինչ վոր շըշունջ, հառաչանք,
 մեղմ ու նուրբ ձայներ . . . բոլորը լալիս
 ու վողբում եյին... սարսափելի յեր...
 Տեսնեմ՝ մի բըզեզ վառ-կանաչագույն
 լապտեր ե տանում: Կանչեցի—չեկավ:
 Յեվ յես անտեղյակ՝ ահ ու դողի մեջ, մընացի
 պառկած,
 մինչեվ ամենից սիրած ճիպուռի թեվերով ելֆըս
 թը՛ռ թառեց կողթիս—ա՛խ, հեռվից արդեն
 տըղիս թեվերի ձայնն ասել եյի:—
 Յերբ վոր մենք իրար տըրվելով՝ իրար

գուրգուրում եյինք—նա ինձ համբուրում
 յեվ արտասվում եր: Վերջը փրղձըկաց,
 ինձ ամուր սըղմած իր կըրծքին՝ լացեց...
 յեվ արցունքներով իմ կուրծքը թըրջեց...
 Բալդերը—ասաց—Բալդերը մեռավ...

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ

Տեղից վեր կենալով:

Հուրը բորբոքվե՛ց...

ՅԵՐԿՐՈՐԴ ԵԼՖ

Նույնպես վեր կենալով:

Յեվ դա Բալդերի

խարույկի հուրն ե:

ՅԵՐԿՐՈՐԴ ԵԼՖ

Համբ քայլերով դիմում ե դեպի անտառը:

Բալդերը մեռա՛վ...

յես սարսըռում եմ:

Անհետանում ե:

ԱՌԱՋԻՆ ԵԼՖ

Բալդերի դիյակն այրող խարույկի
 ծըխի պես աշխարհն անեծք կը պատի:

Էճանագաշտի վրա մշուշ ե իջնում: Յերբ մտախուզը ցրվում ե
 —ելֆերն արդեն չքացած են լինում:
 Ռ ա ս է տ ե ն դ ե լ ա յ ն ը՝ դժգույն ու վշտահար իջնում ե լեռնից:
 Հոգնածությունից վայր իջնելով ու յիլնելով՝ մոտենում ե ջրհորին:
 Չայնը՝ թույլ ու դողոջ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ո՛ւր... ո՛ւր գընամ... հարսանիքի դահլիճում
յերկրի մանրիկ վոգիններն են շառաչում...
նըրանք տըվին ինձ մի բաժակ,— զուտ բյուրեղ—
բայց արյունն եր վառվում մեջը գինու տեղ:

Հարսանիքի խըմիչքը վոր խըմեցի—
կուրծքըս այնպես ճընշ լե՛ց յեվ իմ կանացի
սիրտը— յերկո՛տ, սիրագո՛ւրկ—
բըռնեց, այրեց յերկաթակուռ մի բազուկ:
սիրտըս պատեց սեվ ու սուգ...

Հարսանիքի ճոխ սեղանի մեջտեղում
մարջանաշար թագ կար, վըրան արծաթի ձուկ
շողշողուն:
Յես վերցըրի փոքրիկ թագը, դըրի գըլխիս յեվ հիմա
ջըրամարդի հարսնացուն եմ ակամա:
Սիրտըս ինչպե՞ս հովանա...

Գողթս յերեք խընձոր ընկավ՝ ճերմակ, վոսկի, վար-
դագո՛ւ ին:
Հարսանեկան նըվե՛ր: Կերա ճերմակը յեվ յես իսկույն
դարձա դալուկ: Ապա կերա վոսկեգոյնը վոր ընձա
բերեց անթիվ հարըստուխյուն: Վերջը կերա վար-
դագոյնը յեվ պըրձա:

Մի աղջիկ է նըստած— ճերմա՛կ, դալկադեմ—
փոքրիկ աղջիկ, վոր մահացել է արդեն:
Յե՛լ ջըրամարդ դըռները բա՛ց, քեզ համար
հարս եմ բերել— մարա՛ծ, մեռա՛ծ, դալկահա՛ր...
ջըրհորի մեջ սուզվիր, սիրտ իմ, հըրավառ—
այնտեղ գով ե՛ արծաթ ձըկներ, գորտեր, քարեր,
խոր-խավա՛ր...

Ռատոնեղեղայնը սուզվում է ջրհորի մեջ:
Անտառից գալիս է Ֆավնը, մոտենում ջրհորին յեվ նրա ներ-
սից կանչում:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Յա՛լլա-ո-հո, գորտի արքա, վե՛ր արի:
Յալլա-ո-հո, ա՛յ անիծված ջուր ծեծող,
չե՛ս լըսում, ի՛նչ: Կանաչափոր, քընա՞ծ ես:
Յե՛կ ասում եմ, անգամ պառկած քո կողքին
ծովասեզի անկողնի մեջ գեղազույն
ջըրահարսը քորում լինի միրուքըդ—
թո՛ղ յեվ արի՛: Դու չե՛ս գըղջա: Ձիյու գըլուխն է
վըկա—
այն ինչ վոր յես հիմա գիտեմ յեվ կարող եմ քեզ
պատմել—
արժե տասը սիրո գիշեր ջըրհորում:

ՆԻԿԵԼՄԱՆ

Աներեվույթ, ջրհորից:

Բռե՛կեկեկե՛քս:

ՏՆԱՌԻ ՖԱՎՆԸ

Յե՛կ, ել լե՛նչ ես ուշանում:

ՆԻԿԵԼՄԱՆ

Աներեվույթ

Յես ժամանակ չունեմ: Չայնըդ կըտրիր յեվ ինձ
հանգիստ թո՛ղ:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Ի՛նչ, ժամանակ չունե՞ս: Ա՛յ դու հաստագըլուխ,
վոր յետո

գորտի փորիդ մասին հոգաս չի՞ լինի:
 Յես քեզ բան եմ ուզում պատմել, չե՞ս լըսում:
 Ինչ վոր յես քեզ ասում եյի — կատարվեց՝
 Նա ելքիկին թողե՛ց: Հիմա ժիր լինես —
 ձեռք կը բըցես այդ հազվագյուտ թիթեռին:
 Ճիշտ ե՛ մի քիչ տըրորվել ե, փըչացել,
 սակայն Ֆամլն ու Ջըրամարդին ձեռք կըտամ:
 Դեռ նըրա մեջ, ծերուկ, շատ բան կը գըտնես,
 Բան եմ ասում՝ ավելի՛ն բան պետք ե քեզ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Դուրս ե գալիս, նրա աչքերը նենգորեն պսպղում են,
 Ինչ ե ասում: Թո՞ղել ե, հա՞: Այ քեզ բան:
 Խելքըդ ի՞նչ ե կըտըրում, վագեմ-ընկնեմ նըրա յե-
 տեվի՞ց:
 Գըլուխ չունե՛մ:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Դու նըրան ել չե՞ս ուզում:
 Այ թե տեղը իմանայի՛:

ՆԻԿԵԼՄԱՆ

Վորոնի՛ր, Ֆամլն, վորոնի՛ր:

ԱՆՏԱՌԻ ՖԱՎՆԸ

Չե՛մ վորոնել: Մըշուշի մեջ, գիշերով
 քի՞չ եմ վագել: Չե՛մ մագըրցել ծերպերում
 ուր այժեամն ել սիրտ չի անի բարձրանալ:
 Ել արջամուկ, ցին, սերինոս, բազե, ոճ, —
 հարց ու փորձ եմ արել — ո՞ւր ե — չըգիտեն:

Տեսնեմ՝ նըստած խարույկի մոտ մի փայտահատ
 նիրհում ե:
 Թըռքըրի մի վառվող խանձող ու յա՛լլա,
 վորոնելով՝ հասա մինչեվ այրվող դատարկ դարբ-
 նոցը:

Մինչեվ հիմա կըրակը դեռ չի անցել:
 Գերանները հըրածարակ՝ ճարճատում են ու փըլ-
 չում —
 այլյիվըս վե՛րջ այդ մարդուկի վարպետութ՛յան.
 առ հավե՛տ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Գիտեմ, գիտեմ, ինձ ամեն ինչ հայտնի յե.
 Իգուր տեղը անհանգիստ ես անում, հանում ջըր-
 հորից:
 Յես ավելին գիտեմ: Գիտեմ — ինչպես զանգը դո-
 դանջեց,
 գիտեմ թե ով տեղից շարժեց զանգի մեռած լեզ-
 վակը:
 Ա՛յն, ինչ վոր յե՛ս վարը տեսա, թե դո՛ւ տեսած լի-
 նեյի՛ր . . .

լըճի խորքում մի չեղած բան պատահեց:
 Մի մեռած կին, անշարժ ձեռքով, այնտեղ զանգ
 եր վորոնում . . .
 Գըտա՛վ: Հագի՛վ ձեռքը դիպավ զանգին — զանգը
 դողանջե՛ց,
 ամպագորգոռ ձայնը յելավ դեպի յերկինք, անընդ-
 հատ,
 առյուծի պես մըռընչալով՝ լեռնաստանում կան-
 չում եր
 իրեն թափող վարպետին:

Մի ջրբահեղծ կին տեսա յես: Նահատակի նըման եր-
 լայն ու լուսեղ ալիքներով դեմքի շուրջը թափվել
 եյլն վարսերը:
 Հենց վոր նըրա վոսկորները դիպչում եյլն մե-
 տադին—
 ասեղ ձայնը կըրկնապատիկ թափ եր առնում ու
 թընդում:

Ծե՛ր մարդ եմ յես—ինչե՛ր ասես չեմ տեսել,
 բայց մազերըս զըլխիս բիզ-բիզ կանգնեցին:
 Մենք բոլորըս փախուստ տըվինք այնտեղից:
 Այն, ինչ վոր յե՛ս տեսա վարը, թե դո՛ւ տեսած լի-
 նեյիր—

մի ելֆիկի մասին չեյիր մըտածի:
 Թող թըռչկոտի ծաղկե-ծաղիկ վորտեղ ինքը կա-
 մենա—

վոչինչ բան ե, յես սիրելուց հագեցա:

ԱՆՏԱՌԻ ՅԱՎՆԸ

Այծեղջյուրը վըկա—յես վո՛չ: Հասկացիր՝
 ում ինչ դուր ե գալիս—այն ել անում ե:
 Միայն թե իմ զըրկում լինի անո՛ւշ մարմին, դող-
 դողո՛ւն,
 ինչ իմ բանն ե մեռած կինը լընի մեջ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Բռե՛կեկեկե՛քս, կվո՛ւաքս, ահա՛ թե ինչպես:
 Դե իմացած յեղիր՝ յեթե բեզ կըծողը մի լու յե—
 ապա՛՝ նըզմիր: Հիմա նըրան ինչքան կուզես վորոնիր,
 տասը տարի վորոնելու լինես—դարձյալ չես գըտնի:
 Ի՛նծ ե սիրում—այժի դեմքիդ չի յել ուզում մըտիկ տա:
 Մընա՛ս բարով, պիտի իջնեմ—հասկացա՛ր:

Ազատ մարդ ես—շարունակիր քո ուղին,
 իսկ յես, վորպես մի նահատակ-ջրբամարդ
 իմ քըմահան ջահիլ կընոջ ծառան եմ:

ԱՆՏԱՌԻ ՅԱՎՆԸ

ձջալով Նիկելմանի յետեվից:

Յեթե ճիշտ ե, վոր յերկինքը աստղազարդ ե յեվ
 լուսեղ,

վոր յես ամուր ազդերը ունեմ, պոչ ունեմ,
 վոր ձըկները լող են տալիս, թըռչունները թըռ-
 չում են—
 ա՛յն ել ե ճիշտ, վոր դու մի որ պիտի մարդու
 փոքրիկ մանուկ որորես:

Բարի գիշեր, յա՛լա, բարի վայելո՛ւմ:
 Վոտի տակ տուր փուշն ու թուփը: Կորչի՛ լուն:
 Ցավնը աշխույժ փոստուններ գործելով՝ անհետանում ե:
 Վիտտիսները դուրս ե գալիս խրճիթից յեվ բաց անում լու-
 սամուտների փեղկերը:

ՉԻՏՏԻԻԵՆ

Վեր կենա՛լու վա՛խտ ա հըմի, ես ա լի՛սը կը
 բա՛ցվի:

Ա՛մա շա՛տ զու դալմա՛ղալ կար ես գի՛շեր:
 Աքաղաղ ե կանչում

Ե՛տ ա, կա՛նչի՛ ծուղուրո՛ւղու... քընա՛տար,
 դու ինծ հըմար իսկի՛ չա՛փա չը բա՛շես:
 Ա՛քլորը վոր չը կա՛նչի ել—յես գի՛տեմ
 վոր ես վա՛խտը ո՛սկի ձու յա ա՛ծըմ հավը մեզ
 հըմար,

ետ ձուն ել դուս կը գա յե՛րկինք, վոր լիս տա:
 Սերինո՛ս ջան, յե՛րգըդ ասա, ծե՛գը ե՛ս ա կը
 բա՛ցվի

հա՛ստատ բան ա, ուր վոր ա նոր որը կը գա—
ծե՛ն ածա:

Մո՛լար լի՛սից, բա՛նից կա՞ վոչ — ե՛ս յան, ե՛ն յան
մըտիկ տա՞մ:

ճըրա՛գըս ել մըտընա՛ն եմ ա՛րել տա՛նը, թա՛րսի
պես:

կարմիր քա՛րը, միտըս ընկալ—հո կոգտի՛:

Վորանում ե գրպաններում յեվ հանում մի լուսավոր կարմիր քար,
Ե՛ղավ, հա՛րվեց:

ՀԱՅՆՐԻԽԻ ՁԱՅՆԸ

Ռաուտենդելա՛յն: Ռաուտենդելա՛յն:

ՎԻՏՏԻՍԵՆ

Հը՞: Վա՛քքի:

Վո՞նց չե, ե՛ս ա կը գա, կա՛նչի, դու կա՛նչի:

ՀԱՅՆՐԻԽԻ

Ռաուտենդելա՛յն, յեկա, մի՞թե չես լըսում:

ՎԻՏՏԻՍԵՆ

Ի՛լլան ունի լըսի՛: Դըժա՛ր թե լըսի:

ՀԱՅՆՐԻԽԻ

Տանջահար, գունատ, պատառոտած շորերով յերեվան ե գալիս
խրճիթի գլխին ժայռի վրա: Աջ ձեռքով նա մի քար ե ճոճում յեվ
պատրաստ ե նրան նետելու—խորրի անդունդը:

Ապա տեսնեմ կը հանդըզնե՞ք: Պաստոր լինի, վար-
ժապետ,

վարսավիրա, խանութպան թե տիրացու—

վողջը մեկ ե. ով սիրտ անի մի քալ առաջ քար-
ծրանալ,

ավագով լի տոպրակի պես կը գըլորվի անդունդը:
Յե՛ս չեմ—դո՛ւք եք իմ կընոջը նետել ցած,
դո՛ւք—չափխուններ, փուչ ընկույզներ, մուրացկան-
ներ, գյաղաներ:

Դուք՝ յերեսուն գիշեր կորած բոռ-գըրոշի համար
«Հայր մեր» եք ասում,
չեք ամաչում հավերժական Աստծու սերը դահե-
կանի վերածել,

սըտախոսներ, կեղծավորներ—ծեր հովիտի դըժողքը
քարե ամուր պատնեշով եք պաշտպանել,
յեվ ինչի՞ դեմ—Աստծու ծովի, յեղեմական հեղեղի
յերանավետ յործանքի դեմ:

Յե՞րբ պիտի գա ձեր պատնեշը խորտակելու՝ բահը
ծեռքին մըշակը:

Յես չե . . . հաստա՛տ, ուրիշը . . .

Հայրիկը քարը մի կողմ ե բցում յեվ դիմում առաջ:

ՎԻՏՏԻՍԵՆ

Ո՞ւր ես գընում—հա՛մփա չըկա՛, կա՛ց, յա՛վաչ:

ՀԱՅՆՐԻԽԻ

Պառավ, ի՞նչ ե վառվում այնտեղ, վերելում:

ՎԻՏՏԻՍԵՆ

Յես ի՞մ: Հա՛լբաթ շենքը շի՛նողն իմա՛նա:
Թագավո՛րի բե՛րդ եր, ժա՛մ եր, ինչ վոր իսա—
վա՛րպետը

թո՛ղեց-գընաց, շենքն ել հըմի վա՛ռվում ա:

Հայրիկը հուսակտուր փորձում ե վեր յելնել:

Քեզ ա՛սի վոր մի գիրդ պատ կա ետ յանը:

Ա՛նց կացողը պըտի թե՛ վեր ունենա—
ա՛յ մարդ, քոնը ջա՛րդված ա:

ՀԱՅՆՐԻԽ

Թող թեվերըս ջարդված լինեն—դարձյալ պիտի
բարձրանամ:

Ի՛մ, ի՛մ գործն ե ա՛յն, ինչ այնտեղ այրվում ե,
հասկանո՞ւմ ես: Կառուցողը յե՛ս եմ, յե՛ս.
յեվ իմ բոլոր ունեցածը, եյությունըս պարփակված
ե նըրա մեջ . . .

Յեա այլեվըս . . . չեմ կարող . . .

Լուսթյուն.

ՎԻՏՏԻՍԵՆ

Քիչ դընջա՛ցի, մութ են հըմի հա՛մբեքը
իշա՛վոտ կա ընդի—նստի:

ՀԱՅՆՐԻԽ

Յե՞ս, նրատե՞մ:

Անկողինը նըրբափետուր, կերպաս
գըրավիչ ե հիմա խեցու կույտի չափ:
Վաղուց հետե մեռած մորըս համբույրը
տենդով բըռնված պաղ հակատիս՝ կարող եր
հանգիստ բերել յեվ որհնություն մի պիծակի խայ-
թի չափ:

ՎԻՏՏԻՍԵՆ

Ղո՛րթ ես ասըմ: Հըլա մի քիչ համբե՛րի—
մառա՛նըմըս մի կուժ զինի կը հա՛րվի:

ՀԱՅՆՐԻԽ

Յեա ըսպասել անկարող եմ—մի քիչ ջո՛ւր . . .

Հայնրիխը արագ մոտենում ե ջրհորին յեվ նրա ափին նստում:

ՎԻՏՏԻՍԵՆ

Հըրե՛ն քա՛շի ու խըմի:

Հայնրիխը ջրհորի ափին նստած՝ ջուր ե քաշում ու խըմում:
Մի մեղմ, անույշ ծայն ջրհորից աղերսագին յերգում ե:

ՉԱՅՆԸ

Հա՛յնրիխ, սեր իմ կաթոգին,
ի՛նչ ես նըստել իմ ջըրհորի յեզերքին,
վե՛ր կաց—գընա՛, թե չե դու իմ հեզ հոգում
մի հին վերք ես նորոգում . . .
մընա՛ս բարով . . . Սի՛րտ իմ, լի՛նչ ես մորմորում:

Լուսթյուն:

ՀԱՅՆՐԻԽ

Այն ի՛նչ բան եր, պառավ, տուր ինձ պատասխան,
իմ անունը ո՞վ եր տալիս, ո՞վ եր կանչում վըշ-
տագին:

«Հա՛յնրիխ» հընչեց—ծայնը խորքից եր գալիս,
ապա՛ ասաց «մընա՛ս բարով»—կամացո՛ւկ . . .
թըվում ե թե զարթնել եմ յես: Ահա ժայուր, խըր-
հիթը,

յեվ դու ինքըդ—ինձ ամեն ինչ յեվ ծանոթ ե, յեվ
ոտար:

Այն ամենը, պառավ, ինչ վոր ապրեցի—
մի՞թե մի շունչ, մի վաղանցուկ հընչյուն եր,
վորը հազիվ ծագած՝ յեվ կա, յեվ չըկա:
Ի՛ու ո՞վ ես:

ՎԻՏՏԻԽԵՆ

Յե՛ս: Դո՛ւ ով ես:

ՀԱՅՆՐԻԽ

Հարց ես տալիս: Այո՛, պառւով, ո՞վ յեմ յես,
ինքս ել յահախ նույնն եմ հարցրել յերկրնքից—
ո՞վ եմ յես, ո՞վ—բայց պատասխան չի յեղել:
Ով ել լինեմ՝ հըսկա, թըղուկ, կիսաստված թե
անասուն—

մի բան անշուշտ հաստատ ե՛
յես արեվի խեղճ, ընկեցիկ մանուկն եմ,
անհար, անոգ, ցավերի ծո՞վ, տենչում եմ տո՛ւն,
մորբս մո՞տ:

Վառ կարոտով նա իր փոսկի թեփերը
դեպի ինձ ե տարածում, բայց չի հասնում:
Ի՞նչ ես շինում:

ՎԻՏՏԻԽԵՆ

Վա՛խտը կըզա — կիմա՛նաս:

ՀԱՅՆՐԻԽ

Վեր կենալով:

Բարի: Հիմա քո արնալույս լապտերով
ցույց տուր ուղին, վոր տանում ե դեպի վեր:
Հենց վոր հասնեմ այնտեղ, վորտեղ յերբեմըն յես
իշխել եմ—

կապրեմ մենա՛կ, նորաբընակ մարդու պես,
փոչ տեր լինեմ, փոչ ծառա:

ՎԻՏՏԻԽԵՆ

Հավա՛տալըս չի՛ գալի,
փորա՛ցավըդ ընդիյո՛րոնք ո՛ւրիշ ա:

ՀԱՅՆՐԻԽ

Ա՛յդ ինչ գիտես:

ՎԻՏՏԻԽԵՆ

Ե՛տ ել գի՛տեմ, հըլա մի բան ել
ա՛վել:

Ընկել եյին յետե՛ վիցըդ, դըրո՛ւստ չի՛:
Կյա՛նքի լիսը դուս անե՛լուց գել ա կըտըրմ ի՛սանը—
մահը վըրա հա՛սավ թե չե—ա՛սես ա՛նհար գա՛ռն
ըլի:

Իսա՛նիքը վոնց որ սո՛ւրու, չոբա՛ններն ել—վա՛յ
նըրանց:

Հայ-հա՛վար են քըցըմ, ճըվըմ, քը՛ս են տալի շընե՛րին:
Ամա գե՛լին հո չեն խըռկըմ—հենց իրենց
գառնե՛րին են քըշըմ-անըմ գելե՛րի բաց բո՛ղազը:
Դու յել նըրանց թա՛յը—մըթամ ի՞սան չե՛ս—
նըրանց դա՛յդի վըռընդե՛ցիր կյա՛նքը. լիս,
պըլո՛ճիկ ել չուես մահը ընդունես:

ՀԱՅՆՐԻԽ

Ա՛խ, պառւով, սես՝ ինչպե՛ս յեղավ—չըգիտեմ—
վոր լույս կյանքը յետ մըղեցի, վոր յես վարպետ
լինելով՝
աշակերտի նըման փախա իմ գործից,
վոր իմ ծուլած զանգի ծայնից ճընշվեցի—
ա՛յն ծայնից վոր ինքըս եյի իմ զանգի մեջ պար-
փակել:

Նա մետաղե կրրծքով հուժկու ղողանջեց,
աքճագանգը թընդաց հեռու լեռներում
յեւ չորս կողմից ձայնը ահեց, հասավ ինձ...
բայց չե՞ վոր յե՛ս վարպետ եյի.—նույն ձեռքով,
վորով նըրան թափել եյի, յես պիտի—
քանի նա ինձ չեր ընկըճել—նըրան փըշրած լինեյի:

ՎԻՏՏԻՍԵՆ

Ա՛նցածն—ա՛նցավ, յե՛տ չի գա:
Քա՛նձըր տե՛ղըդ սա՛րըմ ել յետ չե՛ս բերի:
Ղըվա՛թով ես, շի՛տակ գարմ ես—դըրո՛ւստ ա,
ամա ե՛լի քու ղըվաթը չը պա՛տեց:
Կո՛չված եյիր, բայց ընտըրյալ չե՛յիր դու:
Ըստի՛ ա՛րի, նըստի:

ՀԱՅՆՐԻՒ

Պառավ, մընաս բարով, յես
զընամ:

ՎԻՏՏԻՍԵՆ

Ըստի՛ արի, նըստի—ո՛ւր ես վըռա՛զըմ:
Ընչի՛ վոր դու մա՛ն ես գալի—դա՛ռել ա մի մոխ-
րա՛կույտ:
Շունչ-կենդանին—կեանքի շունչը կուզե՛նա.
Ե՛նտեղ հըմի կյանք չես հարի, չը կա՛րժես:

ՀԱՅՆՐԻՒ

Վոր այդպես ե, հենց այստեղ ել թող մեռնեմ:

ՎԻՏՏԻՍԵՆ

Ետ ել կըլի: Ով վոր մի հեա յելավ վեր,
ով վոր լիսը տե՛սավ, յե՛ղնա վե՛ր ընկավ,
ե՛նա պըտի ջըլիզ ջարդ ու բո՛ւրդ ըլի:

ՀԱՅՆՐԻՒ

Ըզգում եմ վոր հասա համբիս վախճանին:

ՎԻՏՏԻՍԵՆ

Ճա՛մփադ հա՛տավ:

ՀԱՅՆՐԻՒ

Վոր դու այդքան տարորեն
իմաստությամբ ինձ ամեն ինչ ասում ես—
ասա՛՛ արդյոք քանի յես դեռ չեմ մեռել
տեսնելո՞ւ յեմ ա՛յն, ինչ պիտի վորոնեմ,
թեկուզ արյուն գալու լինի իմ վոտների թաթերից:
Պատասխանիր՝ խոր գիշերից—խորագույն
գիշերի մեջ ընկըղմվելու պահուն արդյոք չը պիտի
գեթ մի անգամ տեսնեմ մարող վերջալույսի նը-
շույլը...
միթե՞ նըրան յիրբեր...

ՎԻՏՏԻՍԵՆ

Ո՛ւմ ես ուզըմ, վո՛ր:

ՀԱՅՆՐԻՒ

Նըրա՛ն, ելի՛: Նըրա՛ն, ել ո՛ւմ, չըգիտե՛ս:

ՎԻՏՏԻԽԵՆ

Քու կա՛մբը թող ըլի՛ — ա՛մա ինձնից ել բան չու-
զենա՛ս:

ՀԱՅՆՐԻԽ

Արագ՝

Այդպես լինի:

ՎԻՏՏԻԽԵՆ

Նըրան մի՛ն ել կը տե՛նաս:

ՀԱՅՆՐԻԽ

Կարո՞ղ ես, մայր, մի՞թե այդքան ույժ ունես:
Ինչո՞ւ յեմ քեզ այդպես կոչում — չըզիտեմ:
Մի անգամ ել եյի հասել վախճանին
յեւ անհամբեր՝ ուզում եյի վոր շուտ գա:
Բայց նա յեկավ — գարնան անուշ հովի պես
հիվանդ մարմնիս առողջություն ներշնչեց...
Հիմա դարձյալ թեթեւացա յեւ կարծես
կարող լինեմ նորից յե՛լնել բարձունքը...

ՎԻՏՏԻԽԵՆ

Ե՛տ մինը — չե՛: Դըրա նե՛րքեւ թա՛շող բե՛ռը —
ծա՛նդըր ա:

Մեռելնե՛րիդ գո՛ւնին կա՛րաս դիմա՛նաս:
Մըտի՛կ արա՛՝ ես քեզ լի՛րեր ա՛ման դըրի սեղա՛նին:
Մընի մեջը — սի՛պտակ գի՛նի յեմ ածըմ,
մեկե՛լի մեջ — կա՛րմիր գի՛նի, վերջի՛նի մեջն ել —
դե՛ղին:
Առա՛ջինը խըմես — մի՛ն ել հին ղըվա՛թըդ յետ կը գա:

Յե՛րկրորդը վոր խըմես — ել յետ վըրադ կի՛ջնի
հոգին — լի՛ս:
Ով վոր խըմեց ես ե՛րկուսը — են վե՛րջինն ել տի խըմի:

Խրճիթը ներս մըտնելուց առաջ պահ մի կանգ ե առնում յեւ
խորհմաստ ասում:

Տի խըմի հա՛, գըլխի՞ յես:

Ներս ե մտնում:

ՀԱՅՆՐԻԽ

Եքստագի մեջ՝ վոտի վրա յե, Պառավն ասում ե՝ «պրծա՛վ»:
Հայնրիխը գունաթափվում ե՝ նա արթնացածի պես՝ նստում
ե նստարանի վրա յեւ թիկն տված՝ մնում:

Վե՛րջ, ամեն ինչ: Ասաց «պրծա՛վ»: Այլ յեվրս
հարցումի տեղ չի մընացել, սիրտ, ամեն ինչ հայտ-
նի յե:
Բախտ գուշակող, բո խոսքի հետ կացին իջավ վոր
կըտրի:

Կյանքիս թելը: Կատարվեց:
Սակայն միջոց կա տակավին, յեւ ինձ համար —
պիտանի:

Ցուրար փրչեց անդունդից...
ցած ամպերին դիպավ աղոտ լույսի ցուր,
ցայգալույսը ավետում ե նոր որ, բայց ինձ
համար:

Այնքան որեր ապրեցի —
յեւ ահա սա առաջինն ե, վոր ինձ համար չի բաց-
վում:

Վերցնում ե առաջին գավաթը:

Դեհ, առաջին գավաթ, մինչեւ մու՛թն իջնի,

յեկ քեզ խըմեմ: Բո հատակում վառվում ե մի
պրդտոր կաթիլ, վերջինը...
պառա՛վ, մի՞թե ել չունեյիր սրրանից:

Խմում ե.

Հերթը քոնն ե, յերկրորդ գավաթ, յեկ տեսնեմ:

Վերցնում ե յերկրորդ բաժակը.

Քեզ համար յես առաջինը պարպեցի.
յեթե այստեղ չըլինեյիր, թանկագին
արբեցումըդ, անուշ բույրըդ չլիներ—
թըշվառական յեվ անարժան կը լիներ
խրրախճանքը, վոր տալիս ե այս աշխարհում մեզ
Աստված:

Շնորհակալ եմ:

Խմում ե.

Ըսքանչելի՛ խըմիք եր:

Շրա խմելու պահուն եոյան՝ տավիղի մեզմ շունչն ե հնչում:
Ռ ա ու տ հ ն դ ե լ ա յ ն ը՝ հոգնած ու լուրջ—դուրս ե գալիս ջրհո-
րից, նըստում ե ափին յեվ սանրում իր յերկար, արծակ մազերը:
Լուսնի լույս. Նա զունատ ե յեվ ինքն իրեն յերգում ե.

Ռ.Ա.ՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Մեղմ ծայտով.

Յես մեն-մենակ ու վորք, այս խոր գիշերում,
սանրեմ-հյուսեմ վարսերըս թավ ու դեղձան:
Ռառտենդեւլա՛յն, ինչ սիրո՛ւն ես, ինչ սիրո՛ւն...
մըշուշն իջավ, թըռչնիկները հեռացան...
ի՛նչ կըրակ ե դաշտում անտե՛ր հուրհուրում...

¹ Եոլ—ըստ հունական գիցաբանության քամիների աստվածն ե, վորի
տավիղը քամու շնչից քնքույշ ձայն ե հանում. Ծան. Ուարդ.

ՆԻԿԵԼՄԱՆ

Աներեւոյթ, ջրհորի միջից՝

Ռառտենդեւլա՛յն,

Ռ.Ա.ՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Գալի՛ս եմ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Յե՛կ, շո՛ւտ արա:

Ռ.Ա.ՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ջրհորի խե՛ղճ, անիծվա՛ծ հարս, քեզ ահեղ
ցավ ե խոցում. շորըդ՝ նեղ,
իսկ ջրհորը—մութ ու նեխ...
ՆԻԿԵԼՄԱՆ

ՆԻԿԵԼՄԱՆ

Ռառտենդեւլա՛յն:

Ռ.Ա.ՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Գալի՛ս եմ:

ՆԻԿԵԼՄԱՆ

Յե՛կ, շո՛ւտ արա:

Ռ.Ա.ՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Պայծառ լուսնի տակ սանրում եմ վարսերըս
յեվ վերհիշում իմ վաղեմի վառ սերըս...
Ջանգաձաղի՛կ, զանգրդ ի՛նչ ե գուշակում,
քո ծայնից ի՛նչ հասկանանք՝
յերջանկություն թե տանջանք—

Թըվում ե թե յերկուսն ել կա քո յերգում:
Պիտի իջնեմ ներքեվ, ուզես թե չուզես,
ժամանակ ե՛ դարձյալ ջըրհոր—ջուր ու սեղ . . .

Ուզում ե սուզվել ջրհորի մեջ:

Ո՞վ ե կանչում ինձ:

ՀԱՅՆՐԻՒ

Յես:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ո՞վ—դու:

ՀԱՅՆՐԻՒ

Յես, ելի՛:

Արի մոտիկ—յեվ դու իսկույն կհանաչես, նազելի՛:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Յես չեմ կարող: Չեմ հանաչում քեզ հիմա:
Գընա՛: Ով վոր հետքս խոսի—նըրան՝ մա՛հ:

ՀԱՅՆՐԻՒ

Ինձ մի՛ տանջիր: Յե՛կ, շոշափիր ձեռքքս հեզ—
կը հանաչես:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Չեմ հանաչել քեզ յերբե՛ք:

ՀԱՅՆՐԻՒ

Չե՛ս հանաչել . . .

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վո՛չ . . .

ՀԱՅՆՐԻՒ

Ինձ բընավ չե՞ս տեսած:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Այդ չեմ հիշում:

ՀԱՅՆՐԻՒ

Թող կործանի՛ ինձ Աստված:
Չե՞մ համբուրել, չեմ հասցրել շուրթիդ վերք:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Յերբե՛ք:

ՀԱՅՆՐԻՒ

Շուրթըդ դեմ չե՞ս արել ինձ յերբեք:

ՆԻԿԵԼՄԱՆ

Աներեվույթ, ջրհորի միջից

Ռաուտենդելա՛յն:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Գալի՛ս եմ,

ՆԻԿԵԼՄԱՆ

Յեկ, ներս մըտիր:

ՀԱՅՆՐԻԽ

Քեզ ո՞վ կանչեց:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ամուսինըս նորընտիր:

ՀԱՅՆՐԻԽ

Տեսնում ես ինձ՝ ջրղազար յեվ հուսաբեկ,
վորպես կյանքում չես տեսել ինձ դու յերբեք:
Կորած մարդ եմ՝ իմ բաժինը—մի բուռ հող,
արծակի՛ր ինձ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ինչպե՞ս:

ՀԱՅՆՐԻԽ

Մո՛տ եկ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Չեմ կարող:

ՀԱՅՆՐԻԽ

Չե՞ս կարող:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վոչ:

ՀԱՅՆՐԻԽ

Ինչո՞ւ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Պար կա ներքեվում:

Վոտըս ծանր ե, բայց պարելուց չի ցավում:
Մընա՛ս բարով:

ՀԱՅՆՐԻԽ

Ո՞ւր ես գընում, մի՛ գընա:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Հավերժական հեռուները:

ՀԱՅՆՐԻԽ

Դե հիմա

տո՛ւր բաժակը . . . այնտեղ ե, տե՛ս . . . ո, Մա՛զդա,
ինչ գունա՛տ ես . . . տո՛ւր բաժակը . . . ով վոր տա—
կորհնե՛մ նըրան:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Բոլորովին մոտեցած Հայնրիխին՝

Յե՛ս:

ՀԱՅՆՐԻԽ

Դո՞ւ—վերջին ազատող:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Այո՛, կանեմ: Մեռելներին հանգիստ թող:

ՀԱՅՆՐԻԽ

Ըզգո՞ւմ եմ քեզ, ով դու պատկեր յերկնային:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Յետ մղվելով՝

Մընա՛ս բարով: Անցա՛վ գընա՛ց սերը հին:

Կար ժամանակ՝ քո սէրն եյի—մայիսի՛ն եր, մա-
յիսի՛ն . . .

Սակայն անցավ . . .

ՀԱՅՆՐԻԻ

Անցա՛վ . . .

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Գընա՛ց սերը սին:

Այն ո՞վ եր քեզ յերեկոյան անուշ ձայնով որորում,
այն ո՞վ եր քեզ արթնացընում յերգով դյուլթի՛ն,
փոլորուն:

ՀԱՅՆՐԻԻ

Ել ո՞վ փոր—դո՛ւ:

ՌՆՈՒՏԵՆԴԵԼԱՅՆ

Ո՞վ եմ յես:

ՀԱՅՆՐԻԻ

Ռաուտենդելայն:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Այն ո՞վ քեզ

տըվեց իրա թարմ մարմինը, իր որը,
ո՞ւմ հրրեցիր ու նետեցիր ջրը հորը:

ՀԱՅՆՐԻԻ

Ել ո՞ւմ փոր—քե՛զ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Ո՞վ եմ յես:

ՀԱՅՆՐԻԻ

Ռաուտենդելայն:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Հարս եմ հեզ—

պիտի գընամ: Մընա՛ս բարով:

ՀԱՅՆՐԻԻ

Ինձ մեղմորեն տարեք
վար—

շուտով կիջնի գիշերը, սեվ ու խավար . . .

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Վազում ե Հայ՝ ըիսի մոտ յեվ գրկում նրա ծունկերը, Հրճվանքով՝

Արեվածա՛գ:

ՀԱՅՆՐԻԻ

Արե՛վ:

ՌԱՌԻՏԵՆԴԵԼԱՅՆ

Կես-հեծկտալով, կես-հրճվանքով՝

Հա՛յնրիխ:

ՀԱՅՆՐԻԻ

Շա՛տ ապրես:

ՌԱՌԻՏԵՆԳԵԼԱՅՆ

Գրկում ե Հայնրիխին յեվ հպում իր շուրթերը նրա շուրթերին,
ապա՝ մեռնողին մեղմորեն վայր դնելով՝

Հա՛յնրիխ:

ՀԱՅՆՐԻԽ

Ահա՛ արեգնական զանգի ղողանջ — վե՛ր
ու վե՛ս:

Սրեվածա՛գ . . . գիշերը-ծի՛գ, դըժներե՛ս . . .


Ա Ր Ե Ա Լ Ո ւ յ Ս

1. Գ. Հաուպտմանը յեվ նրա «Ջրասույգ Զանգը»

Պ. ՄԱԿԻՆՑՅԱՆԻ I—XXV

2. «Ջրասույգ Զանգը» — Գերմանական հեխաբ-դրամա

Գ. ՀԱՌԻՊՏՄԱՆԻ, [Թարգ. բնագրից Պ. ՄԱԿԻՆՑՅԱՆԻ 1—180



10.840

10845

891.71

4-88